ԱՐԹՈՒՐ ԴՈՒՄԱՆՅԱՆ



1980 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

119503Հ
956.0

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԹՈՒՐ ԴՈՒՄԱՆՅԱՆ

11102156

1980 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԸՆԹԱՑՔԸ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ «ՎԱՎ-ՊՐԻՆՏ»
2016

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Դ 940

**Մենագրությունը հրատարակության են երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
և Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհուրդները**

*Գիրքը կազմվել է
Ռուբեն Մելքոնյանի հովանավորությամբ*

Խմբագիրներ՝
Ռուբեն Սաֆրաստյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր

Ռուբեն Մելքոնյան
բ.գ.թ., դոցենտ

Գրախոս՝
Ալեքսանդր Սաֆարյան
պ.գ.թ., պրոֆեսոր

ԴՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Դ 940 1980 թվականի ռազմական հեղաշրջումը Թուրքիայում. պատճառները, ընթացքը, հետևանքները/ Ա. Դումանյան.- Եր.: ՎԱՎ-ՊՐԻՆՏ, 2016.- 156 էջ:

Մենագրության մեջ ուսումնասիրության են ենթարկվել Թուրքիայում 1980 թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած ռազմական հեղաշրջման նախադրյալները, պատճառներն ու հետևանքները: Փաստագրական հենքի վրա ներկայացված են հեղաշրջման նախապատրաստումն ու իրագործումը, դրան հետևած գործընթացները և զարգացումները: Նախատեսված է արևելագետ-թուրքագետների, պատմաբանների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ISBN 978-9939-60-335-3 ©ԴՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ 5
ԱՌԱՋԱԲԱՆ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ 1920-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 15

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1970-ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԵՐԻՆ 36

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿՐՈՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1960-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 50

Իսլամական շարժումները 1960-1970-ական թթ. 50
Ձախակողմյան շարժումների ակտիվացումը 59
Ահաբեկչության աճը Թուրքիայում 1970-ական թվականներին 66

«Գորշ գայլերի» ահաբեկչական գործունեությունը 1970-ականներին 68
Ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունների ահաբեկչական գործունեությունը 81

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1980 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ 90
Հեղաշրջման նախապատրաստումը և ընթացքը 90
Արտաքին գործոնի դերը սեպտեմբերի 12-ի հեղաշրջման իրականացման գործում 98

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԹՈՒՐՔԻԱՆ 1980-1983 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ 107
Հանգվածային պատժամիջոցներ 107
Սահմանադրական փոփոխություններ. 1982 թ. սահմանադրությունը 117
Անցում քաղաքացիական կառավարման 126

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 139

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 141

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Թուրքիայի Հանրապետությունում բանակն ունեցել է կարևոր դերակատարում հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում: Կարելի է ասել, որ ձևավորվել է հստակ ավանդույթ, որի համաձայն բանակը հաճախ գործուն մասնակցություն է ունեցել քաղաքական գործընթացների վրա՝ երբեմն ուղղակի միջամտելով դրանց: Հայտնի է, որ Օսմանյան կայսրությունում ենիչերիական զորաբանակը քանիցս կազմակերպել և իրականացրել է կառավարությունների ու սուլթանների փոփոխություն, որոնք երբեմն ավարտվել են գահակալների և վեզիրների սպանությամբ:

Բանակի կարևոր դերակատարման հիշյալ ավանդույթը որոշակի վերափոխումներով հասել է նաև հանրապետական Թուրքիա, որտեղ բանակը 4 անգամ միջամտել է քաղաքական գործընթացներին, որոնց արդյունքում տվյալ պահին իշխանության ղեկին գտնվող ուժը, իսկ մեկ անգամ՝ նաև նախագահը, հեռացվել են իշխանությունից: Բացի դրանից, բանակի առանձին սպաներ քանիցս նախաձեռնել են նաև չհաջողված հեղաշրջումների փորձեր:

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Դումանյանի սույն մենագրությունը նվիրված է 1980 թ. սեպ-

տեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման ուսումնասիրությանը, սակայն հեղինակը խնդիրը ներկայացրել է ավելի լայն համապատկերում. տրված են ընդհանրապես ռազմական հեղաշրջումների և դրանց ձևերի ու մեթոդների տեսական սահմանումները, ներկայացված են բանակի ունեցած դերակատարումը, 20-րդ դարի 60-70-ական թվականների Թուրքիայի հասարակական-քաղաքական հիմնական զարգացումները, աջակողմյան, ձախակողմյան և իսլամական շարժումները, ահաբեկչությունները և այլն: Աշխատանքը հիմնված է բավական մեծ ու հարուստ աղբյուրագիտական հենքի վրա, ինչպես նաև օգտագործվել է թեմային և հարակից խնդիրներին վերաբերող հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն գրականության լայն շրջանակ:

Վստահորեն կարող ենք պնդել, որ գիրքն ունի խիստ արդիական նշանակություն և կարող է մեծապես օգտակար լինել մասնագետների ու ընթերցողների լայն շրջանակի համար՝ խորությամբ ըմբռնելու ներկայիս Թուրքիայում տեղի ունեցող կարևոր զարգացումները, բանակ-հասարակություն, բանակ-քաղաքական ուժեր հարաբերությունները և դրանց վերափոխումները:

Ռուբեն Մելքոնյան
բ.գ.թ., դոցենտ

ԱՌԱՋԱԲԱՆ

Հանրապետական Թուրքիայի պատմության գրեթե ողջ ընթացքում բանակը կարևոր դերակատարում է ունեցել երկրի քաղաքական կյանքում: Այն մշտապես հանդես է եկել հանրապետության հիմնարար արժեքների և քեմալական ազգայնականության պաշտպանի դիրքերից: 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ բանակը չորս անգամ ուղղակիորեն միջամտել է Թուրքիայի քաղաքական կյանքին (1960 թ., 1971 թ., 1980 թ., 1997 թ.)՝ իր այդ քայլն առավելապես հիմնավորելով Աթաթյուրքի ժառանգած գաղափարական և քաղաքական արժեքները պաշտպանելու անհրաժեշտությամբ: Թուրքիայում իրականացված ռազմական հեղաշրջումները, այդ թվում և 1980 թ. հեղաշրջումը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված էին նաև այն բացահայտ և քողարկված պայքարով, որ ընթանում էր քեմալականների և իսլամամետ ուժերի միջև Թուրքիայի պետական կառուցվածքի ապագայի, ներքին և արտաքին կողմնորոշումների առանցքային հիմնախնդիրների շուրջ:

1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը «ամենազանգվածային» հեղաշրջումն էր Թուրքիայի պատմության մեջ: Դրանով վերջ դրվեց մի ժամանակաշրջանի, որն ընդունված է անվանել Թուրքիայի երկրորդ Հանրապետություն (1960-1980 թթ.): Մեր կարծիքով՝ 1980 թ. հեղաշրջման նախադրյալները ճիշտ և խոր ընկալելու, ինչպես նաև ներկայումս տեղի ունեցող որոշ գործընթացներ առավել հիմնավոր ըմբռնելու համար հատկապես կարևոր է ուսումնասիրել հանրապետական Թուր-

քիայի պատմության կարևորագույն ժամանակահատվածներից մեկը՝ 1960-1970-ական թվականները, ընդ որում՝ մի քանի առումներով.

Նախ՝ կարող ենք վստահորեն նշել, որ հենց այս ժամանակահատվածում թուրքական բանակը դարձավ քաղաքական պայքարի և գործընթացների անբաժանելի ու առաջին պլան մղված գործոն: Ուսումնասիրության մեջ մենք փորձել ենք մանրամասն դիտարկել բանակի քաղաքականացման գործընթացը, բանակ-քաղաքացիական իշխանություններ փոխհարաբերությունները Թուրքիայում, ներկայացնել այս ժամանակահատվածում ձևավորված այն հիմնական գործոնները, որոնք անհրաժեշտ էին Թուրքիայում ռազմական հեղաշրջում իրականացնելու համար:

Այս ժամանակաշրջանում սկսեցին ձևավորվել Թուրքիայում ազգայնամոլական շարժման առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի «Գորշ գայլերի» պանթյուրքիստական կառույցները, որոնք մինչև այսօր կարևոր դերակատարում ունեն ինչպես երկրի քաղաքական համակարգում, այնպես էլ «խորքային պետության» կառուցվածքում:

1970-ական թթ. ձախակողմյան հոսանքները վերաճեցին հզոր և զանգվածային շարժման:

Այս ժամանակահատվածում Թուրքիայում առաջին անգամ բավական ընդգրկուն կերպով քաղաքական թատերաբեմ եկավ քաղաքական իսլամը: Վստահորեն կարող ենք նշել նաև, որ հենց այս ժամանակահատվածում պարարտ հող ստեղծվեց հետագայում իսլամամետ կուսակցությունների հաջողությունների համար, այդ թվում՝ Թուրքիայում ներկայումս իշխող իսլամամետ Արդարություն և զարգացում կուսակցության:

1960-70-ական թթ. հիմնականում ավարտվեց «խորքային պետության» ձևավորման գործընթացը:

Պետք է նշել, որ 1980 թ. հեղաշրջումից հետո երկար տարիներ Թուրքիայում արգելք էր դրված հեղաշրջման և զինվորականության թեմաների վրա, սահմանված էր խիստ գրաքն-

նություն, որն իրականացնում էին անձամբ զինվորականները: Վերջին տարիներին այդ թարուն վերացավ, և Թուրքիայում սկսեցին մեկը մյուսի հետևից լույս տեսնել 1980 թ. հեղաշրջման և այդ ժամանակահատվածի վերաբերյալ մի շարք հետազոտություններ և հուշագրություններ, որոնք հնարավորություն են տալիս համակողմանի ուսումնասիրել հեղաշրջման հետ կապված՝ մինչ այժմ անհայտ բազմաթիվ էջեր և իրադարձություններ: Մեր ուսումնասիրության համար առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում Ազգային անվտանգության խորհրդի (Milli Güvenlik Konseyi) պաշտոնական հայտարարությունները, որոշումները, օրենքները[1], 1981 թ. ԱԱԽ-ի կողմից հրատարակված «Սեպտեմբերի 12-ից առաջ և հետո» վերնագիրը կրող ԱԱԽ-ի պաշտոնական տեղեկագրում տեղ գտած վավերագրերը[2], ինչպես նաև հեղաշրջման առաջնորդ Քենան Էվրենի ճառերը և ելույթները[3]: Արժեքավոր սկզբնաղբյուրներ են քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների ծրագրային փաստաթղթերը[4], հաշվետվությունները[5], կառավարությունների ծրագրերը, Թուրքիայի Հանրապետության պաշտոնական վիճակագրական տեղեկատվական տվյալները[6] և այլն:

Թեմայի բազմակողմանի ուսումնասիրման համար առանձնահատուկ արժեք է ներկայացնում Թուրքիայի Հանրապե-

---

1 Milli Güvenlik Konseyince Kabul Edilen Kanunlar, Yayımlanan Bildiri ve Kararlar ile Önemli Mevzuat, Cilt-1. Ankara, 1981; Siyasi Partiler Kanunu. İstanbul, 1983; Milletvekili Seçimi Kanunu, İstanbul, 1983; Kanun No. 2533, Siyasi Partilerin Fahsine Dair Kanun; Kenan Evren, Kenan Evren'in Anıları, Cilt-2, İstanbul, 1991.

2 12 Eylül Öncesi ve Sonrası, MGK Genel Sekreterliği, Ankara, 1981.

3 Türkiye Cumhuriyeti Başkanı Orgeneral Kenan Evren'in Söylev ve Demeçleri (12 Eylül 1980-12 Eylül 1981), Ankara, 1981.

4 Cumhuriyet Halk Partisi Programı, Ankara, 1976; Adalet Partisi: Program ve Tüzük, Ankara, 1969; Anavatan Partisi Programı, Ankara 1983; DİSK Kuruluş Bildirsi: Ana Tüzüğü, İstanbul, 1968.

5 DİSK–6: Genel Kurulu Çalışma Raporu, İstanbul, 1977; DİSK–7: Genel Kurulu Çalışma Raporu, İstanbul, 1980.

6 Türkiye İstatistik Yıllığı, Ankara, 1973; Türkiye İstatistik Yıllığı, Ankara, 1981.

տության 7-րդ նախագահ, 1980 թ. ռազմական հեղաշրջման առաջնորդ, բանակի գեներալ Քենան Էվրենի հուշերի բազմահատորյակը[7]: Էվրենի հուշերը կարևոր տեղեկություններ են պարունակում հեղաշրջման իրական պատճառների բացահայտման, նախապատրաստման գործընթացի մանրամասնությունների և անցումային շրջանում զինվորականության վարած քաղաքականության վերաբերյալ, որոնք հնարավորություն են տալիս լավագույնս հասկանալ զինվորականների նպատակներն ու գործունեության տրամաբանությունը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Քենան Էվրենի աշխատության մեջ ներկայացվում են հեղաշրջման միայն դրական կողմերը, իսկ որոշ դեպքերում էլ հեղինակը միտումնավոր խուսափում է «անցանկալի» մանրամասնություններից:

Աշխատանքի համար կարևոր նշանակություն ունեն հեղաշրջման ժամանակակից քաղաքական գործիչների և դիվանագետների հուշերն ու հրապարակումները: Թեմայի ուսումնասիրման համար արժեքավոր տեղեկություններ են պարունակում 1974-1983 թթ. Թուրքիայում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսեյ Ռոդիոնովի հուշերը[8]: 1970-1980 թթ. ընկած ժամանակահատվածում թուրքական բանակի վերաբերյալ արժեքավոր տվյալներ է պարունակում 1971 թ. զինվորականների «միջամտության» կազմակերպիչներից՝ բանակի գեներալ Մուհսին Բաթուրի «Հիշողություններ և տեսակետներ» աշխատությունը[9]:

Աշխատանքի մեջ օգտագործվել են նաև պանթյուրքիստական Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի[10] և իսլամամետ Ազգային փրկություն կուսակցության ղեկավար Նեջմեթթին Էրբաքանի[11] աշխատութ-

7 Kenan Evren'in Anıları, Cilt 1, İstanbul, 1990; Kenan Evren'in Anıları Cilt 2, İstanbul, 1991; Kenan Evren'in Anıları Cilt 3, İstanbul, 1991; Kenan Evren'in Anıları Cilt 4, İstanbul, 1991.
8 Родионов А., Турция - перекресток судеб: Воспоминания посла, Москва, 2006.
9 Batur M., Anılar ve Görüşler, İstanbul, 1985.
10 Türkeş A., Temel Görüşler, İstanbul, 1975.
11 Erbakan N., Milli Görüş, İstanbul, 1975.

յունները, որոնք բացահայտում են նշված կուսակցությունների քաղաքական և գաղափարական հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները:

Մենագրության մեջ քննարկվող տարբեր հարցերի լուսաբանման, ինչպես նաև Թուրքիայի ներքաղաքական գործընթացների առանձնահատկությունները գնահատելիս ճիշտ կողմնորոշվելուն մեծապես նպաստել են հայ արևելագետների և պատմաբանների արժեքավոր հետազոտությունները, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել Հրաչիկ Սիմոնյանի[12], Ռաֆֆի Կոնդակչյանի[13], Ռուբեն Սաֆրաստյանի[14], Նիկոլայ Հովհաննիսյանի[15], Արսեն Ավագյանի[16], Հռիփսիմե Կորխմազյանի[17], Անուշ Հովհաննիսյանի[18], Միքայել Մելքոնյանի[19], Ռուբեն Մելքոնյանի[20], Ալեքսանդր Սաֆարյանի[21], Վահրամ Տեր-Մաթ-

---

12 Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

13 Кондакчян Р., Турция: Внутренняя политика и ислам, Ереван, 1983.

14 Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատենչներ ստեղծել հարևանների միջև..., Երևան, 2003; Сафрастян Р., Возвращение "серых волков": Консервативная партия в политической жизни Турции (1983-1985 гг.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXIII, Երևան, 2004, էջ 254-276:

15 Հովհաննիսյան Ն., Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XVI, Երևան, 1996, էջ 9-19; նույնի, Արաբական երկրների պատմություն, հատոր III, Երևան, 2006:

16 Ավագյան Ա., Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ, թիվ 4 (50), 2006, էջ 67-74; նույնի, Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ., Հայկական բանակ, թիվ 3 (49), 2006, էջ 48-56:

17 Корхмазян Р., Турция и СССР (Россия): Некоторые проблемы взаимоотношений после Второй мировой войны, Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ XVIII, Երևան, 1999, էջ 5-15:

18 Հովհաննիսյան Ա., ԽՍՀՄ-ի փլուզումը, «թուրք միասնության» գաղափարը և Ղարաբաղյան հարցը (1990-1995-ականների թուրքական հրապարակումների լուսաբանմամբ), Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ XX, Երևան, 2001, էջ 74-81; նույնի, Концепция историографии проблем идеологии турецкого национализма, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXIII, Երևան, 2004, էջ 148-157:

19 Մելքոնյան Մ., Ջինվորականության դերը Թուրքիայի քաղաքական կյանքում, Ջինվոր, 1993, էջ 10-20:

20 Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, 2010:

21 Սաֆարյան Ա., Ջիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012:

նոսյանի[22], Սուրեն Բաղդասարյանի[23] աշխատություններն ու հոդվածները: Թուրքիայի նորագույն պատմության առանցքային խնդիրներն առավել համակողմանի ըմբռնելուն մեծապես նպաստել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» և «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» մատենաշարերը:

Ուսումնասիրության համար օգտակար են խորհրդային մի շարք հեղինակների՝ Ա. Ակսենենկոյի, Ա. Կոլեսնիկովի, Վ. Ջապորոժեցի, Ն. Կիրեևի հետազոտությունները[24], սակայն հարկ ենք համարում հատուկ առանձնացնել Թուրքիայում ռազմական հեղաշրջումներին և քաղաքական գործընթացներին նվիրված անվանի թուրքագետ Վ. Դանիլովի աշխատությունները[25]:

Մեր ուսումնասիրության համար արժեքավոր են նաև արևմտյան որոշ հեղինակների աշխատությունները, որոնց շարքում պետք է առանձնացնել Ջորջ Ս. Հարիսի, Ջեկոբ Լանդաուի, Ուիլյամ Հեյլի, Հյու Փուլթոնի, Էրիկ Ցյուրխերի[26], Ջոն Մաքֆադենի աշխատանքները[27]: Բանակ-հասարակություն փոխհարա-

---

22 Ter-Matevosyan V., The Kemalist discourse in Turkey between 1960 and 1980: Challenging the Republican ideology?, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, էջ 85-102; նույնի, Նեջմեթին Էրբաքանի քաղաքական ինքնությունը և «Ազգային փրկություն» կուսակցության գործունեությունը Թուրքիայում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXV, Երևան, 2006, էջ 177-19:

23 Багдасарян С., Роль армии в процессе модернизации Турции в 1960-1990-х годах, Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXI, Երևան, 2002, էջ 28-39; նույնի, Արդիականացման և իսլամի համատեղելիության հարցի շուրջ (Թուրքիայի մոդելը), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXIII, Երևան, 2004, էջ 39-50:

24 Аксененко А., Борьба политических партий Турции за влияние на молодежь 1920-1980, Москва, 1986; Запорожец В., Колесников А., Турция: Общество и армия, том I. Ленинград, 1983; Киреев Н., Борьба с террором в Турции, Исламизм и экстремизм на Ближнем Востоке, Москва, 2001, стр. 72-110.

25 Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Москва, 1991; նույնի, Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия), Москва, 1985; նույնի, Государственно-административная деятельность военного правительства Турции, Специальный бюллетень, № 2 (224), Москва, 1983.

26 Zürcher E. J., Turkey – A Modern History, NY, 2004.

27 Harris G. S., The Role of the Military in Turkish Politics, The Middle East Journal, Vol. 19, No. 1, Winter 1965, pp. 54-66; նույնի, The Causes of the 1960 Revolution in Turkey, The Middle

բերությունների հետազոտման համար օգտակար են եղել Էրիկ Նորդլինգերի[28] և Մորիս Ցանովիցի[29] աշխատությունները:

Մեր հետազոտության համար առանձնակի կարևորություն ունեն թուրք հեղինակների աշխատությունները, որոնք աչքի են ընկնում փաստավավերագրական նյութի հարստությամբ: Առավել օգտակար աշխատությունների շարքում կարելի է նշել Մեհմեթ Ալի Բիրանդի[30], Հասան Ջեմալի[31], Ջյունեյթ Արջայուրեքի[32], Ալի Բայրամօղլուի[33], Էրթուղրուլ Ալաթլըի[34], Թանել Դեմիրելի[35], Սոներ Ցալչընի և Դողան Ցուրդաքուլի[36], Էրբիլ Թուշալփի[37], Իսմայիլ Ջեմի[38], Էրգուն Օզբուդունի[39], Դողան Աքյազի[40] գործերը:

East Journal, Vol. 24, No. 4, Autumn 1970, pp. 438-454; Landau J. M., The Nationalist Action Party in Turkey, Journal of Contemporary History, Vol. 17, No. 4, Oct., 1982, pp. 587-606; Hale W., Turkish Politics and the Military. London: Routledge, 1994; Poulton H., Top Hat, Grey Wolf and Crescent, Turkish Nationalism and the Turkish Republic, New York, 1997; McFadden J. M., Civil-Military Relations in the Third Turkish Republic, The Middle East Journal, Vol. 39, No. 1, Winter 1985, pp. 69-85.

28 Nordlinger E., Soldiers in Politics: Military Coups and Governments, New Jersey, 1977.

29 Janowitz M., The Military in the Political Development of New Nations, Chicago, 1965; նույնի, Political Conflict, Essays in Political Sociology, Chicago, 1970.

30 Birand M. A., Bilâ H., Akar R., 12 Eylül: Türkiye'nin Miladı, İstanbul, 1999; Birand M. A., 12 Eylül Saat: 04:00. İstanbul, 1984; նույնի, Emret Komutanım, İstanbul, 1986.

31 Cemal H., Tank Sesiyle Uyanmak, 12 Eylül Günlüğü, İstanbul, 1986; նույնի, Kimse Kızmasın Kendimi Yazdım, İstanbul, 2001; նույնի, Kürtler, İstanbul, 2003.

32 Arcayürek C., Demokrasinin Sonbaharı 1977-1978, Ankara, 1985; նույնի, Bir İktidar Bir İhtilal 1955-1960, Açıklıyor-3, Ankara, 1984.

33 Bayramoğlu A., Asker ve Siyaset - Bir Zümre, Bir Parti: Türkiye'de Ordu, İstanbul, 2004, s. 59-118.

34 Alatlı E., Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, İstanbul, 2004.

35 Demirel T., Türk Silahlı Kuvvetleri'nin Toplumsal Meşruiyeti Üzerine - Bir Zümre, Bir Parti: Türkiye'de Ordu, İstanbul, 2004, s. 345-381; նույնի, Lessons of Military Regimes and Democracy: The Turkish case in a Comparative Perspective, Armed Forces & Society, Vol. 31, No. 2, Winter 2005, pp. 245-271; նույնի, The Turkish Military's Decision to Intervene: 12 September 1980, Armed Forces & Society, Vol. 29, No. 2, 2003, pp. 253-280.

36 Yalçın S. & Yurdakul D., Bay-Pipo, İstanbul, 2000; Yalçın S. & Yurdakul D., REİS, Gladio'nun Türk Tetikcisi, Ankara, 1998.

37 Tuşalp E., Eylül İmparatorluğu: Doğuşu ve Yükselişi, İstanbul, 1988.

38 Cem İ., Siyaset Yazıları, 1975-80 Türkiyesi, İstanbul, 1980; նույնի, Türkiye'de Geri Kalmışlığın Tarihi, İstanbul, 1971.

39 Özbudun E., Türk Anayasa Hukuku, Ankara, 2005.

40 Akyaz D., Askeri Müdahalelerin Orduya Etkisi, Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine, İstanbul, 2002.

Պետք է նշել, որ թուրք հեղինակների պարագայում, կապված նրանց քաղաքական նախապատվության հետ, նկատվում է նյութերի ընտրողական մոտեցում:

Քննարկվող թեմաների լուսաբանմանը մեծապես նպաստել են նաև վերջին տարիների ընթացքում թուրքական մամուլի էջերում տեղ գտած հրապարակումները, ինչպես նաև հեղաշրջման մասնակիցների հարցազրույցները, որոնք ռազմական հեղաշրջման հետ կապված նորանոր ուշագրավ փաստեր են առաջ բերում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ 1920-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Ռազմական սոցիոլոգիայի[41] ասպարեզում հետազոտությունների կարևորագույն օբյեկտ են բանակ-հասարակություն (քաղաքացիական իշխանություններ) փոխհարաբերությունները, որոնց վերաբերյալ ուսումնասիրությունները հատուկ կարևորություն ստացան հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո զինվորականների դերը պետությունների քաղաքական կյանքում նոր բնույթ և կարևորություն ձեռք բերեց, ինչն էլ հետազոտողների ուշադրությունը սևեռեց այդ թեմայի վրա[42]:

Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների վերաբերյալ կատարված հետազոտություններում լայն տարածում է ստացել Էրիկ Նորդլինգերի տեսությունը, ըստ որի՝ այդ փոխհարաբերությունները, երբ զինվորականները ենթարկվում են քաղաքացիական իշխանություններին, կարելի է բաժանել երեք խմբի՝ ավանդական (traditional), ազատական (liberal) և ներթա-

41 Ռազմական սոցիոլոգիայի հետազոտությունների կենտրոնում են բանակը որպես ինստիտուտ, դրա կապը և փոխհարաբերությունները հասարակության այլ ինստիտուտների հետ, բանակի գործառնության արդյունավետության վրա ազդող գործոնները, տե՛ս Ռազմական սոցիոլոգիա. ուսումնական նյութերի ժողովածու, Երևան, 2005, էջ 6:

42 Feaver P. D., The Civil-Military Problematique: Huntington, Janowitz, and the Question of the Civilian Control. - Armed Forces & Society, Vol. 23, No. 2, Winter 1996, pp. 149-178.

փանցող (penetration)[43]: Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների ավանդական մոդելի ժամանակ քաղաքացիական և զինվորական իշխանությունն ամբողջական է, գտնվում է մեկ ղեկավարի ձեռքում, ով հիմնականում ազնվական ծագում ունի (ինչպես, օրինակ, միջնադարյան միապետությունները): Ազատական մոդելի դեպքում բանակն ապաքաղաքականացված է, զինվորականներն անվերապահորեն ենթարկվում են քաղաքացիական իշխանություններին՝ անկախ վերջիններիս քաղաքական և գաղափարական ուղղվածությունից (տարածված է արևմտյան երկրներում): Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների ներթափանցող մոդելի ժամանակ բանակը սերտորեն փոխկապակցված է իշխանությունների հետ, բանակում տարածված է իշխող կուսակցության գաղափարախոսությունը, բանակը քաղաքականացված է և պայքարում է իշխող ռեժիմի գաղափարախոսության համար[44] (Խորհրդային Միության տարբերակը)[45]:

Բանակ-հասարակություն հարաբերությունները, երբ զինվորականները չեն ենթարկվում քաղաքացիական իշխանություններին և միջամտում են երկրի ներքաղաքական կյանքին, Է. Նորդլինգերը բաժանում է 3 խմբի՝ կարգավորող (moderator), խնամակալ (guardian) և իշխող (ruler): Կարգավորող միջամտությունների դեպքում զինվորականներն ուղղակիորեն չեն վերցնում իշխանությունը, այլ սպառնալիքների և ճնշումների միջոցով արգելք

43 Nordlinger E., Soldiers in Politics: Military Coups and Governments, New Jersey, 1977, pp. 10-19.

44 Նույն տեղում, էջ 10-19:

45 Որոշ հետազոտողներ այդ 3 տարբերակներին ավելացնում են ևս մեկը, այն է. երբ քաղաքացիական իշխանությունները հանդես են գալիս զինվորականների հետ կոալիցիայում: Այդ դեպքում զինվորականները գտնվում են քաղաքացիական իշխանությունների ենթակայության տակ, սակայն քաղաքացիականները պահում են իրենց իշխանությունը զինվորական խմբի կամ անհատի հետ դաշինքի միջոցով: Օրինակ՝ Այժիրի տարբերակը, երբ երկրի նախագահ Ահմադ Բեն Բելլան պահում էր իր իշխանությունն Ազգային պաշտպանության նախարար Հուարի Բումեդիենի օգնությամբ, մինչև վերջինիս կողմից իշխանության գրաբումը: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր III, Երևան, 2006, էջ 69-77:

(veto) են դնում կառավարության որոշման կամ կառավարության գործունեության վրա: Այդ դեպքում հնարավոր է կառավարության փոփոխությունը զինվորականների համար առավել ընդունելի տարբերակով (ինչպես, օրինակ, 1997-1998 թթ. Թուրքիայում զինվորականության ճնշումների արդյունքում Ն. Էրբաքանի կառավարությունը փոխարինվեց Բ. Էջևիթի կառավարությունով)[46]: Խնամակալ միջամտության ժամանակ զինվորականներն ուղղակիորեն իրենց ձեռքն են վերցնում իշխանությունը: Այդ մոդելի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ զինվորականները ժամանակավոր են վերցնում իշխանությունը՝ միջամտության պատճառները վերացնելու և իշխանությունը կրկին քաղաքացիական ուժերին վերադարձնելու նպատակով: Իշխող միջամտությունների ժամանակ զինվորականներն իշխանությունը վերցնում են իրենց ձեռքում պահելու և արմատական փոփոխություններ իրականացնելու նկատառումներով[47]:

Բանակ-հասարակություն հարաբերությունների ուսումնասիրությունների խոշորագույն տեսաբան Մորիս Ցանովիցը նոր (զարգացող) ազգերի մոտ ռազմական հեղաշրջումները, ըստ զինվորական աստիճանակարգության, բաժանում է երկու տեսակի՝ նախաձեռնողական և ըստ հրամանի: Նախաձեռնողականի ժամանակ ռազմական հեղաշրջումը կազմակերպում են ցածր աստիճանակարգ ունեցող զինվորականները, առանց հրամանատարության գիտության կամ համաձայնության (այդպիսի հեղաշրջումները հիմնականում ավելի արմատական են լինում): Ըստ հրամանի հեղաշրջումներն իրականացվում են բանակի հրամանատարության կողմից[48]:

---

46 Այս մասին առավել մանրամասն տե՛ս Heper M. and Güney A., The Military and the Consolidation of Democracy: The Recent Turkish Experience, Armed Forces & Society, Vol. 26, No. 4, Summer 2000, pp. 635-657

47 Nordlinger E., նշվ. աշխ., էջ 21-32:

48 Janowitz M., The Military in the Political Development of New Nations. Chicago: The University of Chicago, 1965, pp. 68-70.

Երկրի քաղաքական կյանքում իշխող զինվորական-քաղաքացիական հարաբերությունների տարբերակը հասկանալու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝ սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրը (երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը, ներքաղաքական դրությունը և այլն), արտաքին գործոնները (տարածաշրջանում պատերազմներ, հեղաշրջումներ, հեղափոխություններ և այլն) և զինվորական համակարգի էությունը[49] (բանակի քաղաքականացվածությունը, քաղաքական գաղափարախոսությունը, զինվորականության սոցիալական վիճակը, զինվորականության քաղաքական կյանքին միջամտության ավանդույթը[50] և այլն):

Քեմալական Թուրքիայում բանակն այն առանցքային ուժն էր, որը կանգնած էր երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հիմքում: Զինվորականների գերիշխումը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում երկարատև և ուժեղ ավանդույթ ունի, որը կապված է ինչպես Օսմանյան կայսրության բնույթի, այնպես էլ հանրապետական Թուրքիայի ստեղծման և կայացման գործընթացի հետ[51]: Թուրքիայի Հանրապետության հիմնադրման առաջին տարիներից զինվորականներն սկսեցին ակտիվ դեր խաղալ երկրի քաղաքական կյանքում: Թուրքիայի առաջին նախագահ դարձավ ազգայնամոլական շարժման առաջնորդ, մարշալ Մուսթաֆա Քեմալը (1934 թվականից՝ Աթաթյուրք), վարչապետ՝ գեներալ Իսմեթ փաշան (1934-ից՝ Ինյոնյու): Հանրապետության գոյության առաջին տարիները ցույց տվեցին, որ բանակի դերը Թուրքիայի քաղա-

49 Karabelias G., Civil-Military Relations: A comparative analysis of the role of the military in the political transformation of post-war Turkey and Greece: 1980-1985. – Final Report Submitted to North Atlantic Treaty Organization (NATO) in June 1980, pp. 15-16.

50 Janowitz M., Political Conflict, Essays in Political Sociology, Chicago: Quadrangle Books, 1970, p. 136.

51 Багдасарян С., Роль армии в процессе модернизации Турции в 1960-1990-х годах. - Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXI, Երևան, 2002, էջ 28.

քական կյանքում միանշանակ չէ: Ընդհանուր առմամբ, բանակը հանդիսանում էր քեմալականների իշխող ռեժիմի հենասյունը, բայց միաժամանակ Մ. Քեմալի իշխանությանն ընդդիմադիր գեներալների (Ք. Քարաբեքիր, Ա. Ջեբեսոյ, Ջ. Էդիլմեզ) ակտիվ մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին իրական սպառնալիքի տակ էր դնում Քեմալի իշխանությունը և բարեփոխումների իրականացումը[52]: Քեմալականները հաղթանակած դուրս եկան այդ պայքարից, և ընդդիմադիր գեներալները հեռացվեցին բանակից, որից հետո միայն Քեմալը վերջնականապես արգելեց զինվորականներին զբաղվել քաղաքական գործունեությամբ[53]: Այնուհետև քեմալականները սկսեցին, մի կողմից, ապաքաղաքականացնել բանակը՝ փորձելով զերծ պահել այն քաղաքական գործընթացներից, մյուս կողմից էլ՝ բանակը դիտարկել որպես իշխանությունների իրական հենասյուն և քեմալական բարեփոխումների իրականացման գլխավոր երաշխիք: Իշխանություններն սկսեցին նպատակաուղղված քաղաքականություն իրականացնել՝ սպայական կազմին քեմալիզմի ոգով դաստիարակելու ուղղությամբ: Թուրքական բանակի սպայական կազմի դաստիարակության գործընթացում առանցքային նշանակություն ստացան քեմալիզմի սկզբունքները: Անսահման սեր և հարգանք էր սերմանվում Աթաթյուրքի և նրա գաղափարախոսության հանդեպ: Այս գործընթացների մեջ լայնորեն ներգրավված էին ինչպես պետության քարոզչական մարմինները (մամուլ, գրականություն և այլն), այնպես էլ քաղաքական գործիչները: Օրինակ՝ Հանրապետական-ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) գլխավոր քարտուղար Ռ. Փեքերը 1935-1942 թթ. երկրի ռազմական բարձրագույն հաստատություններում

52 Harris G. S., The Role of the Military in Turkish Politics, The Middle East Journal, Vol. 19, No. 1, Winter 1965, pp. 56-60.
53 Նույն տեղում:

դասախոսություն էր կարդում «թուրքական հեղափոխության» թեմաներով[54]: Թուրքական իշխանությունների նպատակաուղղված քաղաքականության արդյունքում սպայական անձնակազմը խորապես ընդունեց քեմալիզմի գաղափարախոսությունը: Այն հատկապես խոր արմատներ գցեց երիտասարդ սպաների մեջ, որոնք իրենց համարում էին ոչ միայն քեմալիզմի ակտիվ կրողը, այլև քեմալիզմի գաղափարախոսության առաջամարտիկը[55]: Թուրք հայտնի լրագրող Մեհմեթ Ալի Բիրանդը նշում է, որ թուրքական սպայի համար Աթաթյուրքն ամեն ինչ էր[56]:

1930-ական թթ. բանակն ընդհանուր առմամբ չէր խառնվում երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին՝ միաժամանակ շարունակելով ամուր հենասյուն հանդիսանալ իշխող ռեժիմի համար: Սակայն արդեն 1940-ական թթ. սպայական կազմը որոշակիորեն սկսեց ներքաշվել քաղաքական գործընթացների մեջ: Դա հատկապես ընդգծվեց, երբ Թուրքիան անցում կատարեց դեպի բազմակուսակցական համակարգ, որի արդյունքում ի հայտ եկան տարբեր քաղաքական ուժեր և գաղափարախոսություններ: Նորահայտ քաղաքական կուսակցություններից ամենաազդեցիկը Դեմոկրատական կուսակցությունն (ԴԿ) էր, որն արդեն 1946 թ. խորհրդարանական ընտրություններում իր ընտրացուցակներում ընդգրկեց 15 բարձրաստիճան սպայի, որոնց թվում էր նաև մարշալ Ֆ. Չաքմաքը[57]:

1946 թ. խորհրդարանական ընտրություններից հետո բանակում սկսեցին կազմավորվել առաջին սպայական խմբավորումները[58]: Արդեն 1940-ական թթ. վերջերին սպայակազմի մի

54 Запорожец В., Колесников А., Турция: Общество и армия, том I, Ленинград, 1983, стр. 180.
55 Նույն տեղում:
56 Birand M. A., Emret Komutanım, İstanbul, 1986, s. 92.
57 Запорожец В., Колесников А., նշվ. աշխ., էջ 184.
58 Հատկանշական է, որ այդ խմբավորումների մեջ էին նաև Զևդեթ Սունայը (1961-1966 թթ. ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ, 1966-1973 թթ. հանրապետության նախագահ) և Մենդուհ

խումբ անդամներ՝ գեներալ Ֆ. Բելենի գլխավորությամբ, սկսեցին ռազմական հեղաշրջում նախապատրաստել՝ իշխանությունը ՀԺԿ-ից ԴԿ-ին փոխանցելու նպատակով: ԴԿ ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո նրանք որոշեցին սպասել 1950 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքներին[59]: 1950 թ. խորհրդարանական ընտրությունները հաղթանակ բերեցին ԴԿ-ին, որը եկավ փոխարինելու 27 տարի երկրի ղեկն իր ձեռքում պահած ՀԺԿ-ին: Բանակի արձագանքը ԴԿ հաղթանակին միանշանակ չէր. դեմոկրատների կողմնակիցները բավարարված էին ընտրությունների արդյունքներով, վերը նշված Ֆ. Բելենի խմբավորումը դադարեցրեց իր գործունեությունը, սակայն ԴԿ հաղթանակը դժգոհություններ առաջացրեց ՀԺԿ-ին հավատարիմ գեներալների շրջանում, որոնք, հիմնվելով սպայական կազմի որոշակի մասի վրա, պատրաստ էին հեղաշրջում իրականացնել՝ իշխանությունն Աթաթյուրքի հիմնած ՀԺԿ-ին վերադարձնելու նպատակով[60]: Այնուամենայնիվ, ԴԿ-ին հաջողվեց ճնշել բանակում առաջացած դժգոհությունները՝ ստանալով գլխավոր շտաբի պետի աջակցությունը:

ԴԿ իշխանության տարիներին (1950-1960 թթ.) երկրում ակնառու դարձան քաղաքական մրցակիցների դեմ ճնշումները, իսլամական շարժումների ակտիվացումը, որոնք երիտասարդ սպայական կազմի կողմից ընդունվում էին որպես նահանջ քեմալիզմի ուղուց, և առաջացրին նրանց դժգոհությունն իշխանությունների հանդեպ: 1950-ական թթ. կեսերից սպայակազմի մի խումբ երիտասարդ անդամներ ձեռնամուխ եղան ռազմական հեղաշրջում նախապատրաստելուն[61]:

Թարգմաչը, ով 1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտության ժամանակ Գլխավոր շտաբի պետն էր, տե՛ս İpekçi A. ve Çoşar Ö. S., İhtilalın İçyüzü, İstanbul, 1965, s. 16-19:

59 Harris G. S., The Role of the Military in Turkish Politics, The Middle East Journal, Vol. 19, No. 1, Winter 1965, pp. 54-66.

60 Запорожец В., Колесников А., նշվ. աշխ., էջ 186.

61 Harris G. S., The Causes of the 1960 Revolution in Turkey, The Middle East Journal, Vol. 24, No. 4, Autumn 1970, pp. 438-454.

1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցավ առաջին ռազմական հեղաշրջումը: Դրանից հետո երկրի ամբողջ իշխանությունն անցավ նորաստեղծ Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ, Milli Birlik Komitesi)[62] ձեռքը, որի ղեկավար դարձավ գեներալ Ջեմալ Գյուրսելը: Գործունեության առաջին իսկ ամիսներից լուրջ հակասություններ առաջացան ԱՄԿ անդամների միջև՝ կապված երկիրը ղեկավարելու հետագա ընթացքի հետ: ԱՄԿ-ն ներսում բաժանվեց երկու թևի՝ պահպանողականների և արմատականների: Պահպանողականների խումբը, որի կազմում էին ԱՄԿ անդամ գեներալները՝ Ջ. Գյուրսելի գլխավորությամբ, փորձում էր շուտափույթ ընտրություններ կազմակերպել և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին: Իսկ ԱՄԿ արմատական թևին հարող անդամները պնդում էին, որ միայն ԴԿ-ին իշխանությունից զրկելով՝ զինվորականության «առաքելությունը» չի ավարտվում, և նրանք պետք է իշխանության ղեկը պահեն իրենց ձեռքում երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելու համար: Այդ պայքարում հաղթանակ տարան պահպանողականները, և նոյեմբերի 13-ին արմատականների խմբի բոլոր 14 անդամները հեռացվեցին ԱՄԿ-ից և զինված ուժերից[63]: Արմատականներին իր կազմից հեռացնելով ԱՄԿ-ն որոշեց կազմակերպել ընտրություններ և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին:

Այսպիսով, ըստ բանակ-հասարակություն փոխհարաբերությունների վերը նշված տեսության՝ «Մայիսի 27-ի» զինվորական հեղաշրջումը, թեև մինչև արմատականներին (14-ի խումբ) ԱՄԿ-ից հեռացնելն ուներ կառավարող հեղաշրջում դառնալու

62 ԱՄԿ-ն բաղկացած էր 38 անդամից (5 գեներալ, 9 գնդապետ, 6 փոխգնդապետ, 11 մայոր, 7 կապիտան), տե՛ս Öztuna Y., Ayvaz Gökdemir, Türkiye'de Askeri Müdahaleler, İstanbul, 1987, s. 50.

63 Weiker W. F., The Turkish Revolution 1960-1961, Aspects of Military Politics. Washington: Brookings Institution, 1963, pp. 131-136; Seyhan D., Gölgedeki Adam, İstanbul, 1966, s. 117-118.

գրեթե բոլոր նախանշանները, այնուամենայնիվ, կարելի է բնութագրել որպես խնամակալ հեղաշրջում: Զինվորականները երկրի իշխանությունը վերցրին իրենց ձեռքը, ապա որոշ չափով վերացրին հեղաշրջման պատճառները, որից հետո իշխանությունը կրկին վերադարձրին քաղաքական կուսակցություններին:

1960 թ. ռազմական հեղաշրջումը կարելի է բնութագրել նաև որպես նախաձեռնողական հեղաշրջում: Այն չիրականացվեց բանակի ղեկավարության կողմից, ինչպես դա տեղի ունեցավ զինվորականների հետագա «միջամտությունների» (1971 թ., 1997 թ.) և հեղաշրջման (1980 թ.) ժամանակ: «Մայիսի 27-ը» կազմակերպեցին և իրականացրին գլխավորապես միջին աստիճանակարգ ունեցող և հիմնականում քեմալիզմի սկզբունքներին անսահման նվիրված սպայական կազմի անդամները (Թ. Այդեմիր, Դ. Մեյհան, Օ. Էրքանլը, Ֆ. Գյուվենյուրք, Ա. Թյուրքեշ, Ս. Քոչաս, Ն. Էսին, Ս. Քարաման և այլն): Հեղաշրջման նախաձեռնողները, իրենց գործողություններին «օրինականություն» հաղորդելու նպատակով միայն, փորձեցին հեղաշրջման իրականացման գործընթացի մեջ ներգրավել բանակի վերնախավի որոշ անդամների[64]: Քանի որ հեղաշրջումն իրականացրին հիմնականում միջին աստիճանակարգ ունեցող սպաները, ուստի բանակում խախտվեց աստիճանակարգային կարգապահությունը, ինչը քննադատում է «նախաձեռնողական գործողությունները» և պարտադրում գործել «հրամանի սկզբունքով», որն էլ իր հերթին ենթադրում է անքննարկելի ենթակայություն առավել բարձր աստիճան ունեցող սպաների հրամանին, եթե նույնիսկ հրամանի ճիշտ լինելը կասկած է հարուցում:

---

64 Հեղաշրջման կազմակերպիչներին 1950-ական թթ. վերջերին հաջողվեց այդ գործընթացների մեջ ներքաշել ցամաքային զորքերի հրամանատար Ջ. Գյուրսելին, որը, սակայն, 1960 թ. մայիսի սկզբին պաշտոնանկ արվեց: Մյուս գեներալը, որը մասնակցում էր հեղաշրջման նախապատրաստմանը, Գլխավոր շտաբի թիկունքի պետ Ջ. Մադանօղլուն էր: Պետք է նշել, որ Մադանօղլուի և Գյուրսելի մասնակցությունը հեղաշրջմանը տեղի ունեցավ վերջնական փուլում, երբ հեղաշրջումն արդեն անխուսափելի էր: Տե՛ս Koçaş S., Atatürkten 12 Marta, Anılar, Cilt 1., İstanbul, 1977, s. 401-407, 15-18:

1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո զինվորական վերնախավը վերստին ձեռնամուխ եղավ բանակում աստիճանակարգության կարգապահության հաստատման գործընթացին: Դրանով բարձրաստիճան զինվորականությունը փորձում էր բացառել ցածր աստիճանակարգային սպայության կողմից կազմակերպվող հեղաշրջումները՝ «նախաձեռնողական հեղաշրջումները», որն, ըստ էության, սպառնում էր նաև իրենց իշխանությանը: Աստիճանակարգության կարգապահությունը վերականգնելու գործընթացում կարևոր դերակատարում ունեցավ Զինված ուժերի միությունը (ԶՈՒՄ - Silahlı Kuvvetler Birliği):

1960 թ. հեղաշրջումից հետո բանակը չափազանց քաղաքականացված էր, զորամասերը քաղաքական ակումբներ էին հիշեցնում, որտեղ զինվորականները քննարկում էին այս կամ այն քաղաքական ուղղության առավելություններն ու թերությունները: Այդ կապակցությամբ Շ. Այդեմիրը նշում է, որ զորամասերը վերածվել էին քաղաքական կենտրոնների, որտեղ տեղի էին ունենում ցույցեր և բանավեճեր[65]: Բանակում մեծ հիասթափություն էր առաջացրել ԱՄԿ գործունեությունը, որը հատկապես ընդգծվեց «նոյեմբերի 13-ի» (արմատականների հեռացումից) հետո: Մինչև արմատականներին իր կազմից հեռացնելը ԱՄԿ-ն իրոք ղեկավար մարմին էր, և բանակը նրանից իրական գործողություններ էր սպասում: Սակայն «նոյեմբերի 13-ից» հետո բանակում սկսեցին ակնհայտ ընդգծվել քաղաքական տարբեր հոսանքներ[66]: Այս իրողություններում բանակում ծնվեց նոր քաղաքական միավոր՝ Զինված ուժերի միությունը: ԶՈՒՄ կանոնադրության առանցքային կետերից էր հրամանով գործելու անհրաժեշտությունը: ԶՈՒՄ-ը սրընթաց կերպով տարածվեց

65 Aydemir Ş., İkinci Adam, Cilt 3., İstanbul, 1975, s. 570.
66 Данилов В., Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия). Москва, 1985, с. 78.

բանակում և ձեռնամուխ եղավ աստիճանակարգության վերականգնման և երիտասարդ սպայական կազմի մեջ «նախաձեռնողական գործողությունները» բացառելու գործին: Կարող ենք ասել, որ ՋՈՒՄ-ը մեծապես նպաստեց բանակի աստիճանակարգության կարգապահության վերականգնմանը[67]:

Թուրքական բանակում աստիճանակարգության վերականգնման գործում նշանակալի դերակատարում ունեցավ նաև Բանակի փոխօգնության կազմակերպությունը՝ Ordu Yardımlaşma Kurulu (OYAK): Հարկ է նշել, որ 1960 թ. ռազմական հեղաշրջմանը խթանող պատճառներից մեկը զինվորականության նյութական անապահովությունն էր, ուստի OYAK-ը ստեղծվեց (1961 թ.) սպայական կազմի սոցիալական դրությունը բարելավելու նպատակով[68]: OYAK ֆոնդը սկզբնական շրջանում ձևավորվում էր անդամավճարներից, սակայն հետագայում, ընդլայնելով իր տնտեսական գործունեության սահմանները, այն վերածվեց խոշոր ձեռնարկատիրական ընկերության[69]: OYAK հիմնադրմամբ նյութական շահերն էլ ավելի համախմբեցին սպայությանը՝ վերացնելով բարձրաստիճան և միջին սպայության միջև 1960 թվականից տիրող լարվածությունը[70]:

Բանակի վերնախավը, փորձելով ցածր աստիճանակարգ ունեցող սպայական կազմին հեռու պահել քաղաքականությունից, իր համար էր ճանապարհ բացում դեպի մեծ քաղաքականություն՝ 1960 թ. սկզբներից ակտիվորեն մասնակցելով երկրի քաղաքական անցուդարձին: Այդ գործընթացին մեծապես նպաստեց 1961 թ. սահմանադրության 111-րդ հոդվածով

67 Akyaz D., Askeri Müdahalelerin Orduya Etkisi, Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine, İstanbul, 2002, s. 160-165.

68 Ավագյան Ա., Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ, 4 (50), Երևան, 2006, էջ 71:

69 OYAK-ի մասին առավել մանրամասն տե՛ս Parla T., Türkiyede Merkantilist Militarizm 1960-1998. - Bir Parti. Türkiye'de Ordu. İstanbul, 2004, s. 201-224; Akça İ., Kolektif Bir Sermayedar Olarak Türk Silahlı Kuvvetleri. - Bir Parti. Türkiye'de Ordu. İstanbul, 2004, s. 225-270:

70 Ավագյան Ա, նշվ. հոդ., էջ 71:

ստեղծված Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ)[71], որն իր կազմի մեջ ընդգրկում էր հանրապետության նախագահին, վարչապետին, կառավարության որոշ անդամների և ԶՈՒ հրամանատարությանը: ԱԱԽ-ն իր գործունեության առաջին տարիներին ոչ մի դերակատարում չէր ունենում երկրի ներքաղաքական կյանքում, սակայն արդեն 1960-ական թթ. վերջերին այն դարձել էր մի մարմին, որտեղ որոշվում էին երկրի բոլոր կարևորագույն խնդիրներն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության բնագավառում[72]: 1970 թ. թուրքական «Միլիյեթ» թերթը գրում էր, որ Թուրքիայի սահմանադրության 111-րդ հոդվածով օրինականացվեց թուրքական զինված ուժերի մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին[73]: ԱԱԽ-ի միջոցով, փաստորեն, Թուրքիայի բարձրաստիճան զինվորականությունն ուղղակիորեն սկսեց մասնակցություն ունենալ երկրի համար կարևորագույն խնդիրների քննարկմանը, ինչը խթանեց բանակի ղեկավարության քաղաքականացմանը:

Այդպիսով, «Մայիսի 27-ի» հեղաշրջումը և դրան հետևած իրադարձությունները մեծապես նպաստեցին բանակի քաղաքականացման գործընթացին: Արդեն 1960-ական թթ. սկսած՝ բանակը դարձավ քաղաքական պայքարի հավասարազոր մասնակից, ժամանակ առ ժամանակ դուրս գալով առաջին պլան, իր ձեռքը վերցնելով իշխանությունը[74]:

1971 թ. մարտի 12-ին թուրքական բանակը միջամտեց երկրի քաղաքական անցուդարձին, որը պատմության մեջ մտավ «հուշագրային հեղաշրջում» անվանմամբ: Թուրքիայի ԶՈՒ հրամանատարությունը հանրապետության նախագահ Ջևդեթ Սունային ներկայացրեց հուշագիր, որով պահանջվում էր կառա-

71 T. C. Gerekçeli Anayasa, İstanbul, 1968, s. 105.
72 Запорожец В., Колесников А., նշվ. աշխ., էջ 242-243:
73 Milliyet, 30, 08, 1970.
74 Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Москва, 1991, стр. 8.

վարության հրաժարականը՝ սպառնալով հակառակ դեպքում իր ձեռքը վերցնել երկրի իշխանությունը: Նույն օրը Սուլեյման Դեմիրելի ղեկավարած կառավարությունը հրաժարական տվեց և դադարեցրեց գործունեությունը: «Մարտի 12-ի» կազմակերպիչների առաջնային նպատակն էր՝ կանխել ցածր զինվորական աստիճան ունեցող սպաների կողմից նախապատրաստվող նախաձեռնողական ռազմական հեղաշրջումը[75]:

Նշենք, որ արդեն 1960-ական թթ. վերջերին երկրում սկսել էր գործել գաղտնի կազմակերպություն, որը ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում: Այդ կազմակերպության մեջ թոշակի անցած սպաների (1960 թ. հեղաշրջման կազմակերպիչներ Օ. Քյոքսալ, Հ. Քաչար, Ջ. Մադանօղլու) և բանակի արմատական տրամադրված սպայակազմի անդամների (գնդապետ Ա. Քափթան) հետ միասին գործում էին նաև ձախ քաղաքական ուղղվածություն ունեցող քաղաքացիական գործիչներ (Դ. Ավջըօղլու): Կազմակերպության գործունեությունը ղեկավարում էր Ջ. Մադանօղլուն[76]: 1971 թ. սկզբին կազմակերպությունը զգալի ուժ և ռեսուրսներ ուներ հեղաշրջում իրականացնելու համար, սակայն զինվորական ղեկավարությանը հայտնի դարձան այդ կառույցի ծրագրերը, և բանակի վերնախավը «մարտի 12-ի միջամտության» միջոցով կարողացավ խոչընդոտել նրանց ծրագրերին: «Մարտի 12-ի միջամտությունից» անմիջապես հետո բանակից հեռացվեցին մեծ թվով սպաներ, սպայական կազմում բազմաթիվ տեղափոխություններ կատարվեցին:

Փաստենք, որ եթե 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջումը կազմակերպված էր հիմնականում արմատականների կողմից, ապա

75 Karabelias G., The Evolution of Civil-Military Relation of Post-war Turkey 1980-95, Middle Eastern Studies: Oct. 1999, 35, p. 133.

76 Հատկանշական է, որ արմատական հեղաշրջում նախապատրաստող այդ կազմակերպությունը գլխավորում էր Ջ. Մադանօղլուն, որը 1960 թ. հեղաշրջումից հետո ԱՄԿ-ի աջ պահպանողականների ղեկավարներից էր և ջանք չէր խնայում ԱՄԿ-ի արմատականներին հեռու պահել քաղաքականությունից: Տե՛ս Akyaz D., նշված աշխ. էջ 272-290.:

մարտի 12-ի միջամտությունը գլխավորապես ուղղված էր նրանց դեմ: 1971 թ. հեղաշրջում նախապատրաստելը, փաստորեն, արմատականների վերջին փորձն էր՝ ավարտին հասցնելու իրենց գործը՝ սկսված «մայիսի 27-ին»: Թուրքիայի արմատական սպաները, ի տարբերություն արևելյան որոշ երկրների, որտեղ նմանօրինակ շարժումները հաջողության հասան, չկարողացան համախմբվել և ուժերի ճիշտ վերադասավորում անել: Խոշոր կապիտալը, բանակի ղեկավարությունը և կուսակցությունները կարողացան լուրջ դիմադրություն ցուցաբերել և հաղթանակած դուրս գալ այդ պայքարից[77]:

«Մարտի 12-ի» զինվորականների միջամտությունը, ըստ Է. Նորդլինգերի բանակ-հասարակություն փոխհարաբերությունների տեսության, կարելի է բնութագրել որպես կարգավորող միջամտություն: Բանակն իշխանությունը չվերցրեց իր ձեռքը. 1971-73 թթ. ընկած ժամանակահատվածում շարունակում էին գործել խորհրդարանը և քաղաքացիական կառավարությունը, սակայն երկրի ամբողջ իշխանությունը գտնվում էր բանակի հսկողության ներքո: «Մարտի 12-ի» անցումային շրջանում (1971-73 թթ.) բարձրաստիճան զինվորականության անմիջական հսկողությամբ տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների ժամանակ փոփոխության ենթարկվեց նաև Ազգային անվտանգության խորհրդի մասին դրույթը. ավելացվեցին ԱԱԽ լիազորությունները, որոնք նպատակաուղղված էին ուժեղացնել բանակի վերահսկողական լծակները երկրի քաղաքական կյանքի վրա[78]:

«Մարտի 12-ի վարչակարգի» ժամանակաշրջանն ավարտվեց 1973 թ. հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտ-

77 Данилов В., Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия). Москва, 1985, стр. 164.
78 Bayramoğlu A., Asker ve Siyaset. - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu, İstanbul, 2004, s. 79-80.

ությունններով, որին հաջորդած մի քանի տարիների ընթացքում զինվորականությունը գտնվում էր երկրորդ պլանում և ընդհանուր առմամբ չէր խառնվում երկրի քաղաքական անցուդարձին: Դա պայմանավորված էր հիմնականում երկու հանգամանքով: Նախ՝ «Մարտի 12-ի վարչակարգը» մեծապես վարկաբեկել էր զինվորականությանը, քանի որ թե՛ նրանց «միջամտությունը» քաղաքական կյանքին և թե՛ դրան հաջորդած պատժամիջոցների զանգվածային ալիքը ձախակողմյան շարժումների նկատմամբ հիմնավորված չէին: Արդյունքում՝ զինվորականությունը մեծապես վարկաբեկվել էր, նվազել էին նրա ուժն ու ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում[79], ինչն էլ արտահայտվեց 1973 թ. մարտին կայացած նախագահական ընտրությունների ժամանակ[80]: 1973 թ. սկզբին Գլխավոր շտաբի (ԳՇ) պետ Ֆարուք Գյուրլերը հրաժարական տվեց և իր թեկնածությունն առաջադրեց նախագահական ընտրություններում: Սակայն երկրի 2 խոշորագույն կուսակցությունները (Արդարություն կուսակցությունը՝ ԱԿ և Հանրապետական-ժողովրդական կուսակցությունը՝ ՀԺԿ) հրաժարվեցին պաշտպանել Գյուրլերի թեկնածությունը, և վերջինիս այդպես էլ չհաջողվեց ԹԱՄԺ-ում հավաքել ձայների անհրաժեշտ քանակ՝ նախագահ ընտրվելու համար[81]: Ֆ. Գյուրլերի նախագահ չընտրվելը փաստում է, որ տվյալ ժամանակահատվածում զինվորականության ազդեցությունը քաղաքական դաշտում թույլ էր, և այդ իրավիճակում բանակը լուրջ ազդեցություն չէր կարող ունենալ 1973 թ. հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունների վրա: Երկրորդ

79 Demirel T., Lessons of Military Regimes and Democracy: The Turkish case in a Comparative Perspective. - Armed Forces & Society, Vol. 31, No. 2, Winter 2005, p. 250.

80 Batur M., Anılar ve Görüşler, İstanbul, 1985, s. 458.

81 Նախագահական ընտրությունների 15-րդ տուրում հանրապետության նախագահ ընտրվեց ծովակալ Ֆահրի Քորութուրքը: 1973 թ. նախագահական ընտրությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Данилов В., Армия и политика в современной Турции. – Турция: история. экономика, Москва, 1978, стр. 21-24; Batur M., նշվ. աշխ., էջ 413-416:

հանգամանքը կապված էր ԳՇ պետ Սեմիհ Սանջարի գործոնի հետ: Դեռ 1973 թ., երբ Ֆ. Գյուրլերը հրաժարական տվեց այդ պաշտոնից, նոր ԳՇ պետ ընտրելու անհրաժեշտություն ծագեց: Գյուրլերը ԳՇ պետի երկու գլխավոր թեկնածուների միջև՝ Մուհսին Բաթուր և Սեմիհ Սանջար, ընտրություն կատարեց հօգուտ երկրորդի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սանջարը ջերմ հարաբերություններ ուներ ԱԿ ղեկավարության հետ: Այդ քայլով Գյուրլերը փորձեց շահել ԱԿ ղեկավարների վստահությունը և ստանալ վերջիններիս աջակցությունը նախագահական ընտրությունների ժամանակ: Սակայն ԱԿ ղեկավար Ս. Դեմիրելը, ունենալով ամուր հենասյուն ի դեմս Սանջարի, հրաժարվեց պաշտպանել Ֆ. Գյուրլերի թեկնածությունը: Սեմիհ Սանջարն իր պաշտոնավարման ժամանակահատվածում (1973-1978 թթ.) լոյալ դիրքորոշում ուներ քաղաքացիական իշխանությունների նկատմամբ ընդհանրապես և Դեմիրելի ղեկավարած Ազգայնական ճակատ կոալիցիոն կառավարության (1975-1978 թթ.) նկատմամբ՝ մասնավորապես: Հետևաբար, Սեմիհ Սանջարը փորձում էր բանակը հեռու պահել քաղաքական գործընթացներին ուղղակի միջամտելուց: Պատահական չէ, որ 1980 թ. ռազմական հեղաշրջման նախապատրաստման գործընթացները սկսվեցին միայն Սեմիհ Սանջարի պաշտոնաթողությունից հետո՝ 1978 թ.:

1977 թ. հունիսի սկզբին պանթյուրքիստական ուժերի հետ միասին ռազմական հեղաշրջում նախապատրաստելու մեղադրանքով բանակից հեռացվեցին ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Նամըք Քեմալ Էրսունը[82] և մոտ 200 աջ ուղղվածության սպա: Ցամաքային զորքերի հրամանատարի պաշտոնի համար երեք գլխավոր թեկնածու կար՝ առաջին բանակի հրամանատար, բանակի գեներալ Ադնան Էրսյոզը, երկրորդ բանակի հրամանատար, բանակի գեներալ Շյուքրյու Օլ-

82 Alatlı E., Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, İstanbul, 2004, s. 184-185.

ջայը և երրորդ բանակի հրամանատար, բանակի գեներալ Ալի Ֆեթհի Էսենները[83]: Ցամաքային զորքերի հրամանատարի թափուր պաշտոնը հատկապես կարևորվում էր այն պատճառով, որ 1976 թ. մարտին լրացել էր ԳՇ պետ Սեմիհ Սանջարի պաշտոնավարման ժամկետը (ԳՇ պետը նշանակվում էր 3 տարի ժամկետով), և այն ամեն տարի մարտի 6-ին երկարացվում էր կառավարության կողմից (կառավարությունն իրավունք ուներ երեք անգամ, մեկ տարի ժամկետով երկարացնելու ԳՇ պետի պաշտոնավարման ժամկետը)[84], և նոր ցամաքային զորքերի հրամանատարը դիտվում էր որպես հաջորդ Գլխավոր շտաբի պետի հիմնական թեկնածու: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 1980 թ. ապրիլին ավարտվում էր նախագահ Ֆահրի Քորություրքի պաշտոնավարման ժամկետը, նոր ԳՇ պետը հաջորդ նախագահի ամենահավանական փոխարինողն էր լինելու: Այդ պայքարում վարչապետ Սուլեյման Դեմիրելի նախընտրած թեկնածուն Ալի Ֆեթհի Էսեներն էր[85], և ԳՇ պետ Սեմիհ Սանջարն առաջարկեց Էսենների թեկնածությունը, սակայն այդ քայլը թե՛ բանակի ներսում և թե՛ նախագահական նստավայրում որոշակի դժգոհություն առաջացրեց: Դժգոհությունների հիմնական պատճառն այն էր, որ Էսենների նշանակումը խախտում էր աստիճանակարգության կարգապահությունը, քանի որ երեք թեկնածուներից ըստ աստիճանակարգի ավելի բարձր էր Ադնան Էրսյոզի պաշտոնը, երկրորդը Շյուքրյու Օլջայն էր և հետո նոր Էսեներն էր: Նման պայմաններում նախագահ Քորություրքը հրաժարվեց Էսեներին նշանակել այդ պաշտոնում՝ բերելով հետևյալ պատճառաբանությունը. «բանակում աստիճանակար-

83 Kenan Evren'in Anıları, Cilt 1, İstanbul, 1990, s. 178.
84 Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, İstanbul, 1984, s. 60.
85 Ալի Ֆեթհի Էսենները 1983 թ. ստեղծված «Մեծ Թուրքիա» կուսակցության նախագահն էր, որի գործունեությունը զինվորականներն արգելեցին՝ պատճառաբանելով, որ այն ղեկավարվում է Ս. Դեմիրելի կողմից:

գության կարգ կա, և ես չեմ խախտի այն»[86]: Կառավարության ղեկավար Ս. Դեմիրելն իր հերթին կտրականապես դեմ էր Ադնան Էրսոյզի թեկնածությանը, քանի որ վերջինս հայտնի էր ՀԺԿ-ի նկատմամբ իր համակրանքով[87]: Հարկ է նշել, որ այս փուլում ոչ մի կերպ չէր քննարկվում էգեյան բանակի հրամանատար Քենան Էվրենի թեկնածությունը, սակայն իրադրությունը կտրուկ փոխվեց օգոստոսի 30-ին: Այդ օրը լրացավ երեք գլխավոր թեկնածուների (Էրսոյզ, Օլջայ, Էսեներ) պաշտոնավարման ժամկետը, և երեքն էլ զորացրվեցին: Ցամաքային զորքերի հրամանատարի պաշտոնի համար, ըստ աստիճանակարգի, ամենահարմար թեկնածուն դարձավ էգեյան բանակի հրամանատար, բանակի գեներալ Քենան Էվրենը[88], որն էլ օգոստոսի 31-ին նշանակվեց այդ պաշտոնում[89]:

1978 թ. վարչապետ Բ. Էջևիթը հրաժարվեց ևս մեկ տարով երկարացնել ԳՇ պետ Ս. Սանջարի պաշտոնավարման ժամկետը, և Թուրքիայի ԳՇ պետ նշանակեց ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Քենան Էվրենին[90], որն իր հերթին նոր նշանակումներ կատարեց բանակում՝ ամրապնդելով իր դիրքերը: Ցամաքային զորքերի հրամանատար նշանակվեց Նուրեթթին Էրսինը, ռազմաօդային զորքերի հրամանատար՝ Թահսին Շահինքայան, ժանդարմերիայի հրամանատար՝ Սեդաթ Ջելասունը: ԳՇ պետի տեղակալ (այդ պաշտոնի կարևորությունն ընդգծելու նպատակով Թուրքիայում այն անվանում են

86 Kenan Evren, նշվ. աշխ., էջ 178.
87 Birand M. A., նշվ. աշխ., էջ 47.
88 Քենան Էվրենը ծնվել է 1918 թ. Ալշենիր գավառում, 1949 թ. ավարտել է Ստամբուլի ռազմական ակադեմիան և ծառայության է անցել թուրքական բանակում: Մինչև ցամաքային զորքերի հրամանատարի պաշտոնում նշանակվելը թուրքական բանակում բարձր պաշտոններ է զբաղեցրել՝ ցամաքային զորքերի շտաբի պետ, ԳՇ 2-րդ պետ, էգեյան բանակի հրամանատար: Ք. Էվրենի կենսագրական մանրամասնությունները տե՛ս թուրքական ԶՈՒ պաշտոնական կայքէջում, http://www.tsk.mil.tr/genel_konular/gnkurbask/kenanevren.htm
89 Kenan Evren, նշվ. աշխ., էջ 178-180.
90 Alatlı E., նշվ. աշխ., էջ 261.

ԳՇ 2-րդ պետ) նշանակվեց Հայդար Սալթըքը[91]: Առաջին բանակի (Ստամբուլի) հրամանատար նշանակվեց բանակի գեներալ Նեջդեթ Ուրյուտը: Այդպիսով 1978 թ. ձևավորվեց այն հիմնական ուժը, որը կազմակերպելու էր 1980 թ. ռազմական հեղաշրջումը: Արդեն 1978 թվականից բանակի վերնախավն սկսեց քննարկել քաղաքական կյանքին միջամտելու անհրաժեշտությունը:

1970-ական թթ. Թուրքիայում ընդգծվեցին սոցիալ-տնտեսական և քաղաքական լուրջ դժվարություններ, որոնք շուտով վերաճեցին խորությամբ նախադեպը չունեցող տնտեսական և քաղաքական ճգնաժամի[92]: 1970-ական թթ. վերջերին երկիրը բաժանվել էր երկու բևեռի՝ աջերի և ձախերի: Ահաբեկչությունն աննախադեպ ծավալներ էր ընդունել, որի հետևանքով օրական մոտ 20 մարդ էր սպանվում: Հաճախակի էին դարձել նաև բախումները կրոնական սուննի և ալևի համայնքների միջև: Թուրքիայում առկա էին հասունացող քաղաքացիական պատերազմին բնորոշ մի շարք նախանշաններ, սակայն իրար անընդհատ փոխարինող Էջևիթի և Դեմիրելի կառավարություններն էական փոփոխություն չէին մտցնում երկրի ներքաղաքական կյանքում: Թուրքիայում օրըստօրե խորանում էին ճգնաժամային երևույթները՝ ահաբեկչությունը, սոցիալ-տնտեսական դժվարությունները, բևեռացումը հասարակության միջև, իսկ երկրի քաղաքական ուժերն զբաղված էին ներքաղաքական պայքարով և վճռական քայլեր չէին ձեռնարկում երկրում շրջադարձային փոփոխություններ իրականացնելու համար: Այդ իրավիճակում զինվորական վերնախավն սկսեց նոր ռազմական միջամտություն նախապատրաստելու կոնկրետ քայլեր անել[93]:

1979 թ. դեկտեմբերի 27-ին Գլխավոր շտաբի պետ Քենան

91 Birand M. A., նշվ. աշխ., էջ 61-61.
92 Моисеев П., Турция: программа экономической стабилизации: 1980 г. - Турция–история и современность, сборник статей, Москва, 1988, стр. 211.
93 Demirel T., The Turkish Military's Decision to Intervene: 12 September 1980. – Armed Forces & Society, Vol. 29, No. 2, 2003, pp. 253-280.

Էվրենը նախագահ Ֆահրի Քորություրքին հանձնեց նախազգուշացնող նամակ, որով զինվորականությունն իր մտահոգությունն էր հայտնում երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ և կոչ անում իշխանություններին կատարել իրենց պարտականությունները[94]: Հաջորդ մի քանի օրերի ընթացքում Ք. Էվրենը, նախագահ Քորություրքի միջնորդությամբ, հանդիպեց քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ և հայտնեց զինվորականության մտահոգությունը երկրում տիրող քաղաքական և տնտեսական անկայունության վերաբերյալ՝ հորդորելով կտրուկ և կոնկրետ քայլեր ձեռնարկել երկիրը ճգնաժամից դուրս բերելու ուղղությամբ[95]:

1980 թ. բարձրաստիճան զինվորականությունը ևս մի քանի հանդիպումներ ունեցավ քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ: Զինվորականները փորձում էին քաղաքական համաձայնության դաշտ բերել երկու խոշորագույն կուսակցությունների ղեկավարներին՝ Դեմիրելին և Էջևիթին ու նրանց կուսակցությունների դաշինքով կոալիցիոն կառավարություն կազմել՝ երկիրը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու նպատակով: Սակայն այդ երկու կուսակցությունների միջև եղած հակասությունները և անհանդուրժողականության մթնոլորտն ի չիք դարձրին զինվորականների՝ ՀԺԿ և ԱԿ «մեծ կոալիցիա» ստեղծելու և այդպիսով քաղաքական ճգնաժամից դուրս գալու փորձերը[96]:

1980 թ. սեպտեմբերի 12-ին ՋՈ հրամանատարությունը՝ ԳՇ պետ Քենան Էվրենի ղեկավարությամբ, ռազմական հեղաշրջում իրականացրեց: Բանակ-հասարակություն փոխհարաբերութ-

94 Türk Silahlı Kuvvetleri'nin Görüşü – 27 Aralık 1979 (Uyarı Mektubu) - Alatlı E., Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, İstanbul, 2004, s. 456-457.
95 Kenan Evren, նշվ. աշխ., էջ 332-345.
96 Դումանյան Ա., Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ, Մերձավոր Արևելք, հ. III, Երևան, 2006, էջ 52:

յունների՝ Է. Նորդլինգերի տեսության համաձայն, 1980 թ. ռազմական հեղաշրջումը կարելի է բնութագրել որպես խնամակալ հեղաշրջում. զինվորականներն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը՝ հեղաշրջման պատճառները վերացնելու և իշխանությունը կրկին քաղաքական կուսակցություններին փոխանցելու նպատակով:

Այսպիսով, 1960-1970-ական թթ. Թուրքիայում բանակ-հասարակություն փոխհարաբերությունները, ըստ վերը նշված տեսության, կարելի է բնութագրել որպես ներթափանցող մոդել. բանակը Թուրքիայի քաղաքական կյանքում առանցքային նշանակություն ուներ, քաղաքականացված էր, ակտիվորեն մասնակցում էր երկրի քաղաքական անցուդարձին և հանդես էր գալիս որպես երկրի պաշտոնական գաղափարախոսության՝ քեմալիզմի հիմնական պաշտպան:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1970-ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԵՐԻՆ

1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից հետո երկրի ղեկավարումն իր ձեռքը վերցրած Ազգային միասնության կոմիտեն ձեռնամուխ եղավ նոր սահմանադրության մշակման աշխատանքներին: Նոր սահմանադրության հեղինակների գլխավոր խնդիրն էր օրենսդրական պայմաններ ստեղծել՝ Դեմոկրատական կուսակցության իշխանության օրոք (1950-1960 թթ.) տեղի ունեցած չարաշահումները և բռնատիրական երևույթներն օրենքներով բացառելու համար: Արդյունքում՝ ծնունդ առավ մի փաստաթուղթ, որն էապես տարբերվում էր 1924 թ. սահմանադրությունից, և գլխավոր սկզբունքային տարբերությունն արտահայտվում էր ժողովրդավարական ազատությունների ընդլայնմամբ: Մասնագիտական գրականության մեջ գերիշխող է այն տեսակետը, որ 1961 թ. սահմանադրությունը հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում գործած ամենաժողովրդավարական և ազատական սահմանադրությունն է եղել: Թուրքիայի համար աննախադեպ ազատություններ հռչակող սահմանադրությունը նոր իրավիճակ ստեղծեց երկրի ներքաղաքական կյանքում[97]. ի հայտ եկան տարբեր գա-

97 Նոր սահմանադրությունն իրավունք էր տալիս հիմնել քաղաքական կուսակցություններ՝ առանց իշխանությունների նախնական թույլտվության (հոդված 57): Աշխատավորներն իրավունք էին ստանում առանց իշխանությունների նախնական թույլտվության արհմիություններ ձևավորել (հոդված 46): Այս մասին առավել մանրամասն տե՛ս 1961 Anayasası, Osmanlı ve Türk Anayasaları, İstanbul, 1980.

ղափարախոսություններ կրող կուսակցություններ և տարատեսակ կազմակերպություններ, այդ թվում՝ ազգայնամոլական, իսլամական, սոցիալիստական: 1960-ական թթ. վերջերից երկրում սկսեցին գործել ծայրահեղական երիտասարդական կազմակերպություններ՝ թե՛ աջ և թե՛ ձախ ուղղվածության, որոնք ահաբեկչական գործունեություն ծավալեցին: Մեծ թափ ստացավ արհմիութենական շարժումը, որի կազմակերպիչներն էին Թյուրք-ԻՇ (Türk İş) և ԴԻՍԿ (Devrimci İşçi Sendikalar Konfederasyonu - Հեղափոխական աշխատավորական արհմիությունների համադաշնություն) արհմիությունների համադաշնությունները:

Եթե 1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո երկրում առաջ եկան ժողովրդավարական ազատություններ կամ դրանց հնարավորություն, ապա արդեն 1971 թ. զինվորականների «միջամտությունը» միտված էր սահմանափակել այդ ազատությունները, որոնք, ըստ բարձրաստիճան զինվորականության, նպաստում էին որոշ ուժերի «քայքայիչ գործունեությանը»: 1971-73 թթ. ընկած ժամանակահատվածում ընդհանուր առմամբ փոփոխության ենթարկվեց սահմանադրության մոտ 30%-ը (այդ պատճառով որոշ հետազոտողներ անգամ օգտագործում են «1971 թ. սահմանադրություն» եզրը)[98]: Սահմանադրական փոփոխությունները նպատակաուղղված էին սահմանափակելու ժողովրդավարական իրավունքներն ու ազատությունները, ավելացնելու բանակի ազդեցության լծակները քաղաքական կյանքի վրա, ինչպես նաև վերահսկելի դարձնելու քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Սակայն, այնուամենայնիվ, Թուրքիայի սահմանադրության մեջ պահպանվեցին որոշ ժողովրդավարական ազատություններ, որոնց շրջանակներում էլ զարգացան քաղաքական գործընթացները 1970-ական թթ.:

98 Данилов В., Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия), Москва, 1985, стр. 180.

1973 թ. հոկտեմբերին Թուրքիայում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքներն ի դերև հանեցին հիմնական քաղաքական կուսակցությունների ակնկալիքները: Այսպես, 450 պատգամավորական տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝ Հանրապետական-ժողովրդական կուսակցությունը[99] (ՀԺԿ) ստացավ 185, Արդարություն կուսակցությունը[100] (ԱԿ)՝ 149, Ազգային փրկություն կուսակցությունը[101] (ԱՓԿ)՝ 48, Դեմոկրատական կուսակցությունը[102] (ԴԿ)՝ 45, Հանրապետական վստահություն կուսակցությունը[103] (ՀՎԿ)՝ 13, Ազգայնական շարժում կուսակցությունը[104] (ԱՇԿ)՝ 3 տեղ[105]: Ընտրությունների արդյունքում կուսակցություններից և ոչ մեկին չհաջողվեց ստանալ բավարար ձայներ՝ ինքնուրույն կառավարություն ձևավորելու համար, և Թուրքիայում սկսվեց կոալիցիաների ժամա-

---

99 Հանրապետական-ժողովրդական կուսակցությունում (Cumhuriyet Halk Partisi) 1970-ական թթ. սկզբներին լուրջ փոփոխություններ էին տեղի ունեցել: ՀԺԿ-ի ավելի քան երեսուն տարվա առաջնորդ Իսմեթ Ինյոնյուին փոխարինելու նպատակով նրիտասարդ Բյուլենթ Էջևիթն իր «վենտրոնից ձախ» ուղղությամբ:

100 Արդարություն կուսակցությունը (Adalet Partisi) աջ ուղղվածության կուսակցություն էր և արգելված Դեմոկրատական կուսակցության քաղաքական իրավահաջորդն էր հանդիսանում: Չնայած 1971 թ. զինվորական միջամտությունից հետո ԱԿ կառավարությունը հեռացվեց իշխանությունից, այնուամենայնիվ, ԱԿ-ն պահպանում էր իր մեծ ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում: ԱԿ-ը ղեկավարում էր Սուլեյման Դեմիրելը:

101 Ազգային փրկություն կուսակցությունը (Milli Selamet Partisi) մարտի 12-ի միջամտությունից հետո արգելված իսլամամետ Ազգային կարգի կուսակցության հիմքի վրա ստեղծված իսլամամետ կուսակցություն էր: ԱՓԿ-ի առաջնորդն էր Նեջմեթին Էրբաքանը:

102 Դեմոկրատական կուսակցությունը (Demokratik Parti) կազմավորվեց ԱԿ-ից բաժանված խմբի հիմքի վրա և հավակնում էր 1960 թ. արգելված Դեմոկրատական կուսակցության (Demokrat Parti) քաղաքական ժառանգորդը դառնալուն: ԴԿ-ի նախագահն էր Ֆարուկ Բոզքեյլին:

103 Հանրապետական վստահություն կուսակցությունը (Cumhuriyetçi Güven Partisi) հիմնադրվել է 1973 թ. ՀԺԿ-ի այն անդամների կողմից, որոնք դեմ էին ՀԺԿ-ի նոր՝ «վենտրոնից ձախ» ուղղությանը: ՀՎԿ-ն առաջնորդում էր Թուրհան Ֆեյզիոլլուն:

104 Ազգայնական շարժում կուսակցությունը (Milliyetçi Hareket Partisi) ազգայնամոլական, պանթյուրքիստական գաղափարա-քաղաքական ուղղվածություն ունեցող կուսակցություն էր: ԱՇԿ-ի առաջնորդն Ալփարսլան Թյուրքեշն էր:

105 20. Yüzyıl Ansiklopedisi, Cilt 4, İstanbul, 1990, s. 1007.

նակաշրջանը, որը դարձավ այդ տարիների քաղաքական գործընթացների կարևոր առանձնահատկություններից մեկը:

Խորհրդարանական ընտրություններից հետո երկարատև բանակցությունների արդյունքում 1974 թ. ՀԺԿ-ին հաջողվեց համաձայնության հասնել ԱՓԿ-ի հետ՝ համատեղ կոալիցիոն կառավարություն կազմելու հարցում: Բ. Էջևիթը նշում էր, որ ԱՓԿ-ն այն միակ քաղաքական ուժն էր, որի հետ համագործակցությունն ամենից քիչ անհարմարն էր ՀԺԿ-ի համար[106]: Պետք է նշել, որ ՀԺԿ-ԱՓԿ կոալիցիոն կառավարությունն ի սկզբանե դատապարտված էր անհաջողության, քանի որ, նախ՝ իսլամամետ և ձախ կենտրոնամետ կուսակցությունների դաշինքն առաջացրեց Թուրքիայի զինվորական շրջանակների[107] և արևմտյան դաշնակիցների դժգոհությունը: Բացի այդ, կարևորն այն էր, որ հենց իրենց՝ կոալիցիայի անդամ կուսակցությունների միջև գոյություն ունեին բազմաթիվ հակասություններ, որոնք ընդգծվեցին, երբ վարչապետ Էջևիթը, ի հաստատումն իր նախընտրական քարոզարշավի խոստումների, փորձում էր մեղմացնել քրեական օրենսգրքի 141-րդ և 142-րդ հոդվածներն ու համաներում շնորհել 1971-73 թթ. այդ հոդվածներով դատապարտված մոտ չորս հազար քաղբանտարկյալների[108]: Չնայած Բ. Էջևիթին հաջողվեց իրականացնել քաղբանտարկյալների համաներումը, բայց նրա կոալիցիոն դաշնակից ԱՓԿ-ն դեմ արտահայտվեց ՀԺԿ այդ նախաձեռնությանը[109]:

1974 թ. ամռանը Թուրքիայի ռազմական ագրեսիան Կիպրոսում, որի հետևանքով կղզու հյուսիսային հատվածն օկու-

106 Birand M. A., Bilâ H., Akar R., 12 Eylül: Türkiye'nin Miladı, İstanbul, 1999, s. 32-33.
107 Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, s. 43.
108 Քրեական օրենսգրքի 141-րդ և 142-րդ հոդվածները, որոնք արգելում էին երկրում հասարակական և սոցիալական կարգերի փոփոխությունն ու այդ փոփոխությանն ուղղված քարոզչությունը, հիմնականում օգտագործվում էին ձախակողմյան շարժումների դեմ: Դրանք չեղյալ հայտարարվեցին միայն 1991 թ.:
109 Данилов В., նշվ. աշխ., էջ 219:

պացվեց Թուրքիայի կողմից, ՀԺԿ-ի և ԱՓԿ-ի միջև նոր հակասություններ առաջացրեց. Ն. Էրբաքանը քննադատում էր Բ. Էջևիթին՝ ընդգծելով ամբողջ կղզին գրավելու անհրաժեշտությունը[110], իսկ վերջինս դեմ էր նման գործողություններին՝ նշելով, որ միջազգային հանրության առջև հնարավոր չի լինի հիմնավորել դա[111]: 1974 թ. սեպտեմբերին Բ. Էջևիթը, օգտվելով այն հանգամանքից, որ Կիպրոսի հյուսիսային հատվածի օկուպացիան նպաստել էր ՀԺԿ-ի վարկանիշի կտրուկ աճին, փորձեց ձերբազատվել անցանկալի գործընկերոջից և հրաժարական տվեց՝ վաղաժամկետ ընտրություններ անցկացնելու ակնկալիքով, որտեղ ՀԺԿ բացարձակ հաղթանակն անխուսափելի էր թվում: Կենտրոնից ձախ ուղղվածության կուսակցության նմանօրինակ ծրագրերն անհանգստացրին ոչ միայն աջ ուղղվածության կուսակցություններին, այլև լուրջ մտահոգություններ առաջացրին Թուրքիայի արևմտյան դաշնակիցների ու թուրքական բանակի վերնախավի շրջանում: Վերջիններիս «խրախուսմամբ» Ս. Դեմիրելին հաջողվեց իր շուրջը համախմբել խորհրդարանական որոշ ուժերի և ստանալ ձայների անհրաժեշտ քանակ՝ ԹԱՄԺ-ում մեծամասնություն ձևավորելու համար: Աջերի համախմբման գործում նշանակալի դերակատարություն ունեցավ նաև երկրի նախագահ Ֆահրի Քորություրքը: Նա կառավարություն կազմելու իրավունքը նախ տվեց Սադի Ըրմաքին, չնայած նախօրոք վստահ էր, որ վերջինիս կառավարությունը վստահության քվե չի ստանա խորհրդարանում: Այդ քայլը հնարավորություն տվեց ժամանակ շահել և այն օգտագործել աջակողմյան կուսակցությունների միջև ընդհանուր համաձայնության գալու համար: Այդ կապակցությամբ 1974-1983 թթ. Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Ա. Ռոդիոնովը գրում է, որ 1975 թ. մայիսին ԱՄՆ պետքարտուղար

110 Erbakan N., Milli Görüş, İstanbul, 1975, s. 358-375.
111 Karafakıoğlu Ö. K., 12th September 1980 Military Intervention within Framework of Civilian-Military Relations, İstanbul, 2004, p. 17.

Հ. Քիսինջերը Թուրքիա կատարած այցի ժամանակ երախտագիտություն է հայտնել Թուրքիայի նախագահին՝ աջակողմյան կոալիցիոն կառավարության ձևավորման գործում ունեցած դերակատարության համար[112]:

ԱԿ-ԱՓԿ-ԱՇԿ-ՀՎԿ աջակողմյան կուսակցությունների և անկախ պատգամավորների միավորմամբ ծնվեց Ազգայնական ճակատ (Milliyetçi Cephe, հետայսու՝ ԱՃ) կոալիցիոն կառավարությունը (31. 03. 1975-21. 06. 1977 թթ.)՝ վարչապետ Ս. Դեմիրելի, փոխվարչապետեր Ն. Էրբաքանի, Թ. Ֆեյզիօղլուի և Ա. Թյուրքեշի գլխավորությամբ: ԱՃ կոալիցիոն կառավարությունը, իր մեջ ունենալով ծայրահեղական տարրեր, ճգնաժամերի առաջացման խթան հանդիսացավ: Ինչպես իրավացիորեն նշում է Թահա Աքյոլը (ԱՇԿ ղեկավարության անդամ), ԱՃ-ն նպատակ չէր հետապնդում թուլացնել լարվածությունը երկրում, վերացնել սոցիալ-տնտեսական դժվարությունները, ԱՃ գլխավոր նպատակը ձախերի քաղաքական վերելքին խոչընդոտելն էր[113]: Հակակոմունիստական ալիքի վրա ձևավորված ԱՃ կառավարությունը նոր պայքար սկսեց ձախակողմյան շարժումների դեմ՝ ուժեղացնելով ճնշումները նրանց նկատմամբ[114]: ԱՃ վարած քաղաքականության հետևանքով խորանում էր երկրի բևեռացումն աջերի և ձախերի միջև, ինչն ի վերջո հանգեցրեց երկրում լայնածավալ ահաբեկչական ալիքի պոռթկմանը: 1970-ական թթ. վերջերին ահաբեկչությունը Թուրքիայում աննախադեպ ծավալների էր հասել, որի գլխավոր դերակատարներն էին աջ և ձախ ծայրահեղականները: Քաղաքագետ Հիքմեթ Օզդեմիրը նշում է, որ ԱՃ քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ արդեն «1976-ից երկիրը գտնվում էր քաղաքացիական պատերազմի իրավիճակում»[115]:

---

112 Родионов А., Турция - перекресток судеб. Воспоминания посла, Москва, 2006, стр. 34.
113 Karafakıoğlu Ö. K., նշվ. աշխ., էջ 18:
114 Birand M. A., Bilâ H., Akar R., նշվ. աշխ., էջ 49:
115 Özdemir H., Siyasal Tarihi (1960-1980). - Türkiye Tarihi, 4. Cilt, Çağdaş Türkiye 1908-1980, İstanbul, 2005, s. 275.

1977 թ. հունիսին Թուրքիայում արտահերթ խորհրդարանական ընտրություններ տեղի ունեցան, որոնց արդյունքում ՀԺԿ-ն, հավաքելով ձայների 41,4%-ը, ավելացրեց իր պատգամավորների քանակը՝ հասցնելով այն 213-ի: Խորհրդարանական ընտրություններում ՀԺԿ հաջողությանը զգալիորեն նպաստեց այն հանգամանքը, որ ձախակողմյան կազմակերպությունների մեծ մասը համախմբվեց և աջակցեց ՀԺԿ-ին՝ ընդդեմ իր մեջ ֆաշիստական տարրեր պարունակող ԱՃ կոալիցիայի անդամ կուսակցությունների: Հատկապես նշանակալի էր ԴԻՍԿ-ի օժանդակությունը, որը ձախակողմյան արհմիությունների խոշորագույն համադաշնություն էր և նպաստում էր աշխատավորական շարժման քաղաքականացմանը[116]: ԴԻՍԿ-ն, իր կազմում ունենալով ավելի քան 500 հազար անդամ, ուժեղ ընդդիմություն էր ԱՃ կառավարությանը[117]:

ԱԿ-ը 1977 թ. ընտրություններում ստանալով քվեների 36,9%-ը՝ ավելացրեց իր պատգամավորների թիվը մինչև 189-ի, ինչը հիմնականում կատարվեց ի հաշիվ ԴԿ ձայների: Էրբաքանի կուսակցությունը, թեև կորցրեց պատգամավորական տեղերի ուղիղ կեսը, այնուամենայնիվ, 24 պատգամավորական մանդատով պահպանում էր իր որոշակի կշիռը երկրի հասարակական-քաղաքական կյանքում: 1977 թ. ընտրություններում ամենամեծ հաջողությունն արձանագրել էր ԱՇԿ-ն, որն ավելացրել էր իր պատգամավորների թիվը՝ հասցնելով այն 16-ի (նախկին 3-ի փոխարեն): Ընտրություններն ակնհայտորեն տանուլ տվեց Դեմոկրատական կուսակցությունը՝ ստանալով ընդամենը մեկ պատգամավորական մանդատ (նախկին 45-ի փոխարեն):

Ընտրություններից անմիջապես հետո նախագահ Քորություրքը Բ. Էջևիթին լիազորեց նոր կառավարություն կազմել:

---

116 Турецкая Республика, справочник, Москва, 2000, стр. 75.
117 Karafakıoğlu Ö. K., նշվ. աշխ., էջ, 21:

Էջևիթի փոքրամասնության կառավարությունը, սակայն, գործեց ընդամենը մեկ ամիս, և ԹԱՄԺ-ում վստահության քվե չստանալով՝ հրաժարական տվեց, որից հետո Դեմիրելի ղեկավարությամբ ստեղծվեց Ազգայնական ճակատի երկրորդ կոալիցիոն կառավարությունը (21. 07. 1977-05. 01. 1978 թթ.)՝ ԱԿ-ԱՓԿ-ԱՇԿ մասնակցությամբ: ԱՃ երկրորդ կառավարությունը, գոյատևելով ընդամենը 5 ամիս և ընդհանուր առմամբ շարունակեց առաջինի գործունեությունը:

1977 թ. վերջերին Բ. Էջևիթը գաղտնի պայմանավորվածություն ձեռք բերեց ԱԿ 13 պատգամավորների հետ, որոնք, համաձայն Էջևիթի ծրագրի, պետք է դուրս գային ԱԿ-ից և միանալով ՀԺԿ-ին՝ անվստահություն հայտնեին կառավարությանը: Նրանց այդ քայլի համար բոլոր 13 պատգամավորներին Էջևիթը խոստացել էր նախարարի պաշտոն նոր կառավարությունում[118]: Ազգային ժողովի 450 պատգամավորական տեղերից 213-ը զբաղեցնում էր ՀԺԿ-ն, և ընդամենը 13 ձայնը Էջևիթին հնարավորություն կտար ձեռք բերել մեծամասնություն: Ի վերջո, Էջևիթի ծրագիրը հաջողությամբ պսակվեց, և 1977 թ. դեկտեմբերին հանրապետական Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ԹԱՄԺ-ը անվստահություն հայտնեց կառավարությանը, և Ազգայնական ճակատ կոալիցիոն կառավարությունը դադարեցրեց գործունեությունը: 1978 թ. հունվարին Բ. Էջևիթը նախկին ԱԿ-ականների հետ միասին ձևավորեց իր երրորդ կառավարությունը (05. 01. 1978-16. 10. 1979 թթ.), որն իր գործունեության հենց սկզբից լուրջ դժվարությունների առաջ կանգնեց:

1970-ական թթ. Թուրքիայի առաջ տնտեսական լուրջ դժվարություններ ծառացան, որոնք շուտով վերաճեցին խորությամբ աննախադեպ տնտեսական ճգնաժամի[119]: Թուրքիան իր աճող

118 Birand M. A., Bilâ H., Akar R., նշված աշխ., էջ 79-81:
119 Моисеев П., Турция: программа экономической стабилизации: 1980 г. - Турция – история и современность. Москва, 1988, стр. 211.

արտաքին պարտքով, արտադրության կտրուկ անկումով, դրամի արժեզրկմամբ կանգնած էր սնանկության եզրին: Էջևիթի կառավարության գլխավոր խնդիրներից մեկն էր համաձայնության գալ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ և վերջինիս կողմից ֆինանսական անհրաժեշտ օգնությունն ստանալ: ԱՄՀ առաջնային պայմանն ազատ շուկա ստեղծելն էր և, ըստ էության, «խառը տնտեսության» սկզբունքից հրաժարվելը: 1979 թ. հուլիսին Էջևիթի կառավարությանը վերջապես հաջողվեց համաձայնության հասնել ԱՄՀ-ի հետ, որով հետաձգվում էին պարտքերի վճարումները և մեծածավալ վարկ էր տրամադրվում Թուրքիային: Այնուամենայնիվ, Էջևիթի կառավարությունը չկարողացավ օգտվել դրանից[120], քանզի 1979 թ. հոկտեմբերին խորհրդարանի մասնակի ընտրությունների ժամանակ ՀԺԿ-ն պարտություն կրեց և Բ. Էջևիթի կառավարությունը հրաժարական տվեց[121]: 1979 թ. վերջին կազմավորվեց Ս. Դեմիրելի 4-րդ կառավարությունը (12. 11. 1979-12. 09. 1980 թթ.)[122]:

Ակնհայտ էր, որ Թուրքիայում օրըստօրե խորանում էին ճգնաժամային երևույթները՝ ահաբեկչությունը, սոցիալ-տնտեսական դժվարությունները, բևեռացումը հասարակության մեջ, իսկ երկրի քաղաքական ուժերը զբաղված էին ներքաղաքական պայքարով և վճռական քայլեր չէին ձեռնարկում երկրում էական փոփոխություններ կատարելու համար: 1973-ից մինչև 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումն ընկած ժամանակահատվածում Թուրքիայում գործել է 8 կառավարություն, որոնցից յուրաքանչյուրի կարճաժամկետ գոյությունը նվազեցնում էր

120 Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Москва, 1991, стр. 21-22.

121 Данилов В., Аширмухамедов А., Частичные выборы и особенности политической обстановки в Турции. – Восток и Современность, Научно-информационный бюллетень, Москва, 1979, 7 (11), стр. 101-111.

122 Տե՛ս ԹԱՄԺ-ի պաշտոնական մեջ կայքում, http://www.tbmm.gov.tr/hukumetler/hukumetler.htm

նրանց արդյունավետությունը և ներքաղաքական ճգնաժամների պատճառ հանդիսանում:

Արդեն 1979 թ. դեկտեմբերի 27-ին Գլխավոր շտաբի պետ Քենան Էվրենը նախագահ Ֆ. Քորություրքին հանձնեց նախազգուշացնող նամակ, որով զինվորականությունն իր մտահոգությունն էր հայտնում երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ և կոչ անում իշխանություններին կատարել իրենց պարտականությունները[123]: Հաջորդ մի քանի օրերի ընթացքում Ք. Էվրենը, նախագահ Քորություրքի միջնորդությամբ, հանդիպումներ ունեցավ քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ, որոնց ժամանակ հայտնեց զինվորականության և երկրի խոշոր ձեռնարկատերերի անհանգստությունը երկրում տիրող քաղաքական ու տնտեսական անկայունության վերաբերյալ՝ հորդորելով կտրուկ և կոնկրետ քայլեր ձեռնարկել երկիրը ճգնաժամից դուրս բերելու ուղղությամբ[124]:

1980 թ. հունվարի 24-ին Ս. Դեմիրելի կառավարությունն ընդունեց «տնտեսության կայունացման» ծրագիրը, որը նախատեսում էր լայնածավալ տնտեսական բարեփոխումների իրականացում: Բարեփոխումների գլխավոր նպատակն էր ստեղծել «ազատ շուկա»՝ նվազեցնելով պետության դերը տնտեսության մեջ, բազմաթիվ արտոնություններ վերապահել մասնավոր սեկտորին, նպաստավոր պայմաններ ապահովել օտարերկրյա ներդրողների համար, վերջ դնել լիրայի արժեզրկմանը, լճացմանը և այլն[125]: «Հունվարի 24-ի» ծրագրի հիմնական սկզբունք-

---

123 Türk Silahlı Kuvvetleri'nin Görüşü – 27 Aralık 1979 (Uyarı Mektubu) - Alatlı E, Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, İstanbul, 2004, s. 456-457.

124 Kenan Evren'in Anıları, İstanbul, 1990, s. 332-345.

125 Rivlin P., Two Middle Eastern Inflations: Israel and Turkey 1980-2001. - British Journal for Middle Eastern Studies (2003), 30 (2), 211-235; Sömnez M., Türkiye Ekonomisinde Bunalım. 24 Ocak Kararları ve Sonrası, İstanbul, 1982, s. 45-49; Altan M., Darbelerin Ekonomisi, İstanbul, 1990, s. 126-139; Çölaşan E., 24 Ocak Bir Dönemin Perde Arkası, İstanbul, 1983, s. 57-73; Kepenek Y., Türkiye Ekonomisi, Ankara, 1990, s. 187-207; Моисеев П., Турция - программа

ները ձևակերպվել էին վարչապետի տնտեսական գծով խորհրդական Թուրգութ Օզալի կողմից[126]՝ ԹՅՈՒՍԻԱԴ-ի (TÜSİAD՝ Թուրք ձեռնարկատերերի և գործարարների միություն) և արևմտյան ֆինանսական կազմակերպությունների, մասնավորապես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի որոշիչ աջակցությամբ: Հարկ է նշել, որ արևմտյան երկրները մեծապես կարևորում էին այդ բարեփոխումների իրականացումը: Սակայն Թուրքիայում բացակայում էր անհրաժեշտ ներքաղաքական կայունությունը նմանատիպ բարեփոխումներ իրականացնելու համար:

Այսպիսով, 1980 թ. Թուրքիայում ստեղծվել էր հետևյալ պատկերը.

Երկիրը բաժանվել էր երկու բևեռի՝ աջերի և ձախերի: Ահաբեկչությունն աննախադեպ ծավալներ էր ընդունել, և 1980 թ. առաջին ութ ամիսների ընթացքում, մինչև զինվորական հեղաշրջումը, Թուրքիայում ահաբեկչության զոհ էր դարձել մոտ 2000 մարդ: Հաճախակի էին դարձել նաև բախումները դավանանքային՝ սուննի և ալևի համայնքների միջև: Թուրքիայում առկա էին հասունացող քաղաքացիական պատերազմին բնորոշ բոլոր նախադրյալները, այդ իսկ պատճառով որոշ հետազոտողներ նշում են, որ երկիրը գտնվում էր չհայտարարված քաղաքացիական պատերազմի վիճակում:

Թուրքական լիրայի ահագնացող արժեզրկմանը զուգընթաց՝ երկրում բարձրանում էին առաջին անհրաժեշտության ապրանքների գները: Գյուղաբնակների զանգվածային արտահոսքը դեպի մեծ քաղաքներ նորանոր դժվարությունների պատճառ էր դառնում, որի հետևանքով քաղաքների բնակչության մի

экономической стабилизации: 1980 г., Турция – история и современность, сборник статей, Москва, 1988, стр. 211-221.

126 Թ. Օզալը վարչապետի խորհրդական էր նշանակվել գնդապետների դեկտեմբերի 27-ի «նախազգուշացնող նամակից» հետո: Տե՛ս Запорожец В., Колесников А., Турция: Общество и армия, том I, Ленинград, 1983, стр. 254.

ստվար զանգված բնակվում էր այսպես կոչված «գեջեքոնդուներում»[127]:

Թուրքիան գտնվում էր էներգետիկ ճգնաժամում, որը պայմանավորված էր, մի կողմից, միջազգային շուկայում էներգակիրների գների թանկացմամբ, մյուս կողմից էլ՝ երկրի արտաքին պարտքերի պատճառով Իրաքը դադարեցրել էր նավթի, իսկ Բուլղարիան՝ էլեկտրաէներգիայի մատակարարումը: Էներգետիկ ճգնաժամն իր հերթին էր խոչընդոտում արդյունաբերության զարգացմանը[128]: Բնակչությանը մատակարարվող էլեկտրաէներգիան օրական ընդամենը 11 ժամ էր, դժվարացել էր բենզին և նավթ ձեռք բերելը[129]:

Աստիճանաբար ավելի զանգվածային բնույթ էր ստանում արհմիությունների կողմից կազմակերպվող գործադուլային շարժումը: 1980 թ. հունվարին թուրքական «Ջումհուրիյեթ» թերթը գրում էր, որ գործադուլների պատճառով գործարանների ընդամենը 20%-ն էր աշխատում[130], ինչը կաթվածահար էր արել ամբողջ տնտեսությունը:

1980 թ. գարնանը Թուրքիայի քաղաքական համակարգը նոր՝ նախագահական ընտրությունների ճգնաժամի առջև էր: 1980 թ. մարտին լրացավ նախագահ Քորություրքի պաշտոնավարման ժամկետը, և մարտի 22-ին մեկնարկեցին նախագահական ընտրությունները: Թուրքական սահմանադրության համաձայն՝ երկրի նախագահն ընտրվում էր Ազգային ժողովի կողմից՝ ձայ-

127 Գեջեքոնդու էին անվանվում մեկ գիշերվա ընթացքում կառուցված հյուղակները, որոնք, որպես կանոն, իշխանությունները չէին քանդում՝ հենվելով որոշակի ավանդույթներին և գրված ու չգրված որոշակի օրենքներին:

128 Старченков Г., Энергетика Турции в годы экономического кризиса, Турция. История, экономика, политика. Сборник статей, Москва, 1984, стр. 176-189.

129 Birand M. A., Bilâ H., Akar R., նշվ. աշխ., էջ 61:

130 Cumhuriyet, 09, 01, 1980.

ների երկու երրորդի հարաբերակցությամբ[131], իսկ ԹԱՄԺ-ում քաղաքական ուժերի հարաբերակցությունն այնպիսին էր, որ առանց ՀԺԿ և ԱԿ փոխհամաձայնության նախագահ ընտրելու համար անհրաժեշտ ձայների քանակը չէր ապահովվում: Այդ երկու կուսակցությունների միջև գոյություն ունեցող անհանդուրժողականության մթնոլորտում նախագահի ընտրությունն ի սկզբանե դատապարտված էր անհաջողության: Նախագահական ընտրությունների ընթացքում ՀԺԿ հիմնական թեկնածուն Մուհսին Բաթուրն էր, իսկ ԱԿ-ն պաշտպանում էր Ֆ. Թյուրունի թեկնածությունը, սակայն բազմաթիվ անարդյունք փուլերից հետո պատգամավորներն իրենք արդեն դադարեցին մասնակցել ընտրություններին՝ նախապես վստահ լինելով դրանց անարդյունավետության մեջ: Նախագահական ընտրությունները մտան փակուղի, որի հետևանքով ուղղակի կաթվածահար էր լինում երկրի հասարակական-քաղաքական կյանքը: Ավելի քան 100 փուլ շարունակվող նախագահական ընտրություններն այդպես էլ չհասան իրենց հանգուցալուծմանը: Հետագայում արդեն, 1980 թ. հեղաշրջումից հետո, Քենան Էվրենը նշեց, որ «աշխարհի ոչ մի երկրում նախագահի պաշտոնին և ընտրությանն այդքան անլուրջ չեն վերաբերվել, և չի ծախսվել այդչափ դատարկ ժամանակ»[132]:

Ստեղծված իրավիճակում Թուրքիայի քաղաքական համակարգն ի զորու չէր երկիրն ինքնուրույն դուրս բերել ճգնաժամից, և նույնիսկ քաղաքական գործիչներն էին նշում այդ համակարգի սնանկության ու ճգնաժամից դուրս գալու անկարողության մասին: 1980 թ. օգոստոսին իտալական «Ռեպուբլիկա» թերթին տված հարցազրույցում Բ. Էջևիթը խոստովանում է, որ քաղա-

131 1961 Anayasası, Osmanlı ve Türk Anayasaları. İstanbul, 1980, s. 97.
132 Evren'in Radyo-Televizyon Konuşması, (12 Eylül 1980). - T.C. Devlet Başkanı Orgeneral Kenan Evren'in Söylev ve Demeçleri, Ankara, 1981, s. 10-13.

քական կուսակցություններն անկարող են հաղթահարել ստեղծված ճգնաժամը[133]: Այստեղ տեղին է հիշատակել Թուրքիայի Հանրապետության երկրորդ նախագահ Իսմեթ Ինյոնյուի խոսքերը. «Թուրքիան ժամանակ առ ժամանակ վերանորոգման ժամանակաշրջան է մտնում. այդ ժամանակ բանակը հեղաշրջում է իրականացնում, մի որոշ ժամանակ մնում և հեռանում է: Հետո մենք՝ քաղաքական գործիչներս, գալիս և գործերը կրկին փչացնում ենք, այդ ժամանակ բանակը կրկին հեղաշրջում է իրականացնում»[134]:

133 La Repubblica, 24, 08, 1980.
134 Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, s. 13.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿՐՈՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1960-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Իսլամական շարժումները 1960-1970-ական թթ.

1980 թ. ռազմական հեղաշրջման համար անհրաժեշտ նախադրյալների հասունացումը պայմանավորված էր նաև իսլամական շարժումների ընդլայնմամբ: Թուրքիան թեև իր բնույթով հռչակված է որպես աշխարհիկ պետություն, այնուամենայնիվ, կրոնի ազդեցությունը նրա հասարակական-քաղաքական կյանքում չափազանց մեծ է, և թուրքական պետության զարգացման տարբեր փուլերում կրոնի դերն ու նշանակությունը փոփոխվել են՝ կապված տարբեր հանգամանքների հետ:

1924 թ. մարտի 3-ին ԹԱՄԺ-ը լուծարեց խալիֆայությունը, կրոնն անջատեց պետությունից, արգելեց մեդրեսեները, ցրեց շարիաթի դատարանները: Հանրապետական Թուրքիայի իշխող գաղափարախոսության՝ քեմալիզմի առանցքային հիմնասյուներից դարձավ լայիցիզմի (աշխարհիկության) սկզբունքը, և քեմալականները դաժան հալածանքներ սկսեցին իսլամական շարժումների նկատմամբ՝ իսլամը դիտարկելով որպես ամենավտանգավոր ներքին սպառնալիք հանրապետական կարգերի համար:

Սակայն կրոնի հանդեպ իշխանությունների վարած քաղաքականությունը փոխվեց սկսած 1940-ական թթ. վերջերից[135]: Թուրքիայում բազմակուսակցական քաղաքական համակարգի հաստատվելուց հետո կուսակցությունները սկսեցին կրոնն օգ-

135 Heper M., Islam, Polity and Society in Turkey: A Middle Eastern Perspective. - The Middle East Journal, 1981, Vol. 35, N. 3, p. 345-363.

տագործել զանգվածների վրա ազդելու և կրոնական տրամադրություններ ունեցող ընտրողներին իրենց կողմը ներգրավելու նպատակով: Արդեն 1950 թ. երկրի ղեկը 27 տարի իր ձեռքում պահած ՀԺԿ-ին փոխարինելու եկավ Դեմոկրատական կուսակցությունը, որի ղեկավարման տարիներին կրոնական շարժումները բազմաթիվ արտոնություններ ստացան. սկզբնական և միջնակարգ դպրոցներում պարտադիր կրոնի դասեր մտցվեցին, բացվեցին իսլամական բարձրագույն կրթական հաստատությունները, երկրի ամբողջ տարածքում սկսվեց մզկիթների լայնածավալ շինարարություն[136] և այլն: ԴԿ իշխանության տարիներին ակտիվացան նաև կրոնական գաղտնի միաբանությունները և եղբայրությունները, որոնք հանդես էին գալիս երկրի աշխարհիկ կարգերի տապալման և իսլամական իշխանության հաստատման դիրքերից: Դեմոկրատների իշխանության տարիներին կրոնը վերելք էր ապրում, ինչը միևնույն ժամանակ վկայում էր այն մասին, որ քեմալականությունը չէր կարողացել շատ խոր արմատներ գցել հասարակության մեջ:

Կրոնի հանդեպ իշխանությունների քաղաքականության փոփոխությունը պայմանավորված էր ևս մեկ, մեր կարծիքով՝ ոչ պակաս կարևոր հանգամանքով՝ «կոմունիստական սպառնալիքի» ի հայտ գալով: Թուրքիայում կոմունիստական շարժման ի հայտ գալով՝ իսլամական շարժումները, որոնք երկար տարիներ դիտվում էին որպես հանրապետական կարգերի գլխավոր սպառնալիք, իրենց այդ դերը զիջեցին ձախակողմյան շարժումներին: Թուրքիայի իշխանությունները, ոչ առանց արևմտյան դաշնակիցների աջակցության, սկսեցին կրոնն օգտագործել որպես զենք կոմունիստական շարժման դեմ պայքարում[137]: Դեռ

136 Епифанов А., Исламская религия как орудие политической борьбы турецкой буржуазии в республиканский период, Тбилиси, 1981, стр. 8-9.
137 Celik O., Turkey and the Fate of Political Islam, The United States and Turkey: Allies in Need, p. 65.

1947 թ. ՀԺԿ 8-րդ ընդհանուր համաժողովի ժամանակ այդ կուսակցության ծայրահեղ աջ թևը ներկայացնող Հ. Թանրըովերը հանդես եկավ ելույթով, որում իսլամին արտոնություններ տալու անհրաժեշտությունը հիմնավորում էր կոմունիստական վտանգի ահագնացումով[138]: Այդ գործընթացն ավելի խորացավ դեմոկրատների իշխանության գալուց հետո, և կրոնը որպես հակակոմունիստական զենք սկսեց օգտագործվել արդեն դեմոկրատների իշխանության տարիներին (1950-1960 թթ.)[139]:

1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո թեև զինվորականները հայտարարում էին քեմալիզմի սկզբունքներին վերադառնալու անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ, կրոնի հանդեպ նրանց վարած քաղաքականությունը բավականաչափ խիստ և հետևողական չէր: Հեղաշրջումից հետո արգելված ԴԿ քաղաքական ժառանգորդը հանդիսացող Արդարություն կուսակցությունը շարունակեց ԴԿ-ի՝ կրոնի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը:

1960-ական թվականներին արդեն, պայմանավորված երկրի արագ արդյունաբերականացմամբ, միջազգային տնտեսական զարգացումներով, սոցիալական տեղաշարժերով և ձախակողմյան ուժերի քաղաքական աշխուժացմամբ, տեղի ունեցավ իսլամի քաղաքականացում[140], և այդ իրողություններով էր պայմանավորված Թուրքիայի քաղաքական թատերաբեմում իսլամական կուսակցության ի հայտ գալը: 1970 թ. Նեջմեթթին Էրբաքանը[141], Նաքշբենդի կրոնական միաբանության առաջնորդ Մեհմեթ Ջահիթ Քոթքուի որոշիչ աջակցությամբ[142], հիմնեց Ազգային

138 Кондакчян Р., Турция: внутренняя политика и ислам, Ереван, 1983, стр. 93-95.
139 Նույն տեղում, էջ 114:
140 Էսպոզիտո Ջ., Իսլամական սպառնալիք. առասպե՞լ, թե՞ իրականություն, Երևան, 2003, էջ 227:
141 Ն. Էրբաքանի կենսագրությունը մանրամասն տե՛ս, Yalçın S., Hangi Erbakan, Ankara, 1995.
142 Yavuz H., Political Islam and the Welfare (Refah) Party in Turkey. - Comparative Politics, Vol.

կարգի կուսակցությունը, որը, սակայն, երկար կյանք չունեցավ: Շուտով՝ 1971 թ. մարտի 12-ի զինվորական միջամտությունից հետո, ի թիվս մի շարք այլ քաղաքական կուսակցությունների, մայիսի 20-ին սահմանադրական դատարանն արգելեց ԱԿԿ գործունեությունը՝ որակելով այն որպես հակասահմանադրական[143]: 1972 թ. հոկտեմբերին ԱԿԿ նախկին ղեկավարները՝ Ն. Էրբաքանի գլխավորությամբ, հիմնադրեցին Ազգային փրկություն կուսակցությունը, որի ծրագրում լայիցիզմի սկզբունքի ուղղակի մերժում չկար, սակայն դրա 6-րդ բաժնում այն ենթարկվում էր բավական խիստ քննադատության[144]: Բացի այդ, ԱՓԿ ղեկավարության կողմից քննադատության էին ենթարկվում երկրի քաղաքական ուժերը և նրանց վարած թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունը[145]: Արտաքին քաղաքականության ընագավառում Էրբաքանը և նրա կուսակիցները նշում էին, որ Թուրքիան պիտի իր հայացքն Արևմուտքից ուղղի դեպի Արևելք[146]:

1973 թ. հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններում ԱՓԿ-ն, ստանալով քվեների 11,8%-ը (48 պատգամավորական մանդատ), երրորդն էր ՀԺԿ-ից և ԱԿ-ից հետո[147]: Թուրքիայում երկու խոշորագույն կուսակցությունների՝ ԱԿ-ի և ՀԺԿ-ի միջև եղած տարաձայնություններն ու անհանդուրժողականության մթնոլորտը գործնականում անհնար էին դարձնում նրանց միջև քաղաքական դաշինքը, և այդ իրողություններում

30, No. 1, Oct., 1977, p. 66.

143 Anayasa Mahkemesi, (siyasi parti-kapatma) «E.S.: 1971/1; K.S.: 1971/1; K.G.: 20.05.1971», Resmi Gazete, 14072 (14, 01, 1972).

144 Киреев Н., Турция между западом и востоком. - Ближний Восток и современность, Москва, 1996, стр. 106-169.

145 Фадеева И., Ислам и культурная политика правящих кругов Турции 60-80-х годов XX в. – Ислам и социальные структуры стран Ближнего и Среднего Востока, Москва, 1990, стр. 197-200.

146 Karafakıoğlu Ö. K., նշված աշխ., էջ 19.

147 Toprak B., A Secular Democracy in the Muslim World: The Turkish Model. – Modernization, Democracy, and Islam, Edited by Shireen T. Hanter and Huma Malik, Center for Strategic and International Studies, Washington, 2005, p. 287.

ԱՓԿ-ն վճռորոշ դեր ունեցավ կոալիցիոն կառավարություն կազմավորելու հարցում: 1974 թ., երկար բանակցություններից հետո, Էրբաքանն ի վերջո ընդունեց Էջևիթի առաջարկությունը, և կազմավորվեց ՀԺԿ-ԱՓԿ կոալիցիոն կառավարությունը, որտեղ Էրբաքանը, ինչպես արդեն նշվել է, զբաղեցնում էր փոխվարչապետի պաշտոնը: ՀԺԿ-ԱՓԿ կոալիցիան աննախադեպ երևույթ էր Թուրքիայի պատմության մեջ. Աթաթյուրքի հիմնած կուսակցությունը՝ ՀԺԿ-ն, որի իշխանության օրոք դաժանորեն ճնշվում էին կրոնական շարժումները, այժմ կոալիցիոն կառավարություն էր կազմում իսլամամետ կուսակցության հետ:

1973-80 թթ. Էրբաքանի կուսակցության անդամներն ու համակիրներն ընդարձակում էին իրենց ազդեցության շրջանակը՝ տեղեր զբաղեցնելով խորհրդարանում, վարչական մարմիններում, կրթական հաստատություններում, գործարար աշխարհում[148]: ԱՓԿ-ն հետևողականորեն ընդլայնում էր կուսակցության շարքերը՝ ընդգրկելով մեծ թվով երիտասարդների, որոնք հիմնադրեցին «Akıncılar» (Ասպատակողներ կամ Հարձակվողներ) կոչվող երիտասարդական կառույցը, որն էլ իր հերթին երկրի տարբեր հատվածներում ստեղծեց մոտ 600 մասնաճյուղ[149]: Չնայած 1977 թ. խորհրդարանական ընտրություններում ԱՓԿ ստացած քվեների քանակը (8.5%՝ 24 պատգամավոր) նվազել էր 1973 թ. ընտրությունների համեմատ, սակայն այն դեռևս շարունակում էր հզոր ուժ ներկայացնել: 1970-ական թթ. վերջերին ԱՓԿ-ն, օգտվելով երկրում տիրող քաոսային իրավիճակից, սկսեց ավելի բացահայտ կրոնամետ քաղաքականություն վարել: 1977-1980 թթ. ընկած ժամանակահատվածում ԱՓԿ-ն կազ-

148 Էսպոզիտո Ջ., նշվ. աշխ., էջ 229:

149 Տեր-Մաթևոսյան Վ., Նեջմեթթին Էրբաքանի քաղաքական թեմելը և «Ազգային փրկություն» կուսակցության գործունեությունը Թուրքիայում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXV), Երևան, 2006, էջ 185:

մակերպել է մոտ 30 հազար հավաք և ցույց[150]: Այդ կապակցությամբ թուրքագետ-պատմաբան Վ. Տեր-Մաթևոսյանը նշում է, որ եթե 1973 թ. երկրի հիմնական օրենքին չհակասելու նպատակով ԱՓԿ-ն խուսափում էր անգամ «շարիաթ» բառի օգտագործումից, ապա 1979-80 թթ. երկրի տարբեր շրջաններում անցկացրած ցույցերի, հանդիպումների ժամանակ Էրբաքանի կողմնակիցները բացահայտորեն կողմ էին արտահայտվում իրանյան կամ պակիստանյան տարբերակների կրկնությանը և «շարիաթի վրա հիմնված համայնքի» կառուցման գաղափարին[151]: Հատկանշական է 1980 թ. սեպտեմբերի 6-ին Քոնյայում կազմակերպված ցույցը, որին մասնակցել է մոտ 80 հազար մարդ, և որի ընթացքում բացահայտորեն հնչել են խալիֆայության վերականգնման անհրաժեշտության կոչեր[152]:

Քննարկվող ժամանակաշրջանում զանգվածների վրա ազդելու նպատակով իսլամական գործոնն օգտագործվում էր նաև այլ քաղաքական կուսակցությունների կողմից՝ ի դեմս ԱԿ-ի և Ազգայնական շարժում կուսակցության[153]: Դեռ 1965 թ., երբ խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԱԿ-ն եկավ իշխանության, վերջինիս ղեկավար Ս. Դեմիրելը, դառնալով Թուրքիայի վարչապետ, հայտարարեց, որ իր ղեկավարման տարիներին «բոլոր թուրքերն առանց որևէ խոչընդոտի կարող են հայտարարել, որ իրենք մուսուլման են»[154]: Իր իշխանության տարիներին ԱԿ-ն օժանդակություն էր ցուցաբերում իսլամական շարժումներին, ինչն ունենում էր տարբեր դրսևորումներ՝ Կրոնի գործերով վարչության ֆինանսավորման ավելացում,

150 Турецкая Республика: справочник, Баку, 1986, стр. 217.
151 Տեր-Մաթևոսյան Վ., նշվ. աշխ., էջ 184:
152 Financial Times, 29, 11, 1980.
153 Куртынова Л., Исламские и националистические элементы в идеологии руководства после военного переворота 1980 г. - Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, Москва, 1986, стр. 115-126.
154 Milliyet, 21, 12, 1968.

կրոնական ուսումնական հաստատությունների թվի մեծացում, տարբեր կրոնական եղբայրությունների և միաբանությունների հետ սերտ համագործակցություն[155] և այլն: 1980 թ. թուրքական «Ջումհուրիյեթ» թերթը նշում էր, որ երկրում բոլոր կրոնական շարժումները գտնվում են ԱԿ հովանու ներքո[156]:

Ազգայնական շարժում կուսակցությունը, թեև իր ձևավորման սկզբնական փուլում ուներ դասական պանթյուրքիստական բնույթ, արդեն 1960-ական թթ. վերջերից սկսեց կրոնն օգտագործել զանգվածների վրա ազդելու համար, գուցե նաև դրանով հակակոմունիստական իր պայքարն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Կուսակցության գաղափարախոսության մեջ կրոնական տարրերի ընդգրկումը պատճառ հանդիսացավ, որպեսզի 1940-50-ական թթ. պանթյուրքիստական շարժման գաղափարախոս, ԱՇԿ հիմնադիրներից Նիհալ Աթսըզը հեռանա ԱՇԿ-ից:

1970-ական թթ. Թուրքիայում լայն գործունեություն էին իրականացնում կրոնական եղբայրությունները. մասնավորապես, մեծ ազդեցություն ունեին Սուլեյմանջը, Նաքշբենդի, Նուրջու, Թիջանի և Բեքթաշի գաղտնի եղբայրությունները: Վայելելով ԱԿ և ԱՓԿ աջակցությունը՝ կրոնական միաբանություններն ընդլայնեցին իրենց ազդեցության շրջանակները և վերաճեցին հզոր ուժի:

1970-ական թթ. վերջերին Թուրքիայում խորանում էր լարվածությունը սուննիների և ալևիների համայնքների միջև, ինչը երբեմն արտահայտվում էր արյունալի բախումների տեսքով: 1978 թ. դեկտեմբերին Քահրամանմարաշ քաղաքում, ազգայնամոլական ուժերի սադրիչ գործողությունների հետևանքով, բա-

155 Հատկապես սերտ էին ԱԿ-ի կապերը 1970-ական թթ. Թուրքիայում մեծ ազդեցություն ունեցող Սուլեյմանջը գաղտնի միաբանության հետ: Այդ է վկայում նաև այն հանգամանքը, որ Սուլեյմանջը միաբանության ղեկավար Քեմալ Քաչարը պատգամավոր էր ԱԿ-ի կողմից;
156 Cumhuriyet, 05, 08, 1980.

խում սկսվեց քաղաքի սուննի և ալևի բնակիչների միջև, զոհվեց ավելի քան 100, վիրավորվեց 1000 մարդ[157]: Քահրամանմարաշի դեպքը, որը հանրապետական Թուրքիայի պատմության մեջ ամենամեծ բախումն էր սուննիների և ալևիների միջև, մեծ անհանգստություն առաջացրեց բանակի վերնախավում, որից հետո Թուրքիայի տարբեր վիլայեթներում ռազմական դրություն մտցվեց: 1980 թ. հուլիսին սուննիների և ալևիների միջև նմանատիպ բախում տեղի ունեցավ նաև Չորումում խլելով 23 մարդկային կյանք[158]:

Իրանում իսլամական հեղափոխությունը և նրա հնարավոր արտահանման սպառնալիքը ստիպեցին Թուրքիայի արևմտյան դաշնակիցներին և թուրքական բարձրաստիճան զինվորականությանը նորովի նայել մեծ թափ հավաքած իսլամական շարժումներին: Իսլամամետ ԱՓԿ գործունեության վերելքը, ինչպես նաև լայն տարածում ստացած տեղեկություններն այն մասին, որ Թուրքիայում գործում էին մի շարք գաղտնի կազմակերպություններ, որոնց նպատակն էր աշխարհիկ հանրապետական կարգի տապալումը և շարիաթի հաստատումը, ավելի իրատեսական էին դարձնում իրանական հեղափոխական ալիքի հնարավոր արտահանման մտավախությունները[159]: Եվ այդ իրավիճակում թուրքական իշխանությունների հավաստիացումներն այն մասին, որ «իսլամական հեղափոխությունը չի սպառնում Թուրքիային»[160], որ «մոլլաները Թուրքիայում վտանգ չեն ներկայացնում»[161], բնականաբար, չէին կարող բավարարել Թուրքիայի արևմտյան դաշնակիցներին, հատկապես, երբ իրանա-

157 Arcayürek C., Demokrasinin Sonbaharı, 1977-1978, Ankara, 1985, s. 550.
158 Alatlı E., նշվ. աշխ., էջ 584:
159 Դումանյան Ա., Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ, Մերձավոր Արևելք, հ. 3, Երևան, 2006, էջ 51-55:
160 Newsweek, 25, 06, 1979.
161 Фадеева И., Ислам в общественно-политической жизни современной Турции. Турция. История, экономика, политика, Москва, 1984, стр. 67.

կան դեպքերից հետո Արևմուտքի համար գրեթե անհնար էր դարձել իսլամական շարժումների հարցում փաստերը զատել չափազանցությունից:

1979 թ. հունվարին ԱՄՆ-ում ստեղծվեց պետական մի հանձնախումբ՝ ռազմավարական նշանակություն ունեցող որոշ երկրների ներքաղաքական իրավիճակն ուսումնասիրելու նպատակով: Հանձնախումբը պիտի որոշեր, թե կարող են արդյոք այդ երկրներում կրկնվել իրանական դեպքերը, և նման իրավիճակում ինչպիսին պիտի լինի ԱՄՆ արձագանքը: Այդ ժամանակահատվածում Վաշինգտոնին հատկապես անհանգստացրին Թուրքիայի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Ներքին անկայունության աճը դիտվում էր որպես հակաամերիկյան հեղափոխության հնարավոր ուղի[162]: Ստեղծվեց մի պարադոքսային իրավիճակ, երբ Արևմուտքն իսլամական շարժումը ժամանակին փորձում էր օգտագործել որպես այլընտրանք կոմունիստական շարժումներին, այժմ այլընտրանք էր փնտրում արդեն իսլամական շարժման դեմ: Եվ որպես այդպիսի այլընտրանք Թուրքիայում հանդես եկավ թուրքական բանակը՝ քեմալականության պաշտպանի իր առաքելությամբ: Ինչպես նշում է Մեհմեթ Ալի Բիրանդը, 1970-ականների վերջերին թուրքական զինվորականությանն ամենից շատ անհանգստացնում էր իսլամականների գործունեությունը[163]: Թուրքիայում ռազմական ուսումնարանի կուրսանտը՝ ապագա սպան, ուսման առաջին իսկ օրից դաստիարակվում էր քեմալիզմի սկզբունքների ոգով, որոնցից հատկապես կարևորվում էր աշխարհիկության (լայիցիզմ) սկզբունքը[164], և ամեն տեսակի ոտնձգություն լայիցիզմի հանդեպ անընդունելի էր զինվորակա-

162 Кремнюк В., Борьба Вашингтона против революции в Иране, Москва, 1984, стр. 157-158.
163 Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, s. 47.
164 Նույն տեղում, էջ 38:

նի համար, իսկ այդպիսիք շատ էին 1970-ական թթ. Թուրքիայի քաղաքական-հասարակական կյանքում:

Ձախակողմյան շարժումների ակտիվացումը

1970-ական թթ. ձախ շարժումը Թուրքիայում վերելք էր ապրում, և այդ հարցում որոշակի դեր ունեին 1961 թ. սահմանադրության մեջ առկա ազատություններն ու ժողովրդավարական իրավունքները[165]: Առաջին անգամ ձևավորվեցին օրինական ձախակողմյան կուսակցություններ և կազմակերպություններ, որոնցից առավել ազդեցիկ էր 1961 թ. ստեղծված Թուրքիայի աշխատավորական կուսակցությունը (ԹԱԿ, Türkiye İşçi Partisi): ԹԱԿ-ն արդեն 1965 թ. համապետական խորհրդարանական ընտրությունների ժամանակ նշանակալի հաջողությունների հասավ՝ խորհրդարանում զբաղեցնելով 15 պատգամավորական մանդատ: Ձախ կուսակցության նման հաջողությունն առաջացրեց երկրի իշխանությունների և Թուրքիայի արևմտյան դաշնակիցների որոշակի անհանգստությունը: Արդեն 1968 թ. ընտրական օրենսգիրքը փոփոխությունների ենթարկվեց իշխանությունների կողմից, որը նպատակ էր հետապնդում խոչընդոտել փոքր կուսակցությունների մուտքը խորհրդարան և, ըստ էության, ուղղված էր հատկապես ձախ կուսակցությունների դեմ: Այդ իսկ պատճառով ԹԱԿ-ը 1969 թ. խորհրդարանական ընտրություններում հավաքեց գրեթե նույն քանակությամբ քվեներ, որքան 1965 թ., սակայն տեղ չունեցավ ԹԱՄԺ-ում[166]:

«Մարտի 12-ի» անցումային շրջանը (1971-1973 թթ.) զինվորականների կողմից նույնպես օգտագործվեց ձախ շարժման զար-

165 Karpat K., The Turkish Left. - Journal of Contemporary History, Vol. 1, No. 2, 1966, p. 183.
166 Hyland M. P., Crisis at the Polls: Turkey's 1969 Elections. – The Middle East Journal, 1970 Vol. 24 No. 1, pp. 8-10.

գացմանը մեծ հարված հասցնելու համար՝ արգելվեց ԹԱԿ-ի[167], ինչպես նաև տարբեր ձախ ուղղվածության կազմակերպությունների գործունեությունը, ազատազրկման ենթարկվեցին ձախ շարժումների ակտիվիստները, որոնց հանդեպ, որպես կանոն, դաժան պատժամիջոցներ էին իրականացվում ազատազրկման վայրերում: Սակայն զինվորականները չբավարարվեցին ձախ շարժման դեմ միայն պատժամիջոցների կիրառմամբ. նրանք նաև 1971-73 թթ. ժամանակաշրջանում իրականացրին սահմանադրական փոփոխություններ, որոնց միջոցով փորձ էր արվում խոչընդոտներ ստեղծել ձախ շարժման հետագա գործունեության համար: Սահմանադրության «հիմնական իրավունքներ և ազատություններ» բաժնում փոփոխություններ կատարվեցին, ըստ որի՝ այդ իրավունքները և ազատությունները կարգավորվում էին օրենքով: Նոր սահմանափակումներ մտցվեցին հասարակական կազմակերպությունների և արհմիությունների մասին օրենքում: Ստեղծվեցին Պետական անվտանգության դատարանները (ՊԱԴ, Devlet Güvenlik Mahkemeleri), որոնք բաղկացած էին հինգ անդամից, և քննելու էին քաղաքական բնույթի հանցագործությունները[168]: Սակայն պետք է նշել, որ չնայած այս սահմանափակումներին, սահմանադրությունն ընդհանուր առմամբ դեռևս շարունակում էր մնալ բավարար ազատական՝ ձախ շարժման զարգացմանը խթանելու համար:

1970-ական թթ. Թուրքիայում գործում էին մի քանի ձախ ուղղվածության քաղաքական կուսակցություններ՝ Թուրքիայի սոցիալիստական աշխատավորական կուսակցություն (ԹՍԱԿ, Türkiye Sosyalist İşçi Partisi), Թուրքիայի աշխատավորական կուսակցություն (ԹԱԿ, Türkiye İşçi Partisi), Սոցիալիստական հե-

167 Anayasa Mahkemesi, (siyasi parti-kapatma). E.S.: 1971/3; K.S.: 1971/3; K.G.: 20.07.1971, Resmi Gazete, 14064 (6 Ocak 1972).
168 Данилов В., Политическая борьба в Турции, стр. 172-173, 180.

ղափոխության կուսակցություն (ՍՀԿ, Sosyalist Devrim Partisi) և այլն: 1970-ական թթ. ընդհատակում ակտիվացրել էր իր գործունեությունը Թուրքիայի կոմունիստական կուսակցությունը (Türkiye Komünist Partisi), որը դեռևս շարունակում էր մնալ արգելված:

Թուրքիայում ձախ շարժումների հիմնական բացթողումն այն էր, որ դրանք այդպես էլ չկարողացան համախմբվել մեկ կենտրոնի շուրջ, հանդես գալ որպես միասնական միավոր: Ինչպես իրավացիորեն նշում է խորհրդային թուրքագետ Վ. Դանիլովը, լեգալ ձախ կուսակցություններն այդպես էլ չկարողացան հաղթահարել «բանավեճի ակումբի» կարգավիճակը, իսկ ձախակողմյան ծայրահեղականները բաժանված էին տարբեր կազմակերպությունների, ինչն, անկասկած, սահմանափակում էր նրանց հնարավորությունները[169]:

Թուրքիայում 1970-ական թթ. ձախ շարժման առաջատար ուժերից, թերևս, ամենագործունը ԴԻՍԿ-ն էր, որը ձախ ուղղվածություն ունեցող արհմիությունների խոշորագույն համադաշնություն էր: 1967 թ. մի քանի տասնյակ արհմիություններ, դուրս գալով Թուրքիայի արհմիությունների ամենախոշոր համադաշնության՝ Թյուրք-Իշ-ի կազմից, ստեղծեցին ԴԻՍԿ-ը[170], որը, քննադատելով Թյուրք-ԻՇ-ին ԱՄՆ շահերին ծառայելու համար, նպաստում էր աշխատավորների քաղաքականացմանը[171]:

1971-1973 թթ. թեև որոշակիորեն սահմանափակվեց ԴԻՍԿ-ի գործունեությունը, այնուամենայնիվ, այդ կառույցը, ի տարբերություն ձախ ուղղվածության մի շարք կազմակերպությունների, կարողացավ պահպանել իր գոյությունը: Ավելին, օգտվելով

169 Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", стр. 26-27.
170 DİSK Kuruluş Bildirsi, Ana Tüzüğü. İstanbul: DİSK Yayın., 1968, s. 48;
171 Mello B., Explaining Divergent Strategies in Turkish Labor History, 1960-1980. - Department of Political Science, Seattle University, p. 19.

այն հանգամանքից, որ «Մարտի 12-ի վարչակարգի» նկատմամբ դժգոհություններ էին առաջացել աշխատավորության շրջանակներում, ԴԻՍԿ-ն արդեն 1973-ից սկսեց ակտիվ գործունեություն ծավալել: 1970-ական թթ. այն համալրեց իր կազմը մի շարք նոր արհմիություններով, որի արդյունքում վերաճեց հզոր ուժի[172]: ԴԻՍԿ-ը հզորության գագաթնակետին հասավ 1970-ական թթ. վերջերին, երբ իր կազմի մեջ ընդգրկում էր ավելի քան 500 հազար անդամ[173], որի շնորհիվ արհմիութենական շարժման գլխավոր նախաձեռնող ուժը դարձավ:

1976 թ. առաջին անգամ մայիսի 1-ին՝ աշխատավորության օրվա կապակցությամբ, ԴԻՍԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպվեց խոշոր ցույց, որին մասնակցեց ավելի քան 500 հազար մարդ[174]: Ցույցի ժամանակ կազմակերպիչների կողմից պահանջներ էին հնչում՝ բարենպաստ պայմաններ ստեղծել աշխատավորության համար, վերացնել կոմունիստական գործունեության դեմ ուղղված 141-րդ և 142-րդ հոդվածները, դադարեցնել Պետական անվտանգության դատարանների գործունեությունը, դուրս գալ ՆԱՏՕ կազմից և այլն[175]: Հաջորդ մի քանի տարիների ընթացքում ԴԻՍԿ-ը նմանատիպ մի շարք միջոցառումներ ևս կազմակերպեց:

1970-ական թթ. ԴԻՍԿ-ի հիմնական պայքարն արտահայտվում էր գործադուլային շարժման տեսքով, որն աստիճանաբար ավելի ընդգրկուն դարձավ. 1977 թ. Թուրքիայում կազմակերպվել է 116 գործադուլ, 1978 թ.՝ 184, 1979 թ.՝ 269, իսկ 1980 թ. միայն առաջին 5 ամիսների ընթացքում՝ 388: 1980 թ. հունվարին թուրքական «Ջումհուրիյեթ» թերթը գրում էր, որ գործադուլ-

172 Дрякин А., Забастовочная борьба рабочего класса Турции в 1970-1980 гг. - Турция: история, экономика, политика, Москва, 1984, стр. 16-34.
173 Karafakıoğlu Ö. K., նշված աշխ., էջ 21:
174 DİSK – 6. Genel Kurulu Çalışma Raporu, İstanbul, 1977, s. 74-77.
175 Նույն տեղում:

ների պատճառով գործարանների ընդամենը 20%-ն էր աշխատում[176]: 1980 թ. Թուրքիայի խոշոր ձեռնարկատեր Ս. Սաբանջին ընդգծում էր, որ «գործադուլների պատճառով տնտեսությունը կաթվածահար է եղել»[177]: 1980 թ. առաջին 5 ամիսների գործադուլների 76,7%-ը կազմակերպել էին ԴԻՍԿ-ի կազմում գտնվող արհմիությունները[178]: Վերը նշված տվյալները փաստում են, որ գործադուլային շարժումը Թուրքիայում աննախադեպ վերելք էր ապրում, և որ դրա գլխավոր նախաձեռնողն ու կազմակերպողը ԴԻՍԿ-ն էր:

Քննարկվող ժամանակաշրջանում ձախ շարժումների հետ որոշակիորեն համագործակցում էր ՀԺԿ-ն, որի կազմում 1970-ական թթ. սկզբներին լուրջ փոփոխություններ տեղի ունեցան, և կուսակցության առաջնորդ Իսմեթ Ինյոնյուին փոխարինելու եկավ երիտասարդ Բյուլենթ Էջևիթն իր «կենտրոնից ձախ» քաղաքական ուղղությամբ: 1976 թ. ՀԺԿ 23-րդ համագումարում որոշում ընդունվեց անդամակցել Սոցիալիստական ինտերնացիոնալին: 1973 թ. խորհրդարանական ընտրություններին նախորդող քարոզարշավի ժամանակ Բ. Էջևիթը որոշ խոստումներ էր տալիս՝ դրանով փորձելով իր կողմը գրավել ձախակողմյան հայացքներ ունեցող ընտրազանգվածին: Բ. Էջևիթը հանդես էր գալիս Պետական անվտանգության դատարանների գործունեությունը դադարեցնելու անհրաժեշտությունն ընդգծող հայտարարություններով և քննադատում էր Հատուկ պատերազմի բաժնի (ՀՊԲ, Özel Harp Dairesi) գործունեությունը: 1970-ական թթ. ՀԺԿ-ն ԴԻՍԿ-ի հետ համատեղ հանդես եկավ մի շարք միջոցառումներով: Բ. Էջևիթը մասնակցեց նաև ձախակողմյանների կազմակերպած որոշ հանրահավաքներին, օրինակ՝ 1977 թ.

176 Cumhuriyet, 09, 01, 1980.
177 Mond Diplomatique, No. 1, 1980.
178 DİSK – 7. Genel Kurulu Çalışma Raporu, İstanbul, 1980, s. 131.

մայիսի 1-ին Թաքսիմի հրապարակում ԴԻՍԿ-ի կազմակերպած ցույցին[179]: Հատկանշական է տեղեկությունն այն մասին, որ 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո ՀԺԿ անդամ, Ստամբուլի քաղաքապետ Ահմեթ Իսվանը մեղադրվում էր մարդկանց հրապարակ բերելու նպատակով քաղաքապետարանի բեռնատարները ԴԻՍԿ-ին տրամադրելու համար:

Էջևիթի ղեկավարած քաղաքական գիծը, որն աջակցում էր ձախ շարժմանը, դարձավ մրցակիցների սուր քննադատության թիրախ: Մասնավորապես, 1978 թ. Արդարություն կուսակցության նախագահ Ս. Դեմիրելը, մեղադրելով Էջևիթին ձախ լինելու մեջ, նշում էր. «Սրանց վերջն Ալիենդեի նման է լինելու»[180], նկատի ունենալով 1973 թ. Չիլիի դեպքերը, երբ երկրի նախագահ, ձախ ուղղվածության քաղաքական գործիչ Սալվադոր Ալիենդեն բանակի կողմից կազմակերպված հեղաշրջման միջոցով հեռացվեց իշխանությունից և սպանվեց[181]: Իրականում Էջևիթի կառավարությունն օգտագործում էր ձախ շարժումները՝ ընտրություններում քվեներ շահելու նպատակով, սակայն լուրջ աջակցություն չէր ցուցաբերում վերջիններիս, ինչը և հաստատվեց, երբ Էջևիթի երրորդ կառավարության ժամանակաշրջանում (05. 01. 1978-16. 10. 1979 թթ.) շարունակվեցին ձախ շարժումների դեմ կիրառվող պետական ճնշումները: Էջևիթի իշխանության ժամանակ՝ 1979 թ. մայիսին, իշխանությունները նախ արտոնություն չտվեցին ԴԻՍԿ-ին ցույց կազմակերպելու համար, հետո էլ արդեն չարտոնված ցույց անցկացնելու մեղադրանքով ձերբակալեցին այդ կառույցի մի քանի ղեկավարների[182]: ԴԻՍԿ-ի պատասխանը ՀԺԿ-ին երկար սպասել

179 Financial Times, 20, 03, 1981.
180 Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, s. 72;
181 Սակայն հետաքրքիր է նշել, որ թե՛ 1971 թ. «հուշագրային հեղաշրջման» և թե՛ 1980 թ. ռազմական հեղաշրջման ժամանակ երկրի վարչապետը հենց Սուլեյման Դեմիրելն էր:
182 Alatlı E, Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, İstanbul, 2004, s. 396.

չտվեց. նույն թվականի աշնանը կայացած խորհրդարանական մասնակի ընտրություններում ԴԻՍԿ-ը չաջակցեց ՀԺԿ-ին, ինչն էլ իր հերթին դեր խաղաց, որպեսզի ՀԺԿ-ն այդ ընտրություններում պարտություն կրի և Բ. Էջևիթի կառավարությունը հրաժարական տա:

Նկատենք նաև, որ ձախակողմյան շարժումների ակտիվացումը և գործադուլային ալիքի ահագնացումն անհանգստացրին հատկապես երկրի խոշոր ձեռնարկատերերին: Ինչպես վկայում է Մեհմեթ Ալի Բիրանդը, 1970-ական թթ. վերջերին Թուրքիայի խոշոր ձեռնարկատերերը խուճապի մեջ էին և գտնում էին, որ կոմունիզմը կանգնած է երկրի շեմին[183]: Նրանցից շատերն իրենց ունեցվածքն էժան գներով վաճառում և հեռանում էին երկրից[184]: Այդ իրավիճակում ԹՑՈՒՍԻԱԴ-ն սկսեց ձախ շարժմանը խոչընդոտելուն ուղղված միջոցառումներ կազմակերպել, որոնց շրջանակներում պետք է դիտել 1978 թ. հոկտեմբերին այդ կառույցի պատվիրակության այցն ԱՄՆ: ԹՑՈՒՍԻԱԴ-ի ներկայացուցիչները հանդիպեցին ԱՄՆ նախագահի անվտանգության հարցերով խորհրդական Զբիգնև Բժեզինսկու հետ, որը մեծ կշիռ ուներ ԱՄՆ իշխանական համակարգում: Հանդիպման ժամանակ քննարկվեցին Թուրքիայում ձախ շարժումների գործունեությունը սահմանափակելու հնարավոր միջոցները[185]:

Պետք է նշել, որ Թուրքիայի խոշոր ձեռնարկատերերը երկրում կայունություն հաստատելու և «հունվարի 24-ի» ծրագրի իրականացման համար լավագույն միջոց էին համարում բանակի միջամտությունը: Հատկանշական է 1980 թ. մարտին Թուրքիայի խոշոր ձեռնարկատեր, «Քոչ-հոլդինգի» սեփականատեր Վեհբի Քոչի այն հայտարարությունը, որ քաղաքական գործիչ-

183 Birand M. A., նշվ. աշխ., էջ 72.
184 Նույն տեղում:
185 Նույն տեղում, էջ 99-101:

ները կորցրել են պատասխանատվության զգացումը, և երկրում ընդամենը մեկ գործունյա կազմակերպություն կա՝ ի դեմս բանակի[186]: Այստեղ հարկ է շեշտել մի կարևոր հանգամանք ևս, այն է՝ Բանակի փոխօգնության միությունը (OYAK), որն ապահովում էր գեներալների նյութական բարեկեցությունը, 1970-ական թթ. Թուրքիայի 4 խոշորագույն և ճյուղավորված մասնավոր ընկերություններից էր հանդիսանում[187], հետևաբար՝ ձախ շարժման զարգացումը և գործադուլային ալիքի ահագնացումն ուղղակիորեն վնասում էին զինվորական վերնախավի ֆինանսական շահերին:

Ամփոփելով կարելի է նշել, որ ձախ շարժումը 1970-ական թթ. Թուրքիայում ընդլայնել էր գործունեությունը. ստեղծվել էին տարբեր ձախ կուսակցություններ, երիտասարդական կազմակերպություններ, այդ թվում և ծայրահեղական, ահաբեկչական բնույթի: Սակայն ձախակողմյան շարժման գլխավոր ձեռքբերումն աշխատավորական զանգվածի կազմակերպումն էր, որն իրականացվում էր ձախակողմյան՝ արհմիությունների համադաշնության՝ ԴԻՍԿ-ի միջոցով: Աշխատավորների քաղաքականացումը հանգեցրեց Թուրքիայում զանգվածային գործադուլային ալիքի պոռթկմանը, որը 1980 թ. սկզբներին աննախադեպ մասշտաբների էր հասել:

Ահաբեկչության աճը Թուրքիայում 1970-ական թվականներին

1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո Թուրքիայի բարձրաստիճան զինվորականությունը որպես հե-

186 Milliyet, 21, 03, 1980.

187 Запорожец В., Колесников А., Турция: Общество и Армия, том I. Ленинград, 1983, стр. 238.

ղաշրջում իրականացնելու անհրաժեշտության հանգեցրած գլխավոր պատճառ շեշտում էր երկրում մեծ թափ հավաքած ահաբեկչությունը: Գլխավոր շտաբի պետ, գեներալ Քենան Էվրենն արդեն իր առաջին ելույթներում նշում էր, որ ամեն օր ահաբեկչական և անարխիստական գործողությունների հետևանքով զոհվում էր 20 մարդ, որ միայն վերջին երկու տարիների ընթացքում Թուրքիայում ահաբեկչության զոհ է դարձել 5241 մարդ և վիրավորվել 14152-ը, այն դեպքում, երբ Սաքարիայի ճակատամարտում Թուրքիան կորցրել է 5713 զինվոր և տվել 18480 վիրավոր[188]:

1970-ական թթ. Թուրքիայում ահաբեկչության գլխավոր նախաձեռնողներն ազգայնամոլական «Գորշ գայլեր» և ձախակողմյան ծայրահեղական ուժերն էին: Թեև զինվորական հրամանատարության կողմից, բացի ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունները և ազգայնամոլական շարժումը, որպես ահաբեկչության կազմակերպիչներ նշվում էին նաև արմատական իսլամական կազմակերպությունները և քրդական շարժումը, սակայն քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայում արմատական իսլամական կազմակերպություններն, ըստ էության, թույլ էին և ընդգրկված չէին ահաբեկչական գործունեության մեջ[189], իսկ քրդական շարժումները հիմնականում հանդես էին գալիս ձախակողմյանների հետ միասին և ներգրավված էին այդ շարժումների մեջ[190]: Այստեղ պետք է հատուկ ընդգծել, որ բանակի վերնախավը խթանում էր ահաբեկչության

188 Evreni'nin Radyo-Televizyon Konuşması (12, 09, 1980), Türkiye Cumhuriyeti Başbakanı Orgeneral Kenan Evren'in Söylev ve Demeçleri (12 Eylül 1980-12 Eylül 1981), Ankara, 1981, s. 3-5.

189 Այդ մասին մանրամասն տե՛ս Karmon E., Radical Islamic Political Groups in Turkey, Middle East Review of International Affairs Journal (MERIA), Vol. 1, No. 4, December 1997, p. 14-33.

190 1970-ական թթ. վերջերին թեև գործում էին նաև առանձին քրդական կազմակերպություններ (ՊԿԿ, ՔԱՎԱ, ՔՈՄԱԼ և այլն), սակայն դրանք դեռ ձևավորման փուլում էին գտնվում: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Gunter M. M., The Kurdish Problem in Turkey, Middle East Journal, Vol. 42, No. 3, Summer 1988, pp. 389-406.

աճը՝ նպատակ ունենալով երկրում խորացնել քաոսային վիճակը՝ հետագայում ռազմական հեղաշրջումն արդարացնելու և որպես երկրի «փրկիչներ» հանդես գալու համար:

«Գորշ գայլերի» ահաբեկչական գործունեությունը 1970-ականներին

Ինչպես արդեն նշվեց, 1970-ական թթ. վերջերին ահաբեկչությունը Թուրքիայում աննախադեպ ծավալների էր հասել: Ահաբեկչության գլխավոր նախաձեռնողներից էր աջ ծայրահեղական «Գորշ գայլերի» շարժումը, որոնք համախմբված էին Ալփարսլան Թյուրքեշի պանթյուրքիստական գաղափարախոսության շուրջ: 1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից հետո իշխանությունն իր ձեռքը վերցրած Ազգային միասնության կոմիտեի արմատականների խմբի 14 անդամներից իր պանթյուրքիստական հայացքներով աչքի էր ընկնում գնդապետ Ալփարսլան Թյուրքեշը[191], որը հետագա գրեթե 4 տասնամյակի ընթացքում ղեկավարելու էր պանթյուրքիստական շարժումը Թուրքիայում: 1965 թ. Ա. Թյուրքեշը, արմատականների խմբի որոշ անդամների հետ միասին, մտավ Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցության (Cumhuriyetçi Köylü Millet Partisi) մեջ և շուտով դարձավ վերոնշյալ կուսակցության նախագահ՝ ամբողջովին վերափոխելով կուսակցության քաղաքական և գաղափարական ուղղությունները[192]: 1969 թ. այն վերանվանվեց Ազգայնական շարժում կուսակցություն (ԱՇԿ):

---

191 Թյուրքեշն ազգայնամոլությամբ աչքի էր ընկել դեռ 1944 թ., երբ պանթյուրքիստական հայացքներ տարածելու համար դատական պատասխանատվության էր ենթարկվել: Այդ մասին տե՛ս http://www.ulkuocaklari.org.tr/basbug/basbug_hayati.htm.

192 ԱՄԿ-ի որոշ անդամներ հետագայում, չընդունելով կուսակցության չափազանց ազգայնամոլական դառնալը, լքեցին կուսակցությունը: Տե՛ս Esin N., Devrim ve Demokrasi, Bir 27 Mayısçının Anıları, İstanbul, 2005, s. 245-253.

ԱՇԿ գաղափարախոսության հիմքում դրված էին Թյուրքեշի 9 սկզբունքները՝ «9 լույսը» (Dokuz Işık)՝ ազգայնամոլություն (milliyetçilik), գաղափարապաշտություն (ülkücülük), բարոյականություն (ahlakçılık), սոցիալականություն (toplumculuk), գիտականություն (ilimcilik), ազատություն (hürriyetçilik), գյուղացիություն (köycülük), զարգացում և ժողովրդականություն (gelişmecilik ve halkçılık), արդյունաբերություն և տեխնիկա (endüstricilik ve teknikçilik): Սակայն եթե հակիրճ ներկայացնենք ԱՇԿ դավանած հիմնական գաղափարական ուղղությունը, կարելի է նշել, որ այն ներկայացնում է թուրքական ազգայնամոլության առավել ծայրահեղական՝ պանթյուրքիստական ուղղությունը: Ա. Թյուրքեշն իր «Հիմնական տեսակետներ» (Temel Görüşler) աշխատության մեջ նշում է, որ իրենց գլխավոր նպատակն է նախ հզորացնել Թուրքիան, իսկ հետագայում արդեն հզոր Թուրքիայի դրոշի տակ միավորել ամբողջ թյուրքական աշխարհը[193]: Պետք է նշել, որ քննարկվող ժամանակաշրջանում թյուրքեշականներն այդ ծրագրերի իրականացման գլխավոր խոչընդոտ համարում էին կոմունիզմը:

1960-ական թթ. վերջերին Թյուրքեշի վերահսկողության տակ սկսեցին գործել «գաղափարապաշտների» (ülkücüler) կազմակերպությունները[194], որոնք չնայած ԱՇԿ կուսակցական համակարգի մեջ չմտան, սակայն ղեկավարվում և վերահսկվում էին վերջինիս կողմից[195]: «Գաղափարապաշտների» կազմակեր-

193 Alparslan Türkeş, Temel Görüşler, İstanbul, 1975, s. 362-363.

194 Գաղափարապաշտների կազմակերպություններից էին Ülkücü ocaklar, Ülkücü gençlik derneği և այլն: Պատմագիտական գրականության մեջ հաճախ հանդիպում ենք այդ կազմակերպությունների միասնական ուսումնասիրությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ կազմակերպությունները ղեկավարվում էին մեկ կենտրոնից և գործ էին նախաձեռնողական գործունեությունից, մենք ևս հակված ենք այն ներկայացնել միասնական ձևով:

195 Сафрастян Р., Возвращение "серых волков": Консервативная партия в политической жизни Турции (1983-1985 гг.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXIII, Երևան, 2004, էջ 254:

պությունները գլխավորապես բաղկացած էին երիտասարդներից և սկզբնական փուլում զբաղված էին պանթյուրքիստական գաղափարախոսության քարոզչությամբ ու տարածմամբ: Նրանց մեկնաբանությամբ՝ «գաղափարապաշտ» լինել նշանակում է «ամեն ինչ զոհաբերել հանուն գաղափարի»՝ կատարելով ոչ թե այն, ինչ տրամաբանությունն է հուշում, այլ այն, «ինչ ղեկավարն է հրամայում», իսկ գլխավորը Մեծ Թուրան պետության գաղափարն էր[196]: 1970-ականներին ներգրավվելով ահաբեկչական պայքարի մեջ՝ «գաղափարապաշտների» կազմակերպությունները վերածվել էին հզոր բանակի, որոնք 1970-ական թթ. իրենց կազմում ունեին ավելի քան 100 հազար անդամ[197]: Մանրամասն մշակված աստիճանակարգային ցանցը, որի մեջ մտնում էին թե ԱՇԿ-ն, թե «գաղափարապաշտների» կազմակերպությունները և թե ԱՇԿ վերահսկողության տակ գտնվող զինված գրոհային ջոկատները (կոմանդոսների ջոկատները), անվանվում են «գորշ գայլերի» (bozkurtlar) հասարակական-քաղաքական շարժում[198], իսկ Թյուրքեշի պանթյուրքիստական գաղափարախոսության բոլոր համակիրներն իրենց «գորշ գայլեր» են կոչում: «Գորշ գայլ», ինչպես նաև «բաշբուղ» (başbuğ բառացիորեն՝ առաջնորդ, այդպես էին անվանում Թյուրքեշին) եզրերը լայն գործածության մեջ դրեց Թյուրքեշը: Ի դեպ, այդ եզրերն գործածվում էին նաև երիտթուրք պարագլուխ Էնվեր փաշայի կողմից[199]:

«Գորշ գայլերի» կազմավորման և հզորացման գործընթացին մեծապես նպաստեցին Թուրքիայի ուժային կառույցները և

196 Բրամ Ս. & Ուլգեր Մ., «Գորշ գայլեր». հետազոտություն թուրք ծայրահեղ աջակողմյանների մասին, Երևան, 2003, էջ 82:
197 Landau J. M., The Nationalist Action Party in Turkey, Journal of Contemporary History, Vol. 17, No. 4. (Oct., 1982), pp. 594-595.
198 Сафрастян Р., նշվ. աշխ., էջ 255.
199 Poulton H., Top Hat, Grey Wolf and Crescent, Turkish nationalism and the Turkish Republic, New York, 1997, p. 146.

արևմտյան երկրների գաղտնի ծառայությունները: Կան տեղեկություններ, որ ԱՄՆ նախաձեռնությամբ ՆԱՏՕ անդամ երկրներում ստեղծվեցին «կոնտրգերիլաների» (Counter Guerrilla - հակապարտիզանական) գաղտնի կազմակերպությունները, որոնց գլխավոր նպատակն էր «հակապարտիզանական» պայքար ծավալել ձախակողմյան շարժումների դեմ և «ամեն գնով» խոչընդոտել դրանց զարգացմանը[200]: Թուրքիայում «կոնտրգերիլաների» գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվեց Հատուկ պատերազմի բաժինը, որը գաղտնի կառույց էր և գործում էր սկզբում ՄԻԹ-ի (Milli İstihbarat Teşkilatı - Ազգային հետախուզական կազմակերպություն), իսկ հետագայում Գլխավոր շտաբի ենթակայության տակ[201]: Մեր կարծիքով՝ ՀՊԲ-ն, որը ղեկավարվում էր բարձրաստիճան զինվորականների կողմից, դարձավ թուրքական «խորքային պետության» հիմնասյունը: Նկատենք նաև, որ ընդհանուր թշնամու գործոնը՝ ի դեմս ձախակողմյան շարժումների, անխուսափելի էր դարձնում «գորշ գայլերի» և ՀՊԲ համագործակցությունը: ՀՊԲ-ն «գորշ գայլերին» դիտում էր որպես միջոց՝ ձախակողմյան շարժումների դեմ պայքարելու համար և սկսեց նրանց օգտագործել, այսպես կոչված, սև աշխատանք կատարելու համար: 1960-ականների վերջին ՀՊԲ օժանդակությամբ ստեղծվեցին «գորշ գայլերի» «կոմանդոսների» ճամբարները, որոնք կարևորագույն դեր խաղացին «գորշ գայլերի» ահաբեկչական գործունեության համար: Այդ ճամբարներում պատրաստություն էին անցնում «գորշ գայլերի» գրոհայինները՝ «կոմանդոսները», որտեղ նրանց կրթում և դաստիարակում էին թե՛ ֆիզիկապես, թե՛ գաղափարապես և թե՛ հոգեպես: 1970-ական թթ. վերջերին Թուրքիայում 28 այդպիսի ճամբար կար[202]: Հատուկ

200 Birand M. A., Bilâ H., Akar R., նշվ. աշխ., էջ 49.
201 Karafakıoğlu Ö. K., նշվ. աշխ., էջ 19.
202 Аксенсенко А., Борьба политических партий Турции за влияние на молодежь 1920-1980, Москва, 1986, стр. 78.

ուշադրություն էր դարձվում հատկապես «կոմանդոսների» գաղափարական պատրաստվածությանը՝ նրանց մեջ սերմանելով պանթուրքիստական գաղափարախոսություն:

«Գորշ գայլերի» կարգավիճակը և դրությունը կտրուկ փոխվեցին 1970-ական թթ. կեսերից, երբ ԱՇԿ-ն 1975 թ. Ազգայնական ճակատ իշխող կոալիցիայի մաս կազմեց և Ա. Թյուրքեշը դարձավ փոխվարչապետ: Գտնվելով իշխանական կոալիցիայում Թյուրքեշն առավելագույնս օգտագործեց իշխանական լծակներն իր կուսակցության հզորացման համար: «Բաշբուղը» ամեն կերպ աջակցում էր իր կուսակիցների՝ պետական մարմիններ ներթափանցմանը, որի արդյունքում 1970-ական թթ. կեսերից «գորշ գայլերը» հայտնվեցին պետական գրեթե բոլոր կառույցներում: Թյուրքեշը հատկապես խթանում էր «գորշ գայլերի» ուժային կառույցներ «ներխուժման» գործընթացը. 1970-ական թթ. վերջերին «գորշ գայլերը» մեծ թվով ներթափանցեցին ոստիկանական համակարգ, բանակ և ՄԻԹ: Արդեն 1970-ական թթ. կեսերից ՄԻԹ մի քանի վարչություններ Թյուրքեշի վերահսկողության տակ էին գտնվում[203]: Այդ ժամանակահատվածում վերջնականապես ձևավորվեցին «գորշ գայլերի» գրոհային ջոկատները: Նրանք ապահովվեցին զինամթերքով, որի զգալի մասն ստացվում էր Կիպրոսի հյուսիսային՝ թուրքերի կողմից օկուպացված հատվածից[204]:

«Գորշ գայլերը», բավարար չհամարելով կառավարության կողմից «կոմունիստների» (բոլոր ձախակողմյան շարժումները «գորշ գայլերի» կողմից կոմունիստական էին դիտվում) դեմ կազմակերպվող միջոցառումները, պայքարը դուրս բերեցին փողոց՝ փորձելով ահաբեկչական ու սադրիչ գործողություններով պայքարել ձախակողմյան շարժումների հզորացման դեմ:

---

203 Alatlı E., նշվ. աշխ., էջ 165-167.
204 Yalçın S. & Yurdakul D., REİS, Gladio'nun Türk Tetikcisi, Ankara, 1998, s. 33.

1970-ական թթ. ահաբեկչությունը «գորշ գայլերի» գործունեության բաղկացուցիչ մասը դարձավ: Ահաբեկչական գործողության մասին որոշումն ընդունում էին ՀՊԲ-ն և ԱՇԿ ղեկավար կազմը: Նախապատրաստվող ահաբեկչական գործողության հրահանգը բանավոր կերպով ստացվում էր ԱՇԿ երիտասարդական բաժանմունքի կողմից, զենքը նախօրոք տրամադրում էին տեղական կազմակերպությունների ղեկավարները[205], իսկ ահաբեկչություններն իրականացնողների կորիզը կազմում էին «կոմանդոսները» (մեր կարծիքով՝ որոշ փոփոխություններով այս համակարգը գործում է նաև այսօրվա Թուրքիայում): Գտնվելով իշխանության հովանու ներքո՝ ահաբեկիչ «գորշ գայլերին» հաճախ հաջողվում էր խույս տալ քրեական պատասխանատվությունից, և այդ անպատժելիության մթնոլորտն էլ ավելի էր նպաստում ահաբեկչության ալիքի ընդլայնմանը[206]:

1970-ականների երկրորդ կեսին «գորշ գայլերի» կազմակերպած ամենազանգվածային ահաբեկչական գործողությունը տեղի ունեցավ 1977 թ. մայիսի 1-ին: Աշխատավորության մայիսմեկյան օրվա կապակցությամբ ձախակողմյան շարժումների կողմից Թաքսիմի հրապարակում կազմակերպված ցույցի ժամանակ «գորշ գայլերն» իրականացրին ահաբեկչական ու սադրիչ գործողություններ, որոնց հետևանքով զոհվեց 34, վիրավորվեց 100-ից ավելի մարդ: 1977 թվականի մայիսի մեկի դեպքերը պատմության մեջ հայտնի են «Արյունոտ երկրորդ կիրակի» անվանմամբ[207]: Հատկանշական են տեղեկություններն այն մասին,

205 Tanlak Ö., İtiraf. Eski Ülkücü MHP'yi Anlatıyor, İstanbul, 1997, s. 14-15.

206 Այս մասին առավել մանրամասն տե՛ս Դումանյան Ա., Աջակողմյան ծայրահեղականների ահաբեկչությունը Թուրքիայում 1980 թ. ռազմական հեղաշրջման նախօրեին, Մերձավոր Արևելք, հ. 2, Երևան, 2005 թ., էջ 85:

207 Առաջին «Արյունոտ կիրակին» համարվում է 1969 թվականի փետրվարի 16-ը, երբ Ստամբուլի Թաքսիմի հրապարակում ձախակողմյան ուժերի կողմից կազմակերպված բողոքի ցույցի ժամանակ մի խումբ ահաբեկիչներ զենքերով հարձակվեցին ցույցի մասնակիցների վրա, ինչի հետևանքով երկու մարդ զոհվեց և մոտ 100 մարդ վիրավորվեց:

որ ըստ Էջևիթի՝ Թաքսիմի արյունոտ դեպքերի հետևում կանգնած էր Հատուկ պատերազմի բաժինը[208]:

Կարելի է ասել, որ 1978 թ. հունվարի 5-ին Էջևիթի երկրորդ կառավարության կազմավորումից հետո «գորշ գայլերի» մարտավարությունը որոշակի փոփոխության ենթարկվեց. եթե մինչ այդ «գորշ գայլերի» ահաբեկչական գործողություններն ուղղված էին ձախերի դեմ և նպատակ ունեին պառակտել ու թուլացնել նրանց շարժումը, ապա 1978 թ. սկսած՝ դրանք ստացան նոր դրսևորումներ: «Գորշ գայլերն» ամեն կերպ փորձում էին իրենց ահաբեկչական ու սադրիչ գործողություններով այդ պայքարը դարձնել ավելի զանգվածային՝ նպատակ հետապնդելով երկրում քաոսային վիճակ ստեղծել և ապակայունացնել ներքին դրությունը: Մենք դա հիմնականում պայմանավորում ենք այն հանգամանքով, որ արդեն 1978-ից թուրքական բանակի վերնախավը նախապատրաստվում էր ռազմական հեղաշրջմանը, և բարձրաստիճան զինվորականությունը ցանկանում էր հնարավորինս ավելի քաոտիկ վիճակ ստեղծել երկրում, որպեսզի հեղաշրջումն ունենա հասարակական պահանջ և զինվորականները ներկայանան որպես պետության միասնականության և պահպանման «փրկիչներ»: Իսկ «գորշ գայլերը» բարձրագույն զինվորականության կողմից օգտագործվում էին որպես ընդունված որոշման իրականացման գործիքներ:

Սակայն պետք է նշել, որ Ա. Թյուրքեշն այս խաղում իր սեփական հաշվարկներն ուներ: Արդեն 1970-ական թթ. վերջերից նա փորձում էր դուրս գալ զինվորականության վերահսկողությունից և պայքարել իշխանությունը զավթելու համար: Դեռ 1977 թ. հունիսի սկզբին ռազմական հեղաշրջում նախապատրաստելու համար բանակից հեռացվեցին ցամաքային զորքերի հրա-

208 Birand M. A., Bilâ H., Akar R., նշվ. աշխ., էջ 70-71:

մանատար, բանակի գեներալ Նամըք Քեմալ Էրսունը և ծայրահեղ աջ ուղղվածության մոտ 200 սպա: Էրսունի ձախողված հեղաշրջման նախաձեռնողն էր Ա. Թյուրքեշը[209]: Հեղաշրջման փորձի տապալումը, սակայն, չընկճեց Թյուրքեշի՝ իշխանությունը զավթելու նկրտումները, ավելին՝ 1978 թ. սկսած նա այդ գործընթացի մեջ ներգրավեց «կոմանդոսներին», իր վերահսկողության տակ գտնվող գրոհային ջոկատները: ԱՇԿ նախկին փոխնախագահ Ռըզա Սյուֆթյուօղլուն 2000 թ. հրատարակած «Մահակների զինվորները» (Copların Askerleri) գրքում նշում է, որ 1980 թ. ռազմական հեղաշրջումից առաջ բանակում մի քանի խմբավորումներ կային, որոնցից մեկը գտնվում էր Ա. Թյուրքեշի ազդեցության տակ[210]: Թյուրքեշն այդ խմբավորման միջոցով, որը ղեկավարում էր գեներալ-գնդապետ Սուաթ Իբրահիմը, ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում երկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատելու նպատակով: Եթե ավելացնենք նաև այն հանգամանքը, որ ըստ որոշ տվյալների՝ «գորշ գայլերը» 1970-ական թթ. վերջին կարճ ժամանակահատվածում կարող էին մոբիլիզացնել մոտ 200 հազար զինված համակիրների[211], կարելի է եզրակացնել, որ իրավիճակի նմանօրինակ զարգացման պարագայում Թյուրքեշն իրական հնարավորություն կունենար իշխանությունը զավթելու համար: Սակայն զինվորականության հերթական միջամտությունը Թուրքիայի քաղաքական անցուդարձին խառնեց Թյուրքեշի բոլոր խաղաթղթերը՝ ի չիք դարձնելով իշխանությունը զավթելու նրա նպատակները:

1978-ից երկրում ահաբեկչության նոր ալիք սկսվեց. միայն 1978 թ. հունվար ամսին, այսինքն՝ ԱՃ կոալիցիայի գործունեութ-

209 Yalçın S. & Yurdakul D., Bay-Pipo, İstanbul, 2000, s. 289-291.
210 Müftüoğlu R., Copların Askerleri, Ankara, 2000, s. 18.
211 Сафрастян Р., նշվ. աշխ., էջ 256.

յան դադարումից հետո, ահաբեկիչների զոհ դարձավ 14, վիրավորվեց 75 մարդ[212], ինչն ահաբեկչության աննախադեպ աճ էր նախորդ ամիսների համեմատ: 1978 թ. մարտի 16-ին «գորշ գայլերը» Ստամբուլի համալսարանի դիմաց կազմակերպեցին պայթյուն, որի հետևանքով զոհվեց 7, վիրավորվեց 41 ուսանող: Պայթյունն իրականացրած Ջուքլուֆ Իսոթը խոստովանել է, որ ահաբեկչության հրամանը «բաշբուղն» էր տվել, իսկ գործողությունը կազմակերպելու գործում նրան օգնել էին ոստիկանության որոշ աշխատակիցներ[213]: Դեպքից կարճ ժամանակ անց Իսոթը, զղջալով իր արարքի համար, փորձում է հանձնվել իրավապահ մարմիններին, ինչի համար և սպանվում է իր «գաղափարապաշտ» ընկերների կողմից[214]: Սույն օրինակը հստակ ցույց է տալիս, որ շատ երիտասարդներ, չգիտակցելով հնարավոր հետևանքները, մտնում էին այդ ահաբեկչական կազմակերպության մեջ և այլևս չէին կարողանում դուրս գալ այնտեղից. «գորշ գայլերի» համար հետադարձ ճանապարհ չկար: Այդ են վկայում նաև Թյուրքեշի հայտնի խոսքերը. «Խփեք, սպանեք բոլոր նրանց, ովքեր պայքարել են մեր նպատակի համար և հիմա երես են թեքում»[215]: Տեղին է նշել մեկ այլ «գորշ գայլ», ժամանակին ASALA-ի դեմ պայքարում օգտագործված և հետագայում դատապարտված, Թուրքիայի մաֆիայի «կնքահայրերից»՝ Ալահեդդին Չաքըջըի խոսքերը. «Պետությունը մեզ օգտագործեց եւ աղբանոց նետեց»[216]:

Քննարկվող ժամանակահատվածում «գորշ գայլերի» ահաբեկչություններից ամենաարյունալի հետևանքներն ունեցան Քահրամանմարաշի դեպքերը: Բացի այդ, Քահրամանմարա-

212 Alatlı E., նշվ. աշխ., էջ 165-167:
213 Dışbudak A., Bombacı Kardeşimdi, Milliyet, 2, 04, 1996.
214 Alkan N. & Akkuzu E., Bombayı Kardeşim Attı, Sabah, 2, 04, 1996.
215 Բրամ Ս. & Ուլգնր Մ., նշվ. աշխ., էջ 246:
216 Ավագյան Ա., Թուրքիայում խորքային պետության եւ «Էրգենեկոն»-ի կապի շուրջ, Արմենպրես, 3, 05, 2011 http://armenpress.am/arm/news/651233/

շում «գորշ գայլերի» կազմակերպած սադրիչ գործողությունների հետևանքով տեղի ունեցավ Թուրքիայի հանրապետական պատմության մեջ ամենազանգվածային բախումը երկրի սունիի և ալևի բնակչության միջև: 1978 թ. դեկտեմբերին Քահրամանմարաշ քաղաքում գտնվող կինոթատրոններից մեկում՝ «Արևը ե՞րբ է ծագելու» (Güneş ne zaman doğacak?) հակակոմունիստական ֆիլմի ցուցադրման ժամանակ, «գորշ գայլերն» իրականացրին պայթյուն և դրանում մեղադրեցին ալևիներին, որոնք հայտնի էին իրենց ձախակողմյան կողմնորոշմամբ: Հաջորդ մի քանի օրերին «գորշ գայլերը» կազմակերպեցին ևս մի քանի սադրիչ գործողություններ, որոնց հետևանքով բախումներ սկսվեցին ալևի և սունիի բնակչության միջև՝ դառնալով ավելի քանի 100 մարդու մահվան պատճառ, իսկ շուրջ 1000 մարդ էլ վիրավորվեց: Քահրամանմարաշի դեպքերից հետո երկրի 13 շրջաններում ռազմական դրություն մտցվեց, ինչն այդ արյունոտ սցենարի հեղինակների գլխավոր նպատակն էր: Մինչև օրս էլ Քահրամանմարաշի դեպքերի մասին Թուրքիայում շատ է խոսվում և գրվում, իսկ երբեմն էլ տարբեր առիթներով (օրինակ՝ նախկին նախագահ Քենան Էվրենի դատավարության ժամանակ) ի հայտ են գալիս սկանդալային բացահայտումներ և մանրամասներ: Մեր կարծիքով՝ այդ ամենը հստակ և մշակված քայլեր էին, որոնք պետք է հանգեցնեին հեղաշրջման: Այդ նույն ձեռագիրն ու գործելաոճը պահպանվեցին նաև հետագայում, և հայկական «Ակօս» թերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի, կաթոլիկ հոգևորական Սանթորոյի սպանությունները դրանց դրսևորումներից էին:

Նկատենք նաև, որ «գորշ գայլերի» ահաբեկչությունն ուղղված էր հասարակության գրեթե բոլոր շերտերի դեմ. քննարկվող ժամանակահատվածում «գորշ գայլերը» պատասխանատու են դասախոսների (Օրհան Ցավուզ), գրողների (Ումիթ

Քաֆթանջըօղլու), հասարակական և քաղաքական գործիչների (ԴԻՍԿ-ի նախկին ղեկավար Քեմալ Թյուրքլեր), հարյուրավոր ուսանողների, լրագրողների («Միլիյեթ» թերթի գլխավոր խմբագիր Արդի Իփեքչի)[217] և բազմաթիվ այլ անմեղ մարդկանց սպանության համար:

Անդրադառնալով 1980 թվականին և կոնկրետ ռազմական հեղաշրջմանը՝ պետք է փաստել, որ հեղաշրջման նախօրեին՝ սեպտեմբերի 11-ի երեկոյան, զինվորականները տանկերով շրջապատում են ԱԾԿ գրասենյակը և ձերբակալում անդամներին: Նրանք փորձում էին հնարավորություն չտալ «գորշ գայլերին» հակադարձող քայլեր ձեռնարկել: Չնայած զինվորականության կանխարգելիչ գործողություններին, այդուհանդերձ, «գորշ գայլերին» հաջողվում է ձեռնարկել որոշ միջոցառումներ: Թյուրքեշը, օգտագործելով իր կապերը բանակում և ՄԻԹ-ում, ինչպես նաև ԿՀՎ-ում (Թյուրքեշը մտերիմ հարաբերություններ ուներ Թուրքիայում ԿՀՎ ներկայացուցիչ Փոլ Հենցի հետ[218]), միակն էր ազդեցիկ կուսակցությունների ղեկավարներից, որ կարողանում է նախօրոք տեղեկանալ հեղաշրջման մասին և փախուստի է դիմում: Երեք օր ոմն Հալիլ Շավգընի տանը թաքնվելուց հետո, այնուամենայնիվ, նա հանձնվում է[219]: Այդ 3 օրվա մասին շատ քիչ տեղեկություններ կան: Հնարավոր է, որ Թյուրքեշն այդ օրերն օգտագործեց «գորշ գայլերի» հետագա գործունեությունը կազմակերպելու և Էվրենի խմբի դեմ հակադարձող

217 1979 թ. փետրվարի 1-ին Մեհմեթ Ալի Աղջայի կողմից սպանվեց Արդի Իփեքչին: «Գորշ գայլ» Մեհմեթ Ալի Աղջան հասարակության լայն շրջանակներին հայտնի դարձավ Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի դեմ կատարած մահափորձից հետո: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Bale J. M., The Ultranationalist Right in Turkey and the Attempted Assassination of Pope John Paul II. – The Turkish Studies Association Bulletin, April 1991, Vol. 15, no. 1, Indiana, p 15.

218 Yalçın S. & Yurdakul D., REİS, Gladio'nun Türk Tetikcisi, s. 143.

219 Հատկանշական են տեղեկություններն այն մասին, որ Թյուրքեշի փախուստը կազմակերպել է Ցաշար Օքույանը, ով 2000 թ. (Մայր հայրենիք կուսակցության անդամ) աշխատանքի նախարարն էր: Տե՛ս Sabah, 14, 09, 2000.

գործողություններ ձեռնարկելու համար: Հավանական է նաև, որ Թյուրքեշն այդ 3 օրերն օգտագործեց որոշ երաշխիքներ ստանալու համար: Ամեն դեպքում, ռազմական հեղաշրջումից հետո «գորշ գայլերը» փորձեցին որոշ հակազդող միջոցներ ձեռնարկել: Ազատության մեջ գտնվողները ձեռնամուխ եղան Ազգային անվտանգության խորհրդի նախագահ, գլխավոր շտաբի պետ Քենան Էվրենի դեմ մահափորձ կազմակերպելու նախապատրաստությանը: Քենան Էվրենի մահվան դեպքում (Էվրենի սպանությունը պիտի իրագործեին շտաբի սպաներ Շ. Օնեմը և Ս. Քափթանօղլուն)[220] ԱԱԽ նախագահ էր դառնալու ցամաքային զորքերի հրամանատար Նուրեթթին Էրսինը, ով ավելի մեղմ դիրքորոշում ուներ Ազգայնական շարժում կուսակցության նկատմամբ[221]: Սակայն շուտով ԱԱԽ-ին հայտնի է դառնում նախապատրաստվող դավադրության մասին, և զինվորականները ներքին կարգով «գորշ գայլերի» մեջ տեղեկատվություն են տարածում այն մասին, որ դավադրության փորձ կատարելու դեպքում բանտերում գտնվող բոլոր «գորշ գայլերը» կսպանվեն: «Սաբահ» թերթին տված հարցազրույցում Ք. Էվրենը հաստատում է այդպիսի հրամանի առկայության մասին տեղեկատվությունը և ավելացնում, որ հենց դրանով էլ հնարավոր եղավ կանխել «գորշ գայլերի» դավադրությունը[222]:

1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո Թուրքիայում չորս գլխավոր կուսակցություններից (Հանրապետական-ժողովրդական կուսակցություն, Արդարություն կուսակցություն, Ազգային փրկություն կուսակցություն, Ազգայնական շարժում կուսակցություն) ամենադաժան պատժամիջոցները կիրառվեցին հատկապես Թյուրքեշի գլխավորած կուսակցության նկատմամբ:

220 Samil Tayyar, Evren'i Ben Öldürecektim, Sabah, 14, 09, 2000.
221 Murat Keklikçi, Necdet Pekmezci, Hepsini Öldürecektik, Sabah, 15, 09, 2000.
222 Sabah, 13, 09, 2000.

Ինքը՝ Թյուրքեշը, դատապարտվեց 11 տարի, մեկ ամիս և 10 օր ազատազրկման[223]: Մեղադրական փաստաթղթերում հաստատվեցին տեղեկություններն այն մասին, որ Ազգայնական շարժում կուսակցությունը դավադրություն էր կազմակերպում նպատակ հետապնդելով երկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատել՝ ֆաշիստական Իտալիայի ձևաչափով: Ըստ այդ փաստաթղթերի՝ հաջորդ փուլը «մեկ ազգ, մեկ պետություն» կարգախոսով բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին մեկ՝ «Թուրան» պետության մեջ համախմբելն էր լինելու[224]:

Այսպիսով, վերլուծելով «գորշ գայլերի» գործունեությունը 1970-ական թթ.՝ գալիս ենք այն եզրակացության, որ պետության որոշ շրջանակների կողմից նրանք օգտագործվում էին Թուրքիայում ահաբեկչություն և սադրիչ գործողություններ իրականացնելու համար, որի նպատակն էր խոչընդոտել ձախակողմյան շարժումների զարգացմանը, իսկ 1970-ական թթ. վերջերին արդեն երկրում քաոսային իրադրություն ստեղծել՝ ռազմական հեղաշրջում իրականացնելու համար: 1970-ական թթ. վերջերին «գորշ գայլերը» հզոր ուժ էին, նրանց համակիրների թիվը, ինչպես արդեն նշվել է, շատ էր նաև թուրքական բանակում և ՄԻԹ-ում, ուստի Թյուրքեշը փորձում է սեփական խաղը խաղալ և զավթել իշխանությունը: Սակայն հերթական ռազմական հեղաշրջումն ի չիք է դարձնում նրա ծրագրերը: 1980 թ. Ք. Էվրենի գլխավորած ռազմական հեղաշրջումը մեծ հարված հասցրեց «գորշ գայլերի» շարժմանը, սակայն այդ հարվածը վերջնական և կործա նարար չէր, քանի որ հեղաշրջման հեղինակներն ամենևին էլ չէին ցանկանում ամբողջովին ջախջախել այդ շարժումը, և երբ «գորշ գայլերը» դադարեցին վտանգ ներկայացնել

223 http://www.basbug.itgo.com/12eylul6.htm

224 Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XX века, Москва, 2001, стр. 51.

զինվորականների իշխանության համար, սկսեցին կրկին օգտագործվել այդ նույն զինվորականության կողմից:

Ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունների ահաբեկչական գործունեությունը

1961 թ. սահմանադրության ընդունումը, որը Թուրքիայի համար աննախադեպ ազատություններ էր հռչակում, նոր փոփոխություններ մտցրեց երկրի քաղաքական-հասարակական կյանքում: Ի հայտ եկան բազմաթիվ քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ, որոնք իրենց հետ, բնականաբար, բերեցին գաղափարա-քաղաքական հոսանքների բազմազանություն: Այդ հոսանքները սրընթաց ձևով տարածվեցին հատկապես ուսանողության մեջ, որի ընդհանուր թիվը 1960-ական թթ. կազմում էր մոտ 560 հազար[225] և նրանց շրջանում գրեթե ավարտվել էր գաղափարական ու քաղաքական բևեռացման գործընթացը. երիտասարդները հիմնականում բաժանվել էին երկու հակադիր ճամբարների՝ աջերի և ձախերի, որոնք իրենց հերթին ներկայացված էին տարբեր կազմակերպությունների միջոցով:

Ուսանողական երիտասարդության ձախ քաղաքական կողմնորոշում ունեցող թևը գլխավորապես բաժանված էր երկու խմբի՝ ձախ կենտրոնամետների և սոցիալիստների: Առաջին խումբը ՀԺԿ նոր՝ «կենտրոնից ձախ» ուղղության կողմնակիցներն էին, որոնք թեև քննադատում էին գործող կարգը, այնուամենայնիվ, դեմ էին սոցիալիստական կարգերի հաստատմանը: Սոցիալիստներն ավելի արմատական էին տրամադրված և 1960-ական թթ. սատարում էին Թուրքիայի աշխատավորական

225 Türkiye İstatistik Yıllığı 1973, Ankara, s. 175.

կուսակցության քաղաքական և գաղափարական հիմնական դրույթներին: ԹԱԿ երիտասարդական կազմակերպություններին անդամակցությունից բացի նրանք գործուն մասնակցություն էին ունենում ուսումնական հաստատություններում գործող գաղափարական ակումբներում, որոնք հայտնի էին «Մտքերի ակումբներ»[226] անվանմամբ: 1965 թ. բազմաթիվ ուսանողական գաղափարական խմբակների հիման վրա ստեղծվեց «Մտքերի ակումբների դաշնությունը» (ՄԱԴ), որի տպագիր մարմինը դարձավ «Դյոնուշում» (Dönüşüm՝ Շրջադարձ) թերթը[227]: Գաղափարական ակումբներում Մաո Ցզե-Դունի, Լենինի, Տրոցկու տեսական դրույթների հետ մեկտեղ որոշակի ազդեցություն ունեին Հերբերտ Մարկուզեի գաղափարական դրույթները (ֆրանկֆուրտյան դպրոց)[228], որոնք, անկասկած, նպաստում էին երիտասարդության ծայրահեղականացմանը: 1960-ական թթ. վերջերին ՄԱԴ-ն աստիճանաբար դուրս էր գալիս ԹԱԿ ազդեցությունից, և 1969 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԹԱԿ կրած պարտությունն[229] էլ ավելի ուժեղացրեց նախկինում այդ կուսակցությանն աջակցող երիտասարդության գաղափարա-քաղաքական և կազմակերպչական սահմանազատման գործընթացը:

1969 թ. ՄԱԴ հիմքի վրա ստեղծվեց Թուրքիայի հեղափոխական երիտասարդության դաշնությունը (Türkiye Devrimci Gençlik Federasyonu, ԴԵՎ-ԳԵՆՉ), որը գլխավորեց Աթիլա Սարփը: ԴԵՎ-ԳԵՆՉ-ի գլխավոր նպատակը երկրում սոցիալիստական կարգերի հաստատումն էր, սակայն այդ կառույցի շարքերը չէին

226 Корниенко Р., Социально-политические предпосылки развития левацких течений, левый экстремизм в Турции, Специальный бюллетень, Москва, 1976, Но. 6 (181), стр. 66.
227 Политика и экономика современной Турции (отв. ред. А. М. Шамсутдинов), Москва, 1977, стр. 77.
228 Корниенко Р., նշվ. աշխ., էջ 58-71.
229 Hyland M. P., Crisis at the Polls: Turkey's 1969 Elections, The Middle East Journal, 1970, Vol. 24 No. 1, pp. 1-16.

առանձնանում միասնականությամբ. այն գտնվում էր մի քանի ձախակողմյան կազմակերպությունների ազդեցության ներքո՝ Այդընլըքի խումբը, Դոդու Փերինչեքի մաոիստական խմբավորումը, Հիքմեթ Ալի Քըվըլջըմլըի սոցիալիստական խումբը և այլն[230]: ԴԵՎ-ԳԵՆՉ-ը զերծ չէր նաև մարկուզեիստական հոսանքներից. 1970 թ. Էրթուղրուլ Քյուրքյուի՝ ԴԵՎ-ԳԵՆՉ-ի ղեկավար դառնալն ուժեղացրեց ծայրահեղական տարրերը կազմակերպության մեջ, որից հետո զինված պայքարը դիտվում էր որպես հեղափոխության գլխավոր միջոց:

ԴԵՎ-ԳԵՆՉ-ի մեջ մտնող կազմակերպություններից առավել ակտիվություն էին ցուցաբերում ԹՀՔՕ-ն (Türkiye Halk Kurtuluş Ordusu - Թուրքիայի ազգային ազատագրական բանակ)՝ Դենիզ Գեզմիշի գլխավորությամբ, ԹՀՔՓ-ԹՀՔՋ-ն (Türkiye Halk Kurtuluş Partisi - Türkiye Halk Kurtuluş Cephesi - Թուրքիայի ազգային ազատագրական կուսակցություն, Թուրքիայի ազգային ազատագրական ճակատ)՝ Մահիր Չայանի ղեկավարությամբ, ԹԴԻՔՓ-ն (Türkiyenin Devrimci İşçi-Köylü Partisi - Թուրքիայի հեղափոխական աշխատավորական-գյուղացիական կուսակցություն), որը ղեկավարում էր Դոդու Փերինչեքը և այլն: Այս կազմակերպությունների ծայրահեղական գործունեության բնորոշ տարրերից էին բանկերի թալանումը, մարդկանց առևանգումը՝ փրկագին ստանալու ակնկալիքով, իշխանությունների դեմ կազմակերպվող ահաբեկչությունները և այլն:

1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունը նպատակ ուներ կանխել ձախակողմյան արմատական զինվորական խմբավորման կողմից նախապատրաստվող ռազմական հեղաշրջումը և խոչընդոտել ձախ շարժման ընդլայնումը: Ուստի զինվորականության պատժամիջոցների սլաքն ուղղված էր հատկապես այդ շարժումների դեմ: Մարտի 12-ի միջամտությունից անմիջապես

230 Корниенко Р., նշվ. աշխ., էջ 58-71.

հետո ձախակողմյան ծայրահեղականների հանդեպ զանգվածային ձերբակալումներ և խիստ պատժամիջոցներ սկսվեցին: Արգելվեց ԴԵՎ-ԳԵՆՉ-ի գործունեությունը, դրա 229 անդամներ դատապարտվեցին, որոնցից մի քանիսը՝ մահապատժի: Նրանց մեջ էր նաև ԹՀՔՕ-ի ղեկավար Դենիզ Գեզմիշը[231]:

Իրենց հերթին ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունները փորձեցին որոշ չափով հակազդել զինվորական իշխանություններին՝ ակտիվացնելով ահաբեկչական գործողությունները: Հատկանշական է 1971 թ. մայիսի 17-ին Ստամբուլում Իսրայելի գլխավոր հյուպատոս Էրայիմ Էլրոմի առևանգումը Չայանի խմբի կողմից: Ահաբեկիչները պահանջում էին ազատ արձակել բանտերում գտնվող բոլոր քաղբանտարկյալներին, այդ թվում և Դենիզ Գեզմիշին: Սակայն զինվորականության կողմից դրական արձագանք չստանալով՝ սպանեցին հյուպատոսին[232]: Այդ նույն խմբի՝ Գեզմիշին փրկելուն ուղղված հաջորդ փորձը ևս տապալվեց, որի ժամանակ զոհվեց նաև Մահիր Չայանը: Մասնավորապես, 1972 թ. մարտին Չայանի խումբը պատանդ վերցրեց ՆԱՏՕ-ի տեխնիկական երեք մասնագետների, որոնց դիմաց պահանջում էր բանտից ազատել Դենիզ Գեզմիշին: Զինվորականներն, իմանալով Չայանի խմբի գտնվելու տեղը, շրջապատել են այն և մերժելով ամեն տեսակ բանակցությունները զինյալների հետ՝ հրթիռային կրակ են բացել դեպի այն տունը, որտեղ գտնվում էին Չայանի խումբը և պատանդները: Այդ գործողության հետևանքով զինյալների հետ մեկտեղ զոհվեցին նաև պատանդները[233]: Իրենց նման քայլերով և գործելաոճով զինվորականները ցույց տվեցին, որ չեն պատրաստվում որևէ զիջման գնալ ձախակողմյան

231 20 Yüzyıl Ansiklopedisi, Cilt-4, İstanbul, 1990, s. 974.
232 Alatlı E., Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, s. 27.
233 Yalçın S. & Yurdakul D., Bay-Pipo, s. 205-206.

ծայրահեղականներին և անգամ արտասահմանցի պատանդների հանգամանքն էական ազդեցություն չէր ունենում:

1971-73 թթ. զինվորական իշխանությունները չափազանց ծանր հարված հասցրին ձախակողմյան ծայրահեղական շարժումներին. մեծ թվով ձախակողմյաններ դատապարտվեցին ազատազրկման, նրանք բանտերում դաժան խոշտանգումների էին ենթարկվում, ձախակողմյան ծայրահեղական շարժման որոշ ղեկավարներ մահապատժի ենթարկվեցին: Նրանք, ովքեր կարողացան խույս տալ զինվորական պատժամիջոցներից, ցրված էին և պառակտված: Այս իրողությունները տպավորություն էին ստեղծել, որ ձախակողմյան ծայրահեղական շարժումներն այլևս չեն կարողանա շարունակել իրենց գործունեությունը, սակայն իրադարձությունների հետագա զարգացումներն այլ պատկեր ստեղծեցին:

Ձախակողմյան շարժումների գործունեության վերսկսմանը մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ 1974 թ. Բ. Էջևիթի կառավարությունը համապետական համաներումը տարածեց նաև Թուրքիայի քրեական օրենսգրքի (ԹՔՕ) 141-րդ և 142-րդ հոդվածներով դատապարտված մոտ 4000 անձանց վրա: Կոմունիստական գործունեության և քարոզի դեմ ուղղված ԹՔՕ 141-րդ և 142-րդ հոդվածներով դատապարտվածների համաներման արդյունքում ազատության մեջ հայտնվեցին ձախ կողմնորոշում ունեցող բազմաթիվ երիտասարդներ: Պետք է նշել, որ բանտերում նրանց նկատմամբ կիրառված անմարդկային խոշտանգումները ևս մեծապես նպաստել էին ձախակողմյան երիտասարդության ծայրահեղականացմանը՝ էլ ավելի խորացնելով նրանց հաստատակամությունը «ամեն գնով» փոխել երկրի կարգը: Այդ իրողություններում ձախակողմյանները ձեռնամուխ եղան նոր շարժման նախաձեռնմանը:

1975 թ. խորհրդարանական աջ ուժերի միասնությամբ (Արդարություն կուսակցություն, Ազգային փրկության կուսակցութ-

յուն, Ազգայնական շարժում կուսակցություն, Հանրապետական վստահության կուսակցություն) իշխանության եկած՝ Ազգայնական ճակատ անունը կրող կոալիցիոն կառավարության[234] գլխավոր նպատակը ևս ձախ ուժերի ընդլայնմանը խոչընդոտելն էր[235]: Ֆաշիստական տարրեր պարունակող ԱՃ-ն, չբավարարվելով պայքարի միայն վարչական (իշխանական) միջոցներով, այն դուրս բերեց փողոց՝ զանգվածային ահաբեկչություն ծավալելով ձախերի դեմ: Իշխանությունները որպես ահաբեկչական պայքարի միջոց օգտագործում էին «գորշ գայլերին»: ԱՃ քաղաքականությունը խորացնում էր բևեռացումն աջերի և ձախերի միջև, որն ի վերջո հանգեցրեց աջ և ձախ ծայրահեղականների կողմից իրականացվող զանգվածային ահաբեկչության ալիքի կտրուկ աճին: Համաձայն թուրքական մամուլի՝ 1970-ական թթ. վերջերին Թուրքիայում գործում էր մոտ 60 ձախակողմյան ծայրահեղական կազմակերպություն[236], որոնց գլխավոր նպատակը զինված հեղափոխությունն էր: Ձախակողմյան ծայրահեղական կազմակերպություններից առավել ազդեցիկ էին ԹՀՔՓ-ԹՀՔՋ-ն (Türkiye Halk Kurtuluş Partisi- Türkiye Halk Kurtuluş Cephesi - Թուրքիայի ազգային ազատագրական կուսակցություն, Թուրքիայի ազգային ազատագրական ճակատ), ԴԵՎ-ՍՈԼ-ը (Devrimci Sol, Հեղափոխական ձախ), ԴԵՎ-ՅՈԼ-ը (Devrimci Yol - Հեղափոխական ուղի)[237], ՄԼՍՓ-Բ-ն (Marksist-Leninist Silahlı Propaganda-Birliği - Մարքսիստական-լենինյան զինված քարոզչության միություն), ՀԴՕ-ն (Halkin Devrimci Öncüleri - Ժողովրդի հեղափոխական առաջապահներ), ԹՔՓ/ՄԼ-ն (Türkiye Komunist Partisi/Marxist Leninist - Թուրքիայի կոմունիստա-

234 Cem İ., Siyaset Yazıları, 1975-80 Türkiyesi, İstanbul, 1980, s. 11-15.
235 Birand M. A., Bilâ H., Akar R., նշվ. աշխ., էջ 51.
236 Cumhuriyet, 08, 02, 1981.
237 ԴԵՎ-ՅՈԼ-ն ու ԴԵՎ-ՍՈԼ-ը կազմավորվեցին ԴԵՎ-ԳԵՆՋ-ի պառակտման արդյունքում:

կան կուսակցություն/մարքսիստ-լենինիստ)՝ իր զինված խմբավորումով, որը կոչվում էր ԹԻՔՔՕ (Türkiye İşçi Köylü Komunist Ordusu - Թուրքիայի աշխատավորական գյուղացիական կոմունիստական բանակ) և այլն:

Նշված կազմակերպությունների գործունեությունն ընդհանուր առմամբ չէր տարբերվում ձախակողմյան ծայրահեղականների 1970-1972 թթ. գործունեությունից: Հիմնական առանձնահատկությունն այն էր, որ 1970-ական թթ. երկրորդ կեսին ընդարձակվել էր նրանց գործունեության աշխարհագրությունը՝ տարածվելով ամբողջ երկրով մեկ[238]: Ձախակողմյան ծայրահեղականների ահաբեկչության թիրախ էին դառնում հիմնականում աջ ծայրահեղականները, իշխանությունների ներկայացուցիչները, զինվորականները, ոստիկանության աշխատակիցները, աջ քաղաքական ուժերի ներկայացուցիչները և այլն: Միայն ՀԴՕ-ն 1978 թ. 10 ամիսների ընթացքում 36 ահաբեկչական գործողություն է իրականացրել, որոնք ուղղված են եղել ԱՇԿ գրասենյակների, «գաղափարապաշտների ակումբների», «Սաբանջը Հոլդինգի» Ստամբուլի և Անկարայի վարչական կենտրոնների դեմ[239]: 1980 թ. մայիսի 27-ին ԴԵՎ-ՍՈԼ-ի զինյալների կողմից սպանվեց ԱՇԿ փոխնախագահ Գյուն Սազաքը[240]: Այդ սպանությունն ազգայնամոլական ուժերի դեմ կազմակերպված ձախ ծայրահեղականների ամենահնչեղ ահաբեկչական գործողություններից էր: Սազաքի սպանությանը հաջորդած մի քանի օրերի ընթացքում «գորշ գայլերը», փորձելով հակահարված հասցնել ձախակողմյաններին, զանգվածային հարձակումներ իրականացրին երկրի տարբեր շրջաններում, որի հետևանքով զոհվեց մոտ 20 երիտասարդ[241]:

---

238 Запорожец В., Колесников А., Турция: Общество и армия, том I, стр. 170.
239 Նույն տեղում:
240 Yalçın S & Yurdakul D., REİS, Gladio'nun Türk Tetikçisi, s. 110.
241 Kenan Evren, Kenan Evren'in Anıları Cilt-1, İstanbul, 1990, s. 574.

Ձախակողմյան ծայրահեղականների հաջորդ հնչեղ ահաբեկչական գործողությունը տեղի ունեցավ 1980 թ. հուլիսի 19-ին, երբ ԴԵՎ-ՍՈԼ-ի զինյալները սպանեցին Նիհաթ Էրիմին, որը «Մարտի 12-ի վարչակարգի» ժամանակաշրջանում գլխավորել էր կառավարությունը (26. 03. 1971-22. 05. 1972 թթ.)[242]: Նրա կառավարման տարիներին ձախակողմյան շարժումներին ծանր հարված հասցվեց: Սպանությանը հետևեց ԴԵՎ-ՍՈԼ-ի հայտարարությունը՝ «ֆաշիստ Գյուն Սազաքից հետո սպանեցինք ֆաշիստ Նիհաթ Էրիմին»[243]:

Ձախակողմյան ծայրահեղականների գործունեությունը լայն տարածում գտավ նաև քրդերով բնակեցված արևելյան շրջաններում[244], և քրդերն էլ ակտիվորեն ներգրավված էին ձախակողմյան կազմակերպություններում: 1970-ական թթ. կեսերից Թուրքիայում սկսեցին գործել նաև քրդական կազմակերպություններ՝ Քրդստանի աշխատավորական կուսակցություն (PKK), Քոմալ, ՔԱՎԱ և այլն[245]: Այս կազմակերպությունների հիմնական մասն ուներ ձախակողմյան ուղղվածություն և ընդհանուր առմամբ պայքարում էր սոցիալիստական շարժումների հետ համատեղ: Քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայի քրդերի ազգային ինքնագիտակցությունը դեռևս բարձր մակարդակի վրա չէր, սակայն հետագայում ռազմական հեղաշրջման հեղինակների կողմից քրդական անջատողականությունը նշվում էր հեղաշրջման առանցքային պատճառների շարքում, որն ընդամենը փորձ էր արդարացնել քրդական շարժումների նկատմամբ զինվորական իշխանությունների խիստ պատժամիջոցները:

---

242 http://www.tbmm.gov.tr/hukumetler/hukumetler.htm

243 Alatlı E., նշվ. աշխ., էջ 587.

244 Шахназаров О., Корниенко Р., Турецкие маоистские группировки после отмены чрезвычайного положения (1973-1976 гг.), Специальный бюллетень, Но. 6 (181), Москва, 1976, стр. 123-134.

245 Gunter M. M., The Kurdish Problem in Turkey, Middle East Journal, Vol. 42, No. 3, Summer 1988, pp. 389-406.

Այսպիսով, ձախակողմյան ծայրահեղական ահաբեկչությունը 1970-ական թթ. վերջերին զանգվածային բնույթ էր ստացել և տարածվել ողջ երկրով մեկ: Նրանց ահաբեկչական գործունեությունը լրջորեն մտահոգում և անհանգստություն էր պատճառում երկրի իշխանություններին և զինվորականությանը:

Այսպիսով, ձախակողմյան ծայրահեղական ահաբեկչությունը 1970-ական թթ. վերջերին զանգվածային բնույթ էր ստացել և տարածվել ողջ երկրով մեկ: Նրանց ահաբեկչական գործունեությունը լրջորեն մտահոգում և անհանգստություն էր պատճառում երկրի իշխանություններին և զինվորականությանը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1980 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Հեղաշրջման նախապատրաստումը և ընթացքը

Ռազմական հեղաշրջումների միջոցով իշխանության զավթումը եղել է բոլոր ժամանակներում, սակայն 20-րդ դարում ի հայտ եկան նոր իրողություններ, երբ ռազմական հեղաշրջումների միջոցով իշխանության էր գալիս զինվորական կառավարություն: Այդ երևույթը լայն տարածում ստացավ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ռազմական հեղաշրջումների պատճառները կապված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների հետ: Ներքին պատճառներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու խմբի՝ զինվորականության շուրջ կենտրոնացած և հասարակության շուրջ կենտրոնացած գործոններ[246]: Զինվորականության շուրջ կենտրոնացած պատճառները գլխավորապես կապված են զինվորականների սոցիալական վիճակի, իշխանության հասնելու նրանց նկրտումների, բանակում տիրող բարոյա-հոգեբանական մթնոլորտի և այլ հանգամանքների հետ: Ռազմական հեղաշրջման այն պատճառները, որոնք բխում են հասարակության շուրջ կենտրոնացած գործոններից, առաջանում են զինվորականությունից անկախ: Այդպիսի պատճառներ կարող են դառնալ քաղաքացիական պատերազմները, սոցիալ-տնտեսական ճգնաժամերը, հասարակության տարբեր շերտերի միջև բախումները,

246 Hague R., Harrop M. & Breslin S., Comparative Government and Politics, An Introduction, London, 1998, p. 239.

իշխանության ճգնաժամները և այլն: Մշակութաբան Օլեգ Գլազունովը հասարակության շուրջ կենտրոնացած պատճառներից հատկապես կարևորում է իշխանության ճգնաժամը և նշում է, որ առանց իշխանության համակարգային ճգնաժամի ռազմական հեղաշրջումն անհնար է[247]: Հաճախ ռազմական հեղաշրջման՝ զինվորականության շուրջ կենտրոնացած և հասարակության շուրջ կենտրոնացած պատճառները փոխկապակցված են լինում: Դրանց միջև հիմնական տարբերությունն այն է, որ զինվորականության շուրջ կենտրոնացած պատճառներով տեղի ունեցած հեղաշրջումները գլխավորապես նպատակ են ունենում փրկել զինվորականությանը, իսկ այն ռազմական հեղաշրջումները, որոնց պատճառները կախված են հասարակության շուրջ կենտրոնացած գործոններից, նպատակաուղղված են լինում երկիրը (հասարակությունը)փրկելուն[248]:

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ 1970-ական թթ. վերջերին Թուրքիան գտնվում էր քաղաքական-տնտեսական խոր ճգնաժամի մեջ, ահաբեկչությունն աննախադեպ ծավալների էր հասել, երկրի սուննի և ալևի կրոնական համայնքների միջև բախումներն ավելի հաճախակի էին դարձել, կարելի է նշել, որ թեև 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների մեջ առկա էին նաև զինվորականության շուրջ կենտրոնացած գործոններ (երկրի սոցիալ-տնտեսական ճգնաժամը նպաստում էր զինվորականության սոցիալական վիճակի վատթարացմանը. մասնավորապես 1970-ական թթ. վերջերին մեծապես նվազել էին OYAK-ի եկամուտները՝ նախորդ տարիների համեմատ[249]), այնուամենայնիվ, 1980 թ. ռազմական հեղաշրջման

247 Глазунов О., Государственный переворот. Стратегия и технологии, Москва, 2006, стр. 84.

248 Hague R., Harrop M. & Breslin S., նշվ. աշխ., էջ 240-242.

249 Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Akça İ., Kolektif Bir Sermayedar Olarak Türk Silahlı Kuvvetleri. - Bir Parti. Türkiye'de Ordu, İstanbul, 2004, s. 225-270.

մեջ ընդհանուր առմամբ գերիշխող էին հասարակության շուրջ կենտրոնացած պատճառները:

1980 թ. ռազմական հեղաշրջումը երկար նախապատրաստված և մանրամասն ծրագրված գործողությունների ծնունդ էր[250]: Ռազմական հեղաշրջման նախապատրաստական գործընթացը սկսվել էր դեռ 1978 թ. աշնանը, երբ ԳՇ պետ Քենան Էվրենի հրահանգով հենց Գլխավոր շտաբում սկսեց գործել երկու սպայից կազմված աշխատանքային մի խումբ, որը պիտի ուսումնասիրեր երկրում ռազմական հեղաշրջման անհրաժեշտությունը[251]: Խմբի աշխատանքները ղեկավարում և համակարգում էր ԳՇ պետի տեղակալ, բանակի գեներալ Հայդար Սալթըքը: Այդ խմբի գլխավոր նպատակներից էր նաև ուսումնասիրել, թե ինչ հիմք պիտի ունենա զինվորականների միջամտությունը երկրի քաղաքական կյանքին: Այսպիսով, արդեն հեղաշրջման նախապատրաստման սկզբնական շրջանում երևում էր, որ զինվորականները կարևորում էին քաղաքական կյանքին միջամտության հիմնավորված լինելու հանգամանքը:

1979 թ. առաջին օրերից սկսած՝ ԳՇ պետ Քենան Էվրենը հաճախակիացրեց իր այցելությունները զորամասեր և հանդիպումները զինված ուժերի հրամանատարության հետ, որոնց ժամանակ Էվրենը մատնանշում էր երկրում տիրող մի շարք ճգնաժամային իրավիճակները՝ ըստ այդմ էլ ընդգծելով բանակի միջամտության անհրաժեշտությունը[252]: Զինվորականության հետ հանդիպումների ընթացքում Էվրենը փորձում էր հասկանալ նաև հնարավոր ռազմական հեղաշրջման նկատմամբ բանակում տիրող տրամադրվածությունը: 1979 թ. կեսերից սկսած՝ զինվորական վերնախավը ռազմական հեղաշրջմանն այլընտ-

250 Hale W., Turkish Politics and the Military, London, 1994, p. 232.
251 Oran B., Kenan Evren'in Yazılmamış Anıları, Ankara, 1990, s. 23.
252 Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, s. 106.

բանք չէր տեսնում, և արդեն 1979 թ. սեպտեմբերի 11-ին Հ. Սալթըքը ԳՇ սպայական կազմից մի քանի սպա ընտրեց ու ձեռնամուխ եղավ ռազմական հեղաշրջում ծրագրելու գործընթացին[253]: Դեկտեմբերին Ք. Էվրենը, վերադառնալով Բրյուսել կատարած այցից, քննարկումներ անցկացրեց ՔՈՒ հրամանատարության հետ քաղաքական կյանքին միջամտելու շուրջ: Քննարկումների ժամանակ ՔՈՒ հրամանատարության որոշ անդամներ պնդում էին անհապաղ հեղաշրջում իրականացնելու անհրաժեշտության մասին, սակայն բանակը որոշեց այդ փուլում հանդես գալ ընդամենը նախազգուշացնող նամակով[254]: Նախ Ք. Էվրենը և Հ. Սալթըքը երկար քննարկեցին այդ նամակի բովանդակությունը, որից հետո, դեկտեմբերի 27-ին, Չանքայա նախագահական նստավայրում Քենան Էվրենը նախագահ Ֆահրի Քորություրքին հանձնեց երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ բանակի մտահոգությունն արտահայտող նախազգուշացնող նամակը[255]: «Նախազգուշացնող նամակը» նաև նպատակ էր հետապնդում ստուգել հասարակության և իշխանությունների արձագանքները բանակի հավանական միջամտությանը. բացի այդ, նամակը, ըստ էության, ռազմական հեղաշրջման առաջին ազդանշանն էր:

1980 թ. մարտի սկզբին զինվորականությունն ակտիվացրեց հեղաշրջման նախապատրաստական աշխատանքները. Հ. Սալթըքի ղեկավարած խումբը պատրաստեց հեղաշրջման ռազմավարությունն ընդգրկող ծրագիրը, որը ստացավ «Դրոշակ գործողություններ» (Bayrak Harekati) անվանումը: Մարտի 4-16-ն ընկած ժամանակահատվածում ԳՇ պետը և ՔՈՒ հրամանատարությունն ուսումնասիրեցին և քննարկեցին Սալթըքի պատրաս-

253 Yalçın S. & Yurdakul D., REİS, Gladio'nun Türk Tetikçisi, s. 82.
254 Kenan Evren, Kenan Evren'in Anıları, Cilt-1, s. 328-330.
255 Alatlı E., նշվ. աշխ., էջ 456-457.

տած ծրագիրը, որից հետո՝ ապրիլի 2-ին, հանդիպելով ռազմական դրության զորքերի հրամանատարության հետ[256], ստացան այդ ծրագրի վերաբերյալ վերջիններիս հավանությունը[257]:

Զինվորականները ռազմական հեղաշրջման նախնական օր ընտրեցին հուլիսի 11-ը[258]՝ նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բ. Էջևիթի կուսակցությունը խորհրդարանում Դեմիրելի կառավարության անվստահության հարցն էր բարձրացրել, որը քվեարկության էր դրվելու հուլիսի սկզբին: Կառավարության տապալման դեպքում իշխանության ճգնաժամ էր առաջանալու, ինչը լրացուցիչ հիմնավորում էր ստեղծում զինվորականների միջամտության համար: Սակայն Դեմիրելի կառավարությունը վստահության քվե ստացավ ԹԱՄԺ-ում, և զինվորականները նպատակահարմար գտան հետաձգել հեղաշրջումը: Այս հանգամանքը ևս հաստատում է, որ զինվորական վերնախավը չափազանց կարևորում էր բանակի միջամտության հիմնավորված լինելը: Զինվորականները հասկանում էին, որ ինչքան հիմնավորված լինի իրենց միջամտությունը քաղաքական կյանքին, այնքան այն արդարացված և ընդունելի կլինի հասարակության կողմից: Այդ իսկ պատճառով զինվորականները որոշեցին սպասել հեղաշրջման նոր, ավելի հարմար պահի, ինչը երկար սպասել չտվեց:

Օգոստոսին կազմակերպիչները վերսկսեցին հեղաշրջման նախապատրաստման աշխատանքները. զինվորական հրամանատարությունը որոշեց հեղաշրջումն իրականացնել սեպտեմբերի 12-ին: Օրվա ընտրությունը պայմանավորված էր երկու հանգամանքով. Նախ՝ ԹԱՄԺ-ը ԱՓԿ առաջարկով քվեարկության էր դրել արտաքին գործերի նախարար Հայրեթթին Էրքմե-

256 1979 թ. դեկտեմբերին Քահրամանմարաշ քաղաքում տեղի ունեցած անկարգություններից հետո երկրի բազմաթիվ շրջաններում ռազմական դրություն մտցվեց:
257 Yalçın S. & Yurdakul D., Bay-Pipo, s. 327.
258 Oran B., նշվ. աշխ., էջ 35.

նի անվստահության հարցը, որը կայանալու էր սեպտեմբերի սկզբին, և Էրքմենին անվստահություն հայտնելու դեպքում հավանական էր Դեմիրելի ամբողջ կառավարության տապալումը, ինչը կառաջացներ իշխանության ճգնաժամ[259], և երկրորդ՝ սեպտեմբերի 9-ին նախատեսված էր Թուրքիայում անցկացնել ՆԱՏՕ Էնվիլ Էքսպրես (Anvil Express) կոչվող զորավարժությունները, և հնարավոր էր այդ զորավարժություններով քողարկել զինված ուժերի տեղաշարժերը[260]:

Օգոստոսի 26-ին ԳՇ պետը և ՋՈ հրամանատարությունը քննարկեցին հեղաշրջման օրակարգը. որոշվեց հեղաշրջումից անմիջապես հետո ստեղծել Ազգային անվտանգության խորհուրդ, որն ընդգրկելու էր ԳՇ պետին, ՋՈ հրամանատարներին, ժանդարմերիայի գլխավոր հրամանատարին: ԱԱԽ գլխավոր քարտուղար էր դառնալու Հայդար Սալթըքը (Հ. Սալթըքն այդ ժամանակ էգեյան բանակի հրամանատարն էր), իսկ ԳՇ պետ Քենան Էվրենը ղեկավարելու էր ԱԱԽ-ն: Հանդիպման ժամանակ որոշվեց նաև արգելել ԹԱՄԺ և կառավարության գործունեությունները[261]:

Սեպտեմբերի առաջին օրերին ԳՇ 2-րդ պետ, բանակի գեներալ Նեջդեթ Օզթուրունը հանդիպեց ռազմական դրության հրամանատարների հետ և մանրամասն ծանոթացրեց «Դրոշակ գործողություն» ծրագրին[262]: Սեպտեմբերի 8-ին վերջին անգամ ՋՈ հրամանատարությունը հավաքվեց և քննարկեց հեղաշրջման հետ կապված մանրամասները, հրամանատարները հաստատեցին ԱԱԽ հայտարարությունների տեքստերը[263]: Հեղաշրջումից առաջ որոշում ընդունվեց ֆինանսների նախարա-

259 Սեպտեմբերի սկզբին ԹԱՄԺ-ը անվստահություն հայտնեց Հ. Էրքմենին, սակայն Դեմիրելին հաջողվեց պահպանել կառավարությունը:
260 Birand M. A., նշվ. աշխ., էջ 106.
261 Kenan Evren, Kenan Evren'in Anıları, Cilt-1, s. 526-528.
262 Նույն տեղում, էջ 534:
263 Նույն տեղում, էջ 537-540:

րի պաշտոնը վստահել Թուրգութ Օզալին[264], որը վայելում էր արևմտյան երկրների վստահությունը և «հունվարի 24-ի» բարեփոխումների ծրագրի հեղինակն էր: Այդ քայլը, եթե նույնիսկ պարտադրված չէր արևմտյան ուժերի կողմից, ապա արվում էր նրանց բարյացակամությունը շահելու նպատակով՝ ընդգծելով «հունվարի 24-ի» բարեփոխումների ծրագիրը շարունակելու զինվորականների մտադրությունները:

Ըստ էության, նախապատրաստական բոլոր գործողություններն ավարտելուց և զորքերի որոշ վերադասավորումներ կատարելուց հետո կազմակերպիչները սկսեցին սպասել ԳՇ պետի հրամանին: Սեպտեմբերի 11-ի երեկոյան ձերբակալվեց և գաղտնի Գլխավոր շտաբ բերվեց ԹՐԹ-ի (Türkiye Radyo ve Televizyon Kurumu - Թուրքիայի ռադիոյի և հեռուստատեսության վարչություն) տնօրեն Դողան Քասարօղլուն: Նրան այնտեղ պահեցին մինչև հեղաշրջման գործողությունների ավարտը: Գլխավոր շտաբ բերվեց նաև հեռուստատեսության հաղորդավար Մեսութ Մերթջանին, որին հրամայված էր ծանոթանալ ԱԱԽ հայտարարություններին՝ հեռուստատեսությամբ կարդալու համար: Կազմակերպիչները Գլխավոր շտաբ բերեցին նաև ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներ և այնտեղ պահեցին մինչև գործողությունների ավարտը: Ժամը 2-ին զինվորականները հայտնեցին հեղաշրջում սկսելու մասին գաղտնաբառը, որից հետո սկսվեցին բուն գործողությունները[265]: Զորքերը նախ շրջապատեցին քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների գրասենյակները: Ի դեպ, զինվորականները հատուկ ուշադրություն էին դարձնում այն կուսակցություններին և կազմակերպություններին, որոնցից որոշակի հակազդեցություն էին

264 Alatlı E., նշվ. աշխ., էջ 607-610.
265 Родионов А., Турция - перекресток судеб. Воспоминания посла, Москва, 2006, стр. 243.

սպասում, ինչպես, օրինակ՝ ԱՇԿ-ին, ԴԻՍԿ-ին, «գաղափարապաշտների» կազմակերպություններին և այլն: Ջինվորականները Գլխավոր շտաբ «հրավիրեցին» չորս խոշոր կուսակցությունների գլխավոր քարտուղարներին՝ Հ. Չեթինին (ՀԺԿ), Ն. Մենթեշեին (ԱԿ), Օ. Ասիլթյուրքին (ԱՓԿ), Ն. Գյուլթեքին (ԱՇԿ) և նրանց ծանոթացրին ԱԱԽ 1-ին հայտարարությանը: Կուսակցությունների ղեկավարներից Բյուլենթ Էջևիթին և Սուլեյման Դեմիրելին փոխադրեցին Դարդանելի ափին գտնվող Համզաքյոյ կոչվող զինվորական կայազոր, Նեջմեթթին Էրբաքանին՝ Էգեյան ծովում գտնվող Ուզունադա կղզի, որտեղ, երեք օր փախուստի մեջ գտնվելուց հետո, նրան միացավ նաև Ալփարսլան Թյուրքեշը: Հանրապետական վստահություն կուսակցության նախագահ Թուրհան Ֆեյզիօղլուն և Սենատի նախագահ Իհսան Չաղլայանգիլը տնային կալանքի ենթարկվեցին: Ջինվորականները ձերբակալեցին Ազգայնական շարժում կուսակցության և Ազգային փրկություն կուսակցության բոլոր պատգամավորներին: Կարճ ժամանակահատվածում առանց որևէ լուրջ դիմադրության զինվորականներն իրենց վերահսկողության տակ վերցրին ռազմավարական նշանակության բոլոր օբյեկտները, կալանավորեցին ազդեցիկ քաղաքական գործիչներին՝ զրկելով հակազդեցության ամենաչնչին հնարավորությունից, ինչն ինքնին խոսում է հեղաշրջման մանրամասն կազմակերպված լինելու մասին: Կարևոր ենք համարում փաստել, որ 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումն իրականացավ առանց լուրջ հակազդեցության, քանի որ այն ուներ նաև հասարակական պահանջ:

Սեպտեմբերի 12-ի առավոտյան ժամը 04:00-ին հեռուստատեսությամբ հնչեց ռազմական ուսումնարանի քայլերգը, որից հետո ընթերցվեց Ազգային անվտանգության խորհրդի (Milli Güvenlik Konseyi) առաջին հայտարարությունը, որտեղ նշվում

էր, որ «երկրի և ազգի միասնության պահպանման, հնարավոր քաղաքացիական պատերազմի կանխման, պետության և նրա հեղինակության վերականգնման» նպատակով թուրքական բանակը, «կատարելով պարտքը», իր ձեռքն է վերցնում երկրի ամբողջ իշխանությունը: Հայտարարության մեջ նաև տեղեկացվում էր, որ լուծարվել են խորհրդարանը և կառավարությունը[266]:

Նույն օրը հրապարակվեց ԱԱԽ ևս 7 հայտարարություն: Օրինակ, 4-րդ հայտարարության մեջ նշվում էր, որ երկրի ամբողջ իշխանությունն անցնում է նորաստեղծ Ազգային անվտանգության խորհրդին, ներկայացված էր նաև խորհրդի անդամների կազմը. նախագահ՝ ԳՇ պետ Քենան Էվրեն, անդամներ՝ ցամաքային զորքերի հրամանատար Նուրեթթին Էրսին, ռազմաօդային զորքերի հրամանատար Թահսին Շահինքայա, ռազմածովային զորքերի հրամանատար Նեժաթ Թյումեր և ժանդարմերիայի հրամանատար Մեդաթ Ջելասուն: ԱԱԽ գլխավոր քրտուղար էր նշանակվում Հայդար Սալթըքը[267]:

Հեղաշրջումն արդեն կայացած փաստ էր. թուրքական բանակը քսան տարիների ընթացքում արդեն երրորդ անգամ ուղղակի միջամտեց երկրի քաղաքական անցուդարձին:

Արտաքին գործոնի դերը սեպտեմբերի 12-ի հեղաշրջման իրականացման գործում

1980 թ. ռազմական հեղաշրջման նախապատրաստման և իրականացման գործընթացի վրա որոշակի ազդեցություն ունեցան նաև արտաքին գործոնները: Սառը պատերազմի տարինե-

266 Milli Güvenlik Konseyi'nin 1 Numaralı bildirisi, http://www.belgenet.com/12eylul/12091980_01.html

267 Milli Güvenlik Konseyi'nin 4 Numaralı bildirisi, http://www.belgenet.com/12eylul/12091980_04.html

ին Թուրքիան բացահայտ արևմտամետ քաղաքականություն էր իրականացնում: 1952 թ. անդամակցելով ՆԱՏՕ-ին՝ Թուրքիան ամրապնդեց հարաբերություններն արևմտյան երկրների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի հետ: Թուրքիայի ղեկավարները երկրի ընդգծված արևմտամետ արտաքին քաղաքականության հիմնավորման համար որպես գլխավոր կովան նշում էին Խորհրդային Միության սպառնալիքը[268]: Սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ը մեծածավալ ֆինանսական և ռազմական օգնություն էր հատկացնում Թուրքիային. թուրքական բանակն էականորեն վերազինվեց, երկրի տարածքում տեղակայվեցին ռազմական բազաներ, թուրքական սպայական կազմը որակյալ վերապատրաստում անցավ և այլն:

Սակայն անցած դարի 70-ական թթ. թուրք-ամերիկյան հարաբերություններում որոշակի լարվածություն էր նկատվում, ինչը հատկապես ընդգծվեց, երբ թուրքական զորքերը, առանց ԱՄՆ և ՆԱՏՕ համաձայնությունը ստանալու, գրավեցին Կիպրոսի տարածքի մոտ 38%-ը: Կիպրոսում թուրքական բանակի գործողություններին ի պատասխան՝ 1974 թ. հոկտեմբերի 18-ին ԱՄՆ կոնգրեսն ընդունեց Թուրքիային հատկացվող ռազմական օգնության վրա էմբարգո դնելու մասին բանաձև: Կոնգրեսականները հիմնավորում էին իրենց որոշումն այն հանգամանքով, որ Կիպրոսում ռազմական գործողությունների ժամանակ Թուրքիան օգտագործել է ԱՄՆ-ից ստացած զինամթերքը, որն, ըստ համաձայնության, կարող էր գործածվել միայն պաշտպանության, ներքին անվտանգությունն ապահովելու կամ համատեղ պաշտպանողական գործողությունների ժամանակ[269]:

---

268 Cumhuriyet, 20, 12, 1972.

269 Поцхверия Б., Внешняя политика Турции в 60-х – начале 80-х годов XX в., Москва, 1986, стр. 132.

Ամերիկյան կոնգրեսականների էմբարգոյին 1975 թ. հունիսի 25-ին հետևեց Թուրքիայի կառավարության հայտարարությունը՝ համատեղ պաշտպանության ռազմաբազաների վրա միանձնյա վերահսկողություն հաստատելու վերաբերյալ: Թուրքական կառավարությունն այդ քայլով, ըստ էության, դադարեցնում էր ամերիկյան 25 ռազմաբազայի գործունեությունը, բացառություն կազմեցին մի քանիսը միայն, այդ թվում Ինջիրլիքում գտնվող ռազմաօդային բազան[270]: Միաժամանակ թուրքական կառավարությունը հայտարարեց 1969 թվականի թուրք-ամերիկյան համաձայնագրից հրաժարվելու մասին:

Այդպիսով, 1970-ական թթ. ԱՄՆ դիրքերը Թուրքիայում զգալիորեն թուլացան, ինչը որոշ վերլուծական և քաղաքական շրջանակներ պայմանավորում էին այն հանգամանքով, որ ամերիկյան իշխանական շրջանակներում այդ ժամանակաշրջանում որպես տարածաշրջանային առաջնային երկիր ավելի շատ դիտարկվում էր Իրանը: 1974-1983 թթ. Թուրքիայում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Ռոդիոնովը գրում է, որ մինչև Իրանի իսլամական հեղափոխությունը «տպավորությունն այնպիսին էր, որ Թուրքիայի նշանակությունը Պենտագոնի համար նվազում էր. Անկարայում փակվում էին մի շարք ամերիկյան ռազմական բազաներ, միաժամանակ Իրանում ուժեղանում էր ամերիկյան ռազմական դիրքերի ամրապնդումը»[271]:

Սակայն Իրանում իսլամական հեղափոխությունը և խորհրդային զորքերի գործողություններն Աֆղանստանում խախտեցին տարածաշրջանում ուժերի հաստատված հավասարակշռությունը՝ թուլացնելով ԱՄՆ դիրքերը: Միացյալ Նահանգներում ստիպված էին տարածաշրջանում դիրքերը վերականգնելու նոր ուղիներ փնտրել, ինչը հանգեցրեց Թուրքիայի դերի կտրուկ

270 Նույն տեղում, էջ 137:
271 Родионов А., Турция - перекресток судеб. Воспоминания посла, стр. 171-172.

աճին[272]: 1979 թ. հունվարին ԱՄՆ-ում ստեղծվեց պետական հատուկ հանձնախումբ՝ ռազմավարական հետաքրքրություն ներկայացնող երկրների, այդ թվում և Թուրքիայի ներքաղաքական իրավիճակներն ուսումնասիրելու նպատակով: Հանձնախումբը, որի մեջ ընդգրկված էին բարձրաստիճան պաշտոնյաներ և գիտնականներ, պետք է պատասխաներ՝ հնարավո՞ր է արդյոք այդ երկրներում իրանական սցենարի կրկնությունը, և նման դեպքերում ինչպիսի՞ն պետք է լինի ԱՄՆ հակազդեցությունը: Այդ ժամանակաշրջանում Վաշինգտոնին հատկապես անհանգստացրին Թուրքիայի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները[273]: Թուրքիայում ահաբեկչության ահագնացումը, ձախ շարժման ընդլայնումը, իսլամական ուժերի գործողությունները և իշխանությունների կողմից իրավիճակի անվերահսկելիությունը դիտարկվեցին որպես հակաամերիկյան հեղափոխության հնարավոր ուղի և լրջորեն մտահոգեցին ԱՄՆ ղեկավարներին:

1979 թ. հունվարին Գվադելուպայում կայացավ ԱՄՆ նախագահ Ջիմի Քարթերի, Ֆրանսիայի նախագահ Ժիսկար դ'Էստենի, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջեյմս Քալահենի և Գերմանիայի կանցլեր Հելմութ Շմիդտի հանդիպումը, որի ժամանակ որոշվեց անհապաղ օգնություն ցույց տալ Թուրքիային[274]: Այդ օգնությունը երկար սպասել չտվեց, և շուտով արևմտյան ֆինանսական կազմակերպություններն սկսեցին մեծածավալ ֆինանսավարկային միջոցներ տրամադրել Թուրքիային՝ երկիրը

272 Հարկ է նշել, որ Իրանի իսլամական հեղափոխությունը՝ իր հնարավոր արտահանման սպառնալիքով, և Աֆղանստանում սովետական զորքերի ռազմական գործողությունները՝ տարածաշրջանում սովետական ազդեցության ուժեղացման վտանգով, մտահոգություններ առաջացրին նաև Թուրքիայի զինվորական վերնախավի շրջանակներում:

273 Кремнюк В., Борьба Вашингтона против революции в Иране, Москва, 1984, стр. 157-158.

274 Поцхверия Б., Турция, США и НАТО в конце 70-х – начале 80-х годов, Турция. История, экономика, политика, Москва, 1984, стр. 86.

ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու նպատակով: Այդ միջոցառումների շրջանակներում կարելի է դիտարկել նաև «հունվարի 24-ի» տնտեսական բարեփոխումների ծրագիրը, որը ստեղծվեց արևմտյան ֆինանսական կազմակերպությունների որոշիչ մասնակցությամբ և միտված էր երկրի տնտեսության ճգնաժամային վիճակը կարգավորելուն[275]: Սակայն Թուրքիայում տիրող անկայուն և անվերահսկելի իրավիճակը, ըստ էության, անհնար էր դարձնում միայն տնտեսական միջոցներով երկրի ներքին դրությունը կարգավորելու հնարավորությունները: Այդ իրողություններում ռազմական հեղաշրջումը սկսեց դիտվել որպես լավագույն միջոց երկիրը նման իրավիճակից դուրս բերելու և արևմտյան ճամբարում պահելու համար[276]:

ԱՄՆ իշխանական շրջանակներում Թուրքիայում ռազմական հեղաշրջման անհրաժեշտությունն առաջին անգամ սկսեց քննարկվել 1979 թ. սկզբներին[277]: Հատկանշական է, որ հեղաշրջման անհրաժեշտության մասին պնդում էին Պենտագոնը և Կենտրոնական հետախուզական վարչությունը, իսկ վաշինգտոնյան քաղաքացիական իշխանական շրջանակները սկզբում դեմ էին արտահայտվում Թուրքիայում ռազմական հեղաշրջում իրականացնելուն[278]: Վաշինգտոնում գտնում էին, որ պետք է ֆինանսական աջակցություն ցուցաբերել Էջևիթի կառավարությանը՝ փորձելով ժողովրդավարական միջոցառումներով

275 Çölaşan E., 24 Ocak Bir Dönemin Perde Arkası, İstanbul, 1983, s. 57-73.

276 Սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ի և Խորհրդային Միության կողմից ռազմական հեղաշրջումները դիտվում էին թե՛ որպես երկրում ընդդիմադիր շարժումների ճնշման և թե՛ երկրի քաղաքական ուղղության փոփոխության հնարավոր միջոց: Ֆինվորականները, հաճախ չունենալով բավարար աջակցություն հասարակության կողմից, կարողանում էին հեղաշրջում իրականացնել և ղեկավարել երկիրը՝ ստանալով գերիզոր ուժի տնտեսական, քաղաքական և ֆինանսական աջակցությունը: Այդ մասին մանրամասն տե՛ս Hague R., Harrop M. & Breslin S., Comparative Government and Politics, An Introduction, London, 1998, p. 239.

277 Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, s. 193.

278 Yalçın S. & Yurdakul D., Bay-Pipo, s. 326.

Թուրքիան դուրս բերել ճգնաժամից և կայունություն հաստատել երկրում: Սակայն Էջևիթի կառավարության անարդյունավետ քաղաքականությունը և ուժային կառույցների որոշակի ճնշումները նպաստեցին ԱՄՆ դիրքորոշման կարծրացմանը, և գերիշխող դարձավ ռազմական հեղաշրջում իրականացնելու անհրաժեշտության գիտակցումը[279]: Այդպիսով, 1979 թվականից սկսած՝ ԱՄՆ-ում թուրքական բանակի միջամտությունը երկրի քաղաքական անցուդարձին դիտվում էր որպես Թուրքիայի արևմտականացման և կայունության վերահաստատման հիմնական և ամենաարդյունավետ միջոց: Այդ իրողություններում ԱՄՆ-ը քարտ բլանշ տվեց թուրքական բանակի հրամանատարությանը՝ ռազմական հեղաշրջում իրականացնելու համար:

Թուրքիայում ռազմական հեղաշրջում իրականացնելու հետ կապված ամերիկյան քաղաքականության փոփոխության առաջին ազդանշանները հնչեցին 1979 թ. հունիսին ԳՇ պետ Քենան Էվրենի՝ ԱՄՆ կատարած այցի շրջանակներում ԱՄՆ նախագահի անվտանգության հարցերով խորհրդական Զբիգնև Բժեզինսկու հետ հանդիպման ժամանակ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Թուրքիայի ներքաղաքական իրավիճակը և բանակի դերը ներքաղաքական կյանքի հետագա զարգացումներում: Բժեզինսկին նշում էր, որ ԱՄՆ ղեկավարությունը «ցանկանում է տեսնել կայուն Թուրքիա, զարգացումները, սակայն, այդ ճանապարհով չեն գնում. անհրաժեշտ է ինչ-որ քայլեր ձեռնարկել»[280]: Զ. Բժեզինսկին ընդգծում էր, որ Իրանից և Աֆղանստանից հետո ԱՄՆ-ը չի ցանկանում կորցնել նաև Թուրքիան[281]: Փաստորեն, Ք. Էվրենի և Զ. Բժեզինսկու հանդիպման ժամանակ առաջին անգամ հնչեցին հայտարարություններ,

279 Նույն տեղում, էջ 326:
280 Alatlı E., Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, s. 398.
281 Yalçın S. & Yurdakul D., նշվ. աշխ., էջ 326.

որոնք թուրքական զինվորականությունից կոնկրետ քայլեր էին ակնկալում երկրում իրավիճակը կարգավորելու համար: Թուրքական զինվորականությանն ուղղված նմանօրինակ կոչերն ու հորդորներն ավելի հաճախակի դարձան 1980 թ. ընթացքում, և արևմտյան զինված ուժերի ներկայացուցիչներն ամեն առիթով նշում էին, որ Թուրքիայում բանակը պետք է միջամտի և երկրում կարգուկանոն հաստատի[282]: Օրինակ՝ 1980 թ. մայիսին Թուրքիայի ԳՇ 2-րդ պետ, բանակի գեներալ Հ. Սալթըքի և ՆԱՏՕ զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ռոջերսի միջև Բրյուսելում կայացած հանդիպման ժամանակ վերջինս ուղղակիորեն հարցնում էր, թե Թուրքիայում տիրող անկարգությունների դեմ թուրքական բանակն ինչ է մտադիր ձեռնարկել[283]:

ԱՄՆ պաշտոնական ներկայացուցիչները, թեև հեղաշրջումից հետո ամեն կերպ ժխտում էին դրա մասին տեղյակ լինելու հանգամանքը[284], սակայն պետք է նշել, որ ԱՄՆ իշխանական շրջանակները ոչ միայն իրազեկված էին հեղաշրջման նախապատրաստման գործընթացին, այլև դրա հետ կապված գրեթե բոլոր հարցերը նախօրոք համաձայնեցված էին Վաշինգտոնի հետ: Պատահական չէր, որ հեղաշրջման նախապատրաստման փուլում յուրաքանչյուր վճռական քայլին նախորդում էր թուրք բարձրաստիճան զինվորականների այցն արևմտյան երկրներ: Այսպես, 1979 թ. ամռանը Ք. Էվրենը, վերադառնալով ԱՄՆ կատարած այցից, երկրի զինված ուժերի հրամանատարների հետ հանդիպում կազմակերպեց և առաջին անգամ քննարկեց զինվորականների՝ քաղաքական կյանքին միջամտելու անհրաժեշտությունը[285]: Ք. Էվրենի՝ 1979 թ. Բրյուսել կատարած այցին ան-

282 Այս մասին առավել մանրամասն տե՛ս Birand M. A., նշվ. աշխ., էջ 193-197:
283 Oran B., Kenan Evren'in Yazılmamış Anıları, Ankara, 1990, s. 33.
284 Paul J., The Coup. – MERIP Reports, no. 93, Turkey: The Generals Take Over, Jan. 1981, p. 4.
285 Alatlı E., նշվ. աշխ., էջ 402-406.

միջապես հաջորդեց զինվորականության նախազգուշացնող նամակը՝ ուղղված երկրի քաղաքական ուժերին, որն, ըստ էության, 1980 թ. ռազմական հեղաշրջման առաջին ազդանշանն էր: Սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից մի քանի օր առաջ ԱՄՆ-ում էր գտնվում ռազմաօդային զորքերի հրամանատար Թահսին Շահինքայան, ով ԱՄՆ բարձրաստիճան զինվորականության հետ հանդիպման ժամանակ քննարկեց զինվորական հեղաշրջման վերջին մանրամասները[286]: Այս հանգամանքը հաստատում է վերը նշված մեր այն տեսակետը, որ հեղաշրջման նախապատրաստման գործընթացում թուրք գեներալներն առանց ԱՄՆ իշխանական շրջանակների համաձայնության որոշիչ քայլեր չէին ձեռնարկում:

Հարկ է նշել, որ թեև ԱՄՆ-ն ուղղակիորեն չէր կազմակերպել հեղաշրջումը, սակայն ամեն կերպ աջակցում էր կազմակերպիչներին. ռազմական հեղաշրջման նախապատրաստման հարցերով զբաղվում էր Թուրքիայում Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) ներկայացուցիչ Փոլ Հենցը[287]: Հեղաշրջումից տարիներ անց հրապարակված նյութերը հաստատում են այն տեղեկությունները, որ ուղղակի կապ է գոյություն ունեցել Թուրքիայում ԿՀՎ ներկայացուցիչ Փոլ Հենցի և հեղաշրջումն իրականացրած գեներալների միջև: Ուշագրավ է այն փաստը, որ 1980 թ. սեպտեմբերի 12-ին Փ. Հենցը, զանգահարելով Սպիտակ տուն, զեկուցել է. «Մեր տղաները արեցին դա» (“our boys [in Ankara] did it.”)[288]:

1980 թ. ռազմական հեղաշրջումը հիմնականում դրական արձագանք ստացավ արևմտյան երկրներում[289], հատկապես ԱՄՆ պաշտոնական շրջանակներում հեղաշրջումը բացահայտ գոհու-

286 Tuşalp E., Eüylül İmparatorluğu. Doğuşu ve Yükselişi, İstanbul, 1988, s. 45-46.
287 Alatlı E., նշվ. աշխ., էջ 543:
288 Şimşek E., Türkiye'de İstihbaratçılık ve MİT, İstanbul, 2004, s. 357.
289 Birand M. A., նշված աշխ., էջ 300-304.

նակությամբ ընդունեցին: ԱՄՆ-ի կողմից այն գնահատվեց որպես կայունության հուսալի միջոց և Թուրքիայի արևմտամետ քաղաքականության ապահով երաշխիք[290]: Արևմտյան զանգվածային լրատվամիջոցներում ևս մեծ ոգևորությամբ էր ընդունվում հեղաշրջման փաստը. գրեթե բոլոր թերթերը նշում էին, որ թուրքական զինվորականությունը ձգտում է կայունություն հաստատել՝ փրկելու երկիրը կործանման վտանգից, որին կարող էին հանգեցնել ծայրահեղական շարժումները[291]:

Այսպիսով, կարելի է նշել, որ արտաքին գործոնները որոշակի ներգործություն ունեցան ռազմական հեղաշրջման կազմակերպման գործընթացում: 1970-ական թթ. Թուրքիայի նշանակությունը նոր կարևորություն ստացավ ԱՄՆ-ի համար, և վերջինս, չցանկանալով Իրանից հետո կորցնել նաև Թուրքիան որպես դաշնակից, կանաչ լույս վառեց թուրքական զինվորականության առաջ՝ ռազմական հեղաշրջում իրականացնելու համար:

290 Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Москва, 1991, стр. 60.

291 Christian Science Monitor, 15 September 1980; International Herald Tribune, 13-14 September 1980.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԹՈՒՐՔԻԱՆ 1980-1983 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ

Ջանգվածային պարժամիջոցներ

Սեպտեմբերի 12-ի հեղաշրջումից հետո ԱԱԽ-ն ռազմական դրություն մտցրեց մի շարք շրջաններում և նշանակեց հրամանատարներ՝ տեղերում իշխանությունն իրականացնելու նպատակով: ԱԱԽ-ն լուծարեց ԹԱՄԺ-ը և կառավարությունը, դադարեցրեց կուսակցությունների, կազմակերպությունների, արհմիությունների (բացառությամբ պետության վերահսկողության տակ գտնվող Թյուրք-Իշ-ի) գործունեությունը, արգելեց ցույցերն ու գործադուլները և այլն:

Այսպիսով, երկրի ամբողջ իշխանությունն անցավ անսահմանափակ իշխանությամբ օժտված ԱԱԽ ձեռքը, և Թուրքիայում սկսվեց «անցումային շրջանը», որը սովորաբար հաջորդում է ռազմական հեղաշրջումներին: 1980 թ. հեղաշրջման անցումային շրջանը նախորդ հեղաշրջման (1960 թ.) և զինվորականների «միջամտության» (1971 թ.) անցումային շրջանների համեմատ բավական երկար տևեց՝ ավելի քան երեք տարի: Դա հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ 1980 թ. սեպտեմբերի 12-ի պատճառները խոր ու տարաբնույթ էին և հեղաշրջման նպատակն ուղղված չէր գլխավորապես մեկ կուսակցության կամ երևույթի դեմ, ինչպես դա տեղի ունեցավ 1960 թ. հեղաշրջման (այն հիմնականում ուղղված էր իշխող Դեմոկրատական կուսակցության դեմ) և 1971 թ. զինվորականների «միջամտության» ժամանակ (նպատակ էր հետապնդում կանխել

ավելի ցածր աստիճանակարգ ունեցող զինվորականների կողմից նախապատրաստվող ռազմական հեղաշրջումը), և հետևաբար զինվորականներից ավելի երկար ժամանակ էր պահանջվելու հեղաշրջման պատճառները վերացնելու համար:

Զինվորական վերնախավի՝ իշխանությունը երկար տնօրինելու նպատակներն ակնհայտ դարձան արդեն սեպտեմբերի 16-ին ԱԱԽ նախագահ Քենան Էվրենի մամուլի ասուլիսի ժամանակ: Էվրենը նշեց հեղաշրջման մի շարք նպատակներ՝ վերացնել անիշխանությունը և ահաբեկչությունը, ապահովել հասարակության անվտանգությունը, կարգուկանոն հաստատել, բարձրացնել երկրի հեղինակությունը, բարելավել տնտեսության վիճակը, օրենսդրական փոփոխություններ իրականացնել, հետո նոր իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին: Քենան Էվրենը, թեև ընդգծում էր իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելու անհրաժեշտությունը, սակայն չէր նշում այն իրականացնելու կոնկրետ ժամկետներ[292]: Այսպիսով, պարզ էր դառնում, որ զինվորական իշխանությունները նպատակադրված էին երկրում բազմաթիվ փոփոխություններ իրականացնել և հետո նոր իշխանությունը փոխանցել կուսակցություններին, ինչը երկար ժամանակ էր պահանջելու:

Սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո առաջին օրերի ընթացքում ԱԱԽ-ն որոշակի դժվարությունների առջև կանգնեց՝ կապված կառավարության կազմավորման հետ: Հեղաշրջման հեղինակները կառավարության ղեկավարի պաշտոնում նշանակելու համար նախ քննարկեցին ԱԱԽ գլխավոր քարտուղար Հայդար Սալթըքի թեկնածությունը, սակայն այն բանից հետո, երբ Սալթըքը հրաժարվեց ղեկավարել կառավարությունը՝ զինվորական ծառայությունը շարունակելու պատճառաբանությամբ, ԱԱԽ-ն կանգ առավ Թուրհան Ֆեյզիող-

292 Kenan Evren'in Söylev ve Demeçleri, Ankara, 1981, s. 15-18.

լուի թեկնածության վրա[293]: Հանրապետական վստահություն կուսակցության[294] (ՀՎԿ) առաջնորդ Թուրհան Ֆեյզիօղլուն դիտվում էր որպես Աթաթյուրքի ստեղծած Հանրապետական-ժողովրդական կուսակցության քաղաքական և գաղափարական ժառանգության հավատարիմ հետևորդ: Նրան վարչապետի պաշտոնում նշանակելով՝ զինվորականները ցանկանում էին ընդգծել նաև Աթաթյուրքի նախանշած ճանապարհով գնալու նպատակադրվածությունը[295]: Հետաքրքիր է նշել, որ 1971-73 թթ. անցումային շրջանում զինվորականները, կառավարության ղեկավար ընտրելիս առաջնորդվելով նույն սկզբունքներով, վարչապետ նշանակեցին Ֆերիթ Մելենին (22.05.1972 - 15.04.1973 թթ.) [296], որը Ֆեյզիօղլուի ղեկավարած Վստահություն կուսակցության անդամ էր:

Ֆեյզիօղլուն կառավարություն կազմելու խնդրում որոշակի բարդությունների առաջ կանգնեց. նա իր կառավարության կազմի մեջ փորձեց ընդգրկել քաղաքական մեծամասնություն ունեցող կուսակցությունների՝ ՀԺԿ և ԱԿ անդամներին: Նշված կուսակցությունների ղեկավարները, սակայն, սկսեցին տարբեր պահանջներ ներկայացնել կառավարության մաս կազմելու համաձայնության դիմաց՝ փորձելով որոշակի ազդեցություն ունենալ քաղաքական գործընթացների վրա[297]: Դա, բնականա-

293 Kenan Evren, Kenan Evren'in Anıları, Cilt-4, İstanbul, 1991, s. 31-32.

294 Հանրապետական-ժողովրդական կուսակցության մի շարք անդամներ՝ Թուրհան Ֆեյզիօղլուի գլխավորությամբ, 1967 թ. ընդդիմանալով կուսակցության նոր՝ «կենտրոնից ձախ» ուղղությանը, դուրս եկան ՀԺԿ-ի կազմից և հիմնադրեցին Վստահության կուսակցությունը, որի հիման վրա էլ 1973 թ. ստեղծվեց Հանրապետական վստահության կուսակցությունը:

295 Mehmet Ali Birand, 12 Eylül Saat: 04:00, s. 307-310.

296 Տե՛ս ԹԱՄԺ-ի պաշտոնական վեբ կայքում, http://www.tbmm.gov.tr/hukumetler/hukumetler.htm

297 Ֆեյզիօղլուի և զինվորականների միջև կար նաև հակասություն՝ կապված կառավարության մեջ Օզալի հետագա դերակատարման հետ: Զինվորականները պնդում էին, որպեսզի Օզալը նշանակվի փոխվարչապետ և Էկոնոմիկայի նախարար, սակայն Ֆեյզիօղլուն ավելի սահմանափակ դերակատարում էր նախատեսում Օզալի համար:

բար, զինվորականների ծրագրերի մեջ չէր մտնում, և նրանք նոր թեկնածություն առաջ քաշեցին: Ի վերջո, Ֆեյզիոոլլուի «վարչապետության» շրջանը տևեց ընդամենը 5 ժամ, և նրա ձախողումից հետո ԱԱԽ-ն սեպտեմբերի 21-ին վարչապետի պաշտոնում նշանակեց ռազմաօդային զորքերի նախկին հրամանատար, զորացրված ծովակալ Բյուլենթ Ուլուսուին[298], ով հեղաշրջման նախապատրաստման նախնական փուլում որոշակի մասնակցություն էր ունեցել: Ուլուսուի կառավարության մեջ ընդգրկված էին անկուսակցական տեխնոկրատներ և մի քանի զորացրված զինվորականներ[299]:

Սեպտեմբերի 30-ին ԱԱԽ-ն հաստատեց Բ. Ուլուսուի կառավարության ծրագիրը, որի վերլուծությունից պարզ է դառնում, որ այն երեք հիմնական խնդիր էր նախանշում՝ երկրում կարգուկանոն հաստատել, բարելավել տնտեսական դրությունը և օրենսդրական դաշտում բազմաթիվ, այդ թվում և սահմանադրական փոփոխություններ իրականացնել: Ըստ էության, զինվորական իշխանությունների առաջնային նպատակը երկրում կարգուկանոն հաստատելն էր, ուստի ստորև կանդրադառնանք անցումային շրջանում այդ խնդրի իրականացմանը: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական բնագավառում կառավարության քաղաքականությանը, այն շարունակելու էր «հունվարի 24-ի» բարեփոխումների ծրագիրը և միջազգային կազմակերպություններից ու պետություններից ակնկալվող վարկերի միջոցով փորձելու էր երկիրը դուրս բերել տնտեսական ճգնաժամից: Ավելացնենք միայն, որ «հունվարի 24-ի» բարեփոխումների ծրագիրն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով փոխվար-

298 Karabelias G., The Evolution of Civil-Military Relation of Post-war Turkey: 1980-95, Middle Eastern Studies, Oct. 1999, p. 134.

299 Զինվորականներ էին ներքին գործերի, պաշտպանության, ազգային կրթության, առողջապահության և սոցիալական օգնության, մաքսային և մենաշնորհների, սպորտի և նրիտասարդության նախարարները:

չապետ և էկոնոմիկայի նախարար նշանակվեց Թուրգութ Օզալը. այդ պաշտոնում Օզալի նշանակումը որոշված էր դեռ հեղաշրջման նախապատրաստական փուլում:

Ինչպես արդեն նշեցինք, անցումային շրջանում երկրում կարգուկանոն հաստատելը զինվորական իշխանությունների գլխավոր նպատակն էր, և որպես դրա հիմնական միջոց՝ բարձրագույն զինվորականների տեսանկյունից երկրի ողջ տարածքում պետք է կիրառվեին զանգվածային պատժամիջոցներ: Ռազմական հեղաշրջումից անմիջապես հետո զանգվածային ձերբակալություններ սկսվեցին. սկզբնական շրջանում որպես ձերբակալությունների գլխավոր թիրախ ընտրվեցին ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունները և «գորշ գայլերի» ազգայնամոլական շարժման ակտիվիստները: Դրանով զինվորականները փորձում էին կտրուկ միջոցներով վերջ դնել երկիրը կաթվածահար անող ահաբեկչությանը և բացառել այդ շարժումների հնարավոր հակազդեցությունը: Զինվորականները չափազանց խիստ պատժամիջոցներ կիրառեցին ձախ և աջ ծայրահեղականների դեմ. արդեն 1980 թ. հոկտեմբերի 8-ին մահապատժի ենթարկվեց երկու երիտասարդ՝ 24-ամյա ձախակողմյան Նեջդեթ Ադալը և 22-ամյա աջ ծայրահեղական, «գորշ գայլ» Մուսթաֆա Փեհլիվանօղլուն[300]:

Թուրքական մամուլի հրապարակած տվյալները փաստում են, որ ձերբակալությունները հիրավի զանգվածային բնույթ էին կրում: Համաձայն այդ տվյալների, ռազմական հեղաշրջումից հետո, երկու ամսվա ընթացքում (սեպտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 12-ը) ահաբեկչական գործողություններին մասնակցելու մեղադրանքով ձերբակալվել է 7945 մարդ, այն դեպքում, երբ 1979 թ. նույն ժամանակահատվածում ձերբակալվել էր ընդամենը

300 Günaydın, 09, 11, 1980.

170-ը[301]: Թուրքական «Միլիյեթը» գրում էր, որ այդ երկու ամիսների ընթացքում իշխանություններն առգրավել են 160 հազար միավոր հրազեն[302], իսկ արդեն 1981 թ. հուլիսին այդ թիվը հասնում էր մոտ 640 հազարի[303]: Պետք է նշել, որ խիստ պատժամիջոցների կիրառման արդյունքում զինվորական իշխանություններին հաջողվեց հասնել իրենց նպատակին՝ կտրուկ նվազեցնել ահաբեկչական գործողությունները: Այսպես, եթե 1979 թ. սեպտեմբերի 12-ից 1980 թ. սեպտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում ահաբեկչության զոհ է դարձել 2677 քաղաքացի, ապա 1980 թ. սեպտեմբերի 12-ից մինչև 1981 թ. սեպտեմբերի 12-ն այդ թիվը նվազել էր 227-ի, իսկ հաջորդ տարի այն կազմում էր 63[304]:

Սակայն անհրաժեշտ է նշել նաև, որ զինվորական իշխանություններն ահաբեկչության դեմ պայքարի քողի տակ ձերբակալությունների և պատժամիջոցների լայնամասշտաբ գործողություններ սկսեցին, որոնց նպատակն էր, «հարմար առիթն» օգտագործելով, արմատախիլ անել «անցանկալի շարժումները»: Զինվորականները ջախջախիչ հարված հասցրին այն շարժումներին, որոնք նրանց տեսանկյունից վտանգ էին ներկայացնում քեմալական Թուրքիայի համար: Սեպտեմբերի 12-ի ռեժիմի ժամանակ 1 միլիոն 683 հազար մարդ հարցաքննվեց, 650 հազար մարդու դեմ դատական գործ հարուցվեց, որոնցից 230 հազարը դատապարտվեց: 7 հազար հոգու համար մահվան դատավճիռ պահանջվեց, 517 մարդ մահապատժի դատապարտվեց, որոնցից 50-ի դեպքում այն ի կատար ածվեց: Անցումային շրջանում 388 հազար մարդ զրկվեց անձնագրերից, 14 հազարը՝ քաղաքացիությունից, 30 հազար մարդ «վտանգավոր» լինելու համար աշխատանքից հեռացվեց, նույնքան մարդ էլ որպես քա-

301 Milliyet, 13, 11, 1980.
302 Նույն տեղում:
303 Turkey. Almanac. Turkey Daily News Publications, Ankara, 1982, p. 55-56.
304 Middle East Contemporary Survey, Vol. 6, 1981-82. New York, 1984, p. 917.

ղաքական փախստական երկրից հեռացավ, արգելվեց 23 հազար 677 կազմակերպության գործունեությունը, 3 հազար 854 դասախոս հեռացվեց աշխատանքից, 171 մարդ մահացավ բանտերում նրանց դեմ կիրառված բռնարարքներց ու խոշտանգումներից, և սա միայն պաշտոնական տեղեկատվության համաձայն, իրականում նշվում է մոտ 300 մարդ[305]:

Զինվորական պատժամիջոցներն առավելապես ուղղված էին ձախ շարժումների դեմ, և զինվորական վերնախավը ջախջախիչ հարված հասցրեց այդ շարժումներին: Տասնյակ հազարավոր մարդիկ դատապարտվեցին Թուրքիայի քրեական օրենսգրքի 141 և 142 հոդվածներով: Մոտ 100 հազար մարդ «կազմակերպության անդամ լինելու» (örgüt üyesi olmak) մեղադրանքով դատապարտվեց[306], 18 ձախակողմյան երիտասարդ մահապատժի ենթարկվեց[307]: Անցումային շրջանում իշխանություններն առանձնահատուկ կոշտ դիրքորոշում էր որդեգրել ԴԻՄԿ-ի նկատմամբ: Հեղաշրջումից անմիջապես հետո ձերբակալվեցին ԴԻՄԿ-ի ղեկավարները, այդ թվում և կազմակերպության նախագահ Արդուլլահ Բաշթյուրքը: Նրանց նկատմամբ դաժան խոշտանգումներ էին կիրառվում բանտերում[308]:

Զինվորական իշխանությունների պատժամիջոցների գլխավոր թիրախ դարձավ նաև քրդական շարժումը: Զինվորականները «հարմար առիթը» փորձեցին օգտագործել՝ քրդական շարժումն իսպառ վերացնելու համար, որը 1970-ական թթ. վերջերին և 1980 թ. սկզբներին գտնվում էր դեռևս ձևավորման փուլում: 1981 թ. հոկտեմբերին Քենան Էվրենն իր հարցազրույցներից մեկում նշում էր, որ ամեն անգամ, երբ թուրքական պետությունը թուլանում է, քրդական շարժումները գլուխ են բարձրացնում և

305 Turgay U., Evren'in 12 Eylül'ü aklanacak gibi değil, Zaman, 05, 03, 2006.
306 Cumhuriyet, 12, 09, 2000.
307 http://www.zaman.com.tr/?bl=yorumlar&alt=&trh=20060305&hn=262 38 2
308 Financial Times, 20, 03, 1981.

փորձում են քանդել երկրի միասնականությունը, և իշխանություններն ամեն ինչ կանեն քրդական հարցն «արմատախիլ» անելու համար[309]:

Անցումային շրջանում զինվորականները խիստ պատժամիջոցներ կիրառեցին նաև զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ: Նախ, հեղաշրջումից անմիջապես հետո ԱԱԽ-ն TRT-ի տնօրեն նշանակեց զինվորական ներկայացուցչի, և հեռուստատեսությամբ ու ռադիոյով եթեր հեռարձակվող նյութերը սկսեցին մանրամասն գրաքննության ենթարկվել[310]: Անցումային շրջանում 300 օր ժամանակով արգելված էին բոլոր թերթերը, 13 ամենաշատ վաճառվող թերթերի նկատմամբ 303 դատական գործ հարուցվեց: 400 լրագրողի համար ընդհանուր առմամբ 4 հազար տարվա ազատազրկում էր պահանջվում. բացի այդ, 300 լրագրողի նկատմամբ բռնություն կիրառվեց, իսկ 3 լրագրող հրազենային հարձակման զոհ դարձավ[311]:

Թուրքիայում չորս գլխավոր կուսակցություններից՝ ՀԺԿ, ԱԿ, ԱՓԿ և ԱԾԿ, ամենաադաժան պատժամիջոցները կիրառվեցին հատկապես ԱԾԿ-ի նկատմամբ: Հեղաշրջումից անմիջապես հետո զինվորականները կտրուկ հարված հասցրին «գորշ գայլերի» շարժմանը, ձերբակալվեցին մեծ թվով ակտիվիստներ: Ալփարսլան Թյուրքեշի կուսակցության նկատմամբ դատական գործը սկսվեց 1981 թ. օգոստոսի 19-ին. մեղադրվող 587 «գորշ գայլերից» արդեն ձերբակալված էր 498-ը[312], որոնցից 216-ի, այդ թվում և Թյուրքեշի համար մահվան դատավճիռ էր պահանջվում: Հեղաշրջումից հետո ութ աջ ծայրահեղական մահապատժի ենթարկվեց, իսկ Թյուրքեշը դատապարտվեց 11 տարի, մեկ

309 Гаспарян М., Курды Турции в новейшее время, Ереван, 1990, стр. 306.
310 Birand M. A., Bilâ H., Akar R., 12 Eylül: Türkiye'nin Miladı, s. 214-215.
311 Cumhuriyet, 12, 09, 2000.
312 Cemal H., Tank Sesiyle Uyanmak, 12 Eylül Günlüğü, İstanbul, 1986, s. 362.

ամիս և 10 օր ազատազրկման[313]: Հարկ է նշել, որ «գորշ գայլերի» նկատմամբ զինվորական իշխանությունների գործողությունները միանշանակ չէին. բիրտ հալածանքի մեթոդներ կիրառելով «գորշ գայլերի» դեմ իշխանությունները փորձում էին նրանց հնարավորություն չտալ հակազդող միջոցներ ձեռնարկելու, սակայն հետագայում, երբ արդեն «գորշ գայլերը» սպառնալիք չէին ներկայացնում, զինվորական վերնախավը նրանց կրկին սկսեց օգտագործել «սև աշխատանք» կատարելու համար:

Իսլամամետ Ազգային փրկություն կուսակցության նկատմամբ զինվորականների պատժամիջոցները նույնպես աչքի էին ընկնում խստությամբ. ակտիվիստները ենթարկվեցին դատական պատասխանատվության, կուսակցության նախագահ Նեջմեթթին Էրբաքանը դատապարտվեց 4 տարի ազատազրկման: Սակայն 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո ԱԱԽ քաղաքականությունը կրոնի հանդեպ բավական զգուշավոր էր, և ի տարբերություն ձախ ու աջ ծայրահեղականների, որոնք ջախջախվեցին զինվորական իշխանությունների կողմից, իսլամական շարժումը փրկվեց, և նույնիսկ 1980-ական թթ. առնեց նրա նշանակությունը[314]: Կրոնի նկատմամբ զինվորական իշխանությունների քաղաքականությունը միտված էր երկրում ակտիվացած կրոնական արմատականությանը հակազդեցություն ցույց տալուն և «իսլամական աշխարհում» Թուրքիայի դիրքերն ամրապնդելուն[315]: Զինվորականները, բավարար խստություն ցուցաբերելով կրոնական ֆանատիզմ և ծայրահեղականություն

313 http://www.basbug.itgo.com/12eylul6.htm

314 Toprak B., "Religion as State Ideology in a Secular Setting: The Turkish-Islamic Synthesis" in Malcolm Wagstaff (ed.), Aspects of Religion in Secular Turkey, (Durham: University of Durham, Center for Middle Eastern and Islamic Studies, Occasional Paper Series No. 40, 1990, p. 10.

315 Иванова И., Исламский фактор в политике турецкого руководства после военного переворота 1980 г., Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, Москва, 1987, стр. 127.

հրահրողների նկատմամբ և ասպարեզից հեռացնելով իսլամական կազմակերպություններին ու նրանց ղեկավարներին, վերահսկողության տակ վերցրին կրոնը:

Երկրի խոշորագույն կուսակցությունների՝ ՀԺԿ-ի և ԱԿ-ի նկատմամբ զինվորական իշխանությունների քաղաքականությունը նույնպես աչքի էր ընկնում զգուշավորությամբ: Սուլեյման Դեմիրելը և կուսակցության ակտիվիստները խուսափեցին զինվորականների պատժամիջոցներից, սակայն հարկ է նշել, որ Դեմիրելն էլ իր հերթին հրաժարվեց ծավալել ակտիվ հրապարակային գործունեություն: Նույնը չի կարելի ասել նրա քաղաքական հակառակորդ Բյուլենթ Էջևիթի մասին, որը 1981 և 1982 թթ. ընթացքում զինվորական ռեժիմը քննադատելու համար մի քանի անգամ դատական պատասխանատվության ենթարկվեց[316]: Եղան նաև դեպքեր, երբ ՀԺԿ անդամները մեղադրվեցին ձախ շարժմանը ցուցաբերած աջակցության համար, և նրանց նկատմամբ պատժամիջոցներ կիրառվեցին: Հիշատակման է արժանի հատկապես Ստամբուլի նախկին քաղաքապետ, ՀԺԿ անդամ Ահմեթ Իշվանի նկատմամբ դատական գործընթացը. նա մեղադրվում էր 1977 թ. մայիսի 1-ին ԴԻՄԿ-ի կազմակերպած ցույցին կազմակերպչական աջակցություն ցուցաբերելու համար: Մամուլում բազմաթիվ հրապարակումներ եղան, որտեղ նշվում էր, որ կալանավայրում Ահմեթ Իշվանի նկատմամբ դաժան խոշտանգումներ են կիրառվել:

Թուրքիայում կիրառվող պատժամիջոցները՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ բանակը չէր նշում կոնկրետ ժամկետներ և ձգձգում էր իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելու գործընթացը, լուրջ մտահոգություններ առաջացրին արևմտյան երկրների իշխող շրջանակներում, և որոշակի ճնշումներ սկսվեցին թուրքական զինվորական իշ-

316 Middle East Contemporary Survey, Vol. 6, 1981-82. New York, 1984, p. 885-886.

խանությունների վրա: Մասնավորապես, 1981 թ. նոյեմբերին Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարար Հանս-Դիտրիխ Գենշերի Թուրքիա կատարած այցի շրջանակներում քննարկվեց Թուրքիայի «նորմալ ժողովրդավարական կարգերի» անցնելու խնդիրը: Արտգործնախարարը հատկապես ընդգծում էր այդ հարցը՝ նշելով, որ դրանից են կախված Թուրքիայի հետագա հարաբերությունները եվրոպական ընտանիքի հետ[317]: Պետք է նշել, որ արևմտյան երկրների ճնշումները հիմնականում սահմանափակվում էին ընդամենը տնտեսական օգնությունների նվազեցման սպառնալիքներով, և որևէ կոնկրետ քայլ, նույն այդ օգնությունների նվազեցման կապակցությամբ, այդպես էլ չձեռնարկվեց:

Ամփոփելով կարելի է նշել, որ 1980 թ. ռազմական հեղաշրջմանը հետևած անցումային շրջանն ամենառեպրեսիվն էր Թուրքիայում երբևէ գոյություն ունեցածներից: Թուրքական իշխանությունները զանգվածային ձերբակալությունների միջոցով ծանր հարված հասցրին ոչ միայն ահաբեկչական կառույցներին, այլև այն քաղաքական կազմակերպություններին, որոնք այս կամ այն պատճառով անընդունելի էին զինվորական իշխանությունների համար:

Սահմանադրական փոփոխություններ. 1982 թ. սահմանադրությունը

1980 թ. ռազմական հեղաշրջմանը, ինչպես նախորդ ռազմական հեղաշրջման (1960 թ.) և զինվորականների «միջամտության» (1971 թ.) ժամանակ, հետևեցին սահմանադրական

317 Նույն տեղում, էջ 891:

փոփոխություններ. 1982 թ. զինվորական իշխանությունները նախապատրաստեցին և սահմանադրական հանրաքվեի միջոցով ընդունեցին Թուրքիայի Հանրապետության երրորդ սահմանադրությունը, ինչը «սեպտեմբերի 12-ի» ռազմական հեղաշրջման հիմնական արդյունքներից էր:

Արդեն ռազմական հեղաշրջումից անմիջապես հետո զինվորականներն ընդգծում էին սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը: Նոյեմբերին Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) գլխավոր քարտուղար Հայդար Սալթըքը մամուլի ասուլիսի ժամանակ հանրությանը ներկայացրեց ԱԱԽ՝ «նորմալ ժողովրդավարական համակարգի» անցնելու ծրագիրը, որի հիմնական փուլերն էին՝ Սահմանադիր ժողովի ձևավորման համար նախնական պայմանների նախապատրաստում, Սահմանադիր մեջլիսի կողմից նոր սահմանադրության նախագծի մշակում, սահմանադրական հանրաքվեի կազմակերպում, կուսակցությունների մասին նոր օրենքի ընդունում և խորհրդարանական ընտրությունների միջոցով իշխանության փոխանցում քաղաքական կուսակցություններին: Դրանից հետո դադարեցնել էին գործել Սահմանադիր մեջլիսն ու ԱԱԽ-ն, և երկիրն անցում էր կատարելու «նորմալ ժողովրդավարական քաղաքական կյանքի»[318]:

Նոր սահմանադրության նախագիծը նախապատրաստելու և մինչև խորհրդարանի գումարումը երկրի օրենսդրական գործառույթներն իրականացնելու նպատակով 1981 թ. հունիսի 29-ին ԱԱԽ-ն օրենք ընդունեց Սահմանադիր մեջլիս (Kurucu Meclis) ստեղծելու մասին[319]: Սահմանադիր մեջլիսը բաղկացած էր ԱԱԽ-ից և Խորհրդատվական մեջլիսից (Danışma Meclisi): Խորհրդատվական մեջլիսը (այսուհետև՝ ԽՄ) կազմված էր 160

318 Cumhuriyet, 2, 11, 1980.
319 Milliyet, 8, 09, 1981.

անդամից, որոնցից 120-ն ընտրվում էր շրջանների՝ ռազմական դրության հրամանատարության առաջադրած ներկայացուցիչներից և հաստատվում ԱԱԽ-ի կողմից, իսկ մնացած 40 անդամին ուղղակիորեն ԱԱԽ-ն էր նշանակում[320]: Ըստ էության, ԽՄ-ն, ինչպես հուշում է նաև անվանումը, հիմնականում ուներ խորհրդատվական գործառույթներ, վերջնական որոշումներն ընդունում էր ԱԱԽ-ն:

1981 թ. հոկտեմբերի 15-ին հայտարարվեց ԽՄ կազմը, և արդեն հոկտեմբերի 23-ից այն ձեռնամուխ եղավ նոր սահմանադրության նախագծի նախապատրաստման գործընթացին[321]: ԽՄ նախագահ նշանակվեց նախկին վարչապետ Սադի Բրմաքը: 1982 թ. աշնանը ԽՄ-ն ավարտեց նոր սահմանադրության տեքստի նախապատրաստումը և այն հանձնեց ԱԱԽ դատին: Ջինվորականները, որոշ «խմբագրումներից» հետո, հոկտեմբերի 24-ին հատուկ օրենքով հաստատեցին սահմանադրության վերջնական տեքստը և ԱԱԽ-ն հրապարակեց այն[322]: Այդ տեքստի հրապարակումը, հանրաքվեից ընդամենը հաշված օրեր առաջ, զրկում էր հասարակության լայն շրջանակներին երկրի մայր օրենքին մանրամասն ծանոթանալու հնարավորությունից: 1982 թ. սեպտեմբերի 24-ին ԱԱԽ-ն ընդունեց սահմանադրական հանրաքվեի մասին օրենքը, համաձայն որի՝ սահմանադրությունն ընդունվում էր ընտրողների ձայների պարզ մեծամասնությամբ. սահմանադրական հանրաքվեի օր էր հաստատվում 1982 թ. նոյեմբերի 7-ը[323]:

1982 թ. նոյեմբերի 7-ին կայացավ սահմանադրական հանրաքվեն, որի արդյունքում ձայների բացարձակ մեծամաս-

320 McFadden J. M., Civil-Military Relations in the Third Turkish Republic, The Middle East Journal, Vol. 39, No. 1, Winter 1985, p. 71.
321 Kenan Evren, Kenan Evren'in Anıları, Cilt 2, 1991, s. 417.
322 Սահմանադրության տեքստը տե՛ս T. C. Anayasa, İstanbul, 1982.
323 Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Москва, 1991, стр. 69.

նությամբ ընդունվեց Թուրքիայի Հանրապետության երրորդ սահմանադրությունը: Սահմանադրական հանրաքվեին իր մասնակցությունը բերեց ընտրողների 91.4%-ը, որոնցից 91.3%-ը կողմ քվեարկեց նոր սահմանադրությանը[324]: Հետաքրքիր է նշել, որ 1961 թ. սահմանադրական հանրաքվեի ժամանակ շատ ավելի ժողովրդավարական և ազատական սահմանադրության ընդունմանը կողմ էր քվեարկել ընտրողների ընդամենը 60%-ը: Դա հիմնականում պայմանավորված էր երկու հանգամանքով, նախ՝ զինվորականներն ընտրություններին չմասնակցող քաղաքացիների համար մի շարք պատժամիջոցներ էին նախատեսել, մասնավորապես՝ սահմանադրական հանրաքվեին չմասնակցող քաղաքացիները 5 տարի ժամկետով զրկվում էին բոլոր տեսակի քաղաքական ընտրություններին մասնակցելու իրավունքից[325]: Սակայն ավելի կարևոր էր այն հանգամանքը, որ սահմանադրությանը կողմ քվեարկելով՝ հասարակությունն, ըստ էության, քվեարկում էր հօգուտ քաղաքացիական կառավարմանն անցում կատարելուն[326]:

Նոր սահմանադրությունը բաղկացած էր ներածությունից[327], յոթ բաժիններից, որոնք ընդգրկում էին 177 հոդված և 16 ժամանակավոր հոդված: Հիմնական իրավունքներին և պարտականություններին վերաբերող հոդվածները (հդ. 12-74) էապես տարբերվում էին 1961 թ. Սահմանադրությունից, և հիմնական առանձնահատկությունն այն էր, որ սահմանափակվում էին ժողովրդավարական իրավունքներն ու ազատությունները: Թեև 1961 թ. սահմանադրության համեմատ շատ ավելի մանրամասն մշակված էին անձի անձեռնմխելիության, ազատության իրա-

324 Mango A., The Turks Today, London, 2004, p. 82-83.

325 Конституция Турецкой республики, приложения, Турецкая Республика: справочник, Москва, 1990, с. 367.

326 Cemal H., Tank Sesiyle Uyanmak, 12 Eylül Günlüğü, İstanbul, 1986, s. 550.

327 Ներածության մեջ նաև հիմնավորվում էր սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման անհրաժեշտությունը: Տե՛ս T. C. Anayasa, İstanbul, 1982, s. 3-5:

վունքի և անվտանգության մասին դրույթները, սակայն դրանց կիրառելիության շրջանակներն իրականում սահմանափակվում էին բազմաթիվ վերապահումներով, երբ այդպիսի իրավունքը սահմանափակվում կամ ընդհանրապես վերանում է «ռազմական դրության ժամանակ, ձերբակալվածների փախուստի դեպքերում, խռովությունների և անկարգությունների ճնշման ժամանակ» և այլն[328]:

Ջինվորականների անմիջական հսկողության ներքո ընդունված սահմանադրությունը նախատեսում էր բազմաթիվ սահմանափակումներ, որոնք տարածվում էին հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների, արհմիությունների գործունեության վրա: Նոր սահմանադրությունը հասարակական կազմակերպություններին, միություններին արգելում էր քաղաքական նպատակներ հետապնդել, զբաղվել քաղաքականությամբ, քաղաքական կուսակցություններին աջակցել կամ ստանալ նրանց աջակցությունը (հդ. 34)[329]: Արհմիություններին նույնպես արգելվում էր քաղաքական նպատակներ հետապնդել կամ աջակցել քաղաքական կուսակցություններին: Սահմանադրության մեջ նշվում էր, որ պետությունը վարչական և ֆինանսական վերահսկողություն էր սահմանում արհմիությունների և նրանց եկամուտների ու ծախսերի նկատմամբ (հդ. 52): Հատուկ հոդվածով կարգավորվում էին գործադուլների և լոկաուտների իրականացման իրավունքները: Մասնավորապես՝ արգելվում էր անցկացնել քաղաքական բնույթի գործադուլներ և լոկաուտներ, ինչպես նաև համերաշխության գործադուլներ (հդ. 54):

Քաղաքական կուսակցություններին արգելվում էր իրենց կազմում ունենալ երիտասարդական, կանանց կամ նմանա-

328 Данилов В., Основные особенности новой конституции Турецкой Республики (в сравнении с конституцией 1961 г.). - Турция – история и современность, сборник статей, Москва, 1988, стр. 12.
329 T. C. Anayasa, s. 22.

տիպ այլ միություններ: Նոր սահմանադրությունը բարձրացնում էր նաև երիտասարդների՝ կուսակցությանն անդամագրվելու տարիքային ցենզը՝ այն դարձնելով 21: Ընտրողների տարիքային ցենզը նույնպես հասցվեց 21-ի[330]: Այդ դրույթները նպատակաուղղված էին ապաքաղաքականացնելու երիտասարդությանը:

Այդպիսով, 1982 թ. սահմանադրության մեջ 1961 թ. սահմանադրության համեմատ, ակնհայտորեն սահմանափակվել էին ժողովրդավարական իրավունքներն ու ազատությունները: Նոր սահմանադրության հեղինակները բացահայտ նպատակ էին հետապնդում խոչընդոտներ ստեղծել 1970-ական թթ. Թուրքիայում զարգացող արհմիութենական, ձախակողմյան, երիտասարդական շարժումների համար:

Նոր սահմանադրության համաձայն՝ երկրի օրենսդիր բարձրագույն մարմինը՝ ԹԱՄԺ-ը, կազմված էր միապալատ խորհրդարանից և բաղկացած էր 400 պատգամավորից (1961թ. սահմանադրությունը երկպալատ խորհրդարանական համակարգ էր սահմանում՝ Սենատ և Ազգային ժողով)[331]: Ըստ նոր սահմանադրության, խորհրդարանական ընտրությունները կազմակերպվում էին ամեն 5 տարին մեկ (1961 թ. ընտրությունները 4 տարին մեկ էին):

1982 թ. սահմանադրության մեջ զգալիորեն ընդլայնված էին նահագահական ինստիտուտի լիազորությունները[332]: Ինչպես նախորդ, այնպես էլ նոր սահմանադրությամբ հանրապետության նախագահին ընտրվում էր ԹԱՄԺ-ի կողմից, ձայների երկու երրորդի հարաբերակցությամբ, 7 տարի ժամկետով և մեկ անգամ ընտրվելու իրավունքով: Սակայն նոր սահմանադրութ-

330 Նույն տեղում, էջ 40-42:
331 1961 Anayasası, Osmanlı ve Türk Anayasaları, İstanbul, 1980, s. 67-68.
332 McFadden J. M., Civil-Military Relations in the Third Turkish Republic, The Middle East Journal, Vol. 39, No. 1, Winter 1985, pp. 69-85.

յամբ նախատեսված էր, որ չորս փուլերի ընթացքում նախագահ չընտրելու դեպքում խորհրդարանը լուծարվում է, և նոր ընտրություններ են կազմակերպվում[333]: Այսպիսով, սահմանադրության հեղինակները փորձում էին հետագայում բացառել 1980 թ. նախագահական ընտրություններում ստեղծված այն իրադրությունը, երբ ավելի քան 5 ամիս ԹԱՄԺ-ին այդպես էլ չհաջողվեց նախագահ ընտրել: Նոր սահմանադրությամբ երկրի նախագահին իրավունք էր վերապահվում անհրաժեշտության դեպքում ցրել խորհրդարանը և նոր ընտրություններ նշանակել, ինչպես նաև վարչապետ նշանակել և ընդունել նրա հրաժարականը, նշանակել ԳՇ պետին, գլխավոր դատախազին և նրա տեղակալին, սահմանադրական դատարանի անդամներին, նախագահել Ազգային անվտանգության խորհրդի նիստերում, հայտարարել արտակարգ իրավիճակ և այլն[334]: Կարելի է եզրակացնել, որ նոր սահմանադրությունն զգալիորեն ուժեղացնում էր նախագահական ինստիտուտը, սակայն երկրի իշխանական համակարգում շարունակում էր որոշիչ դերակատարում ունենալ ԹԱՄԺ-ը[335]: Նախագահի ինստիտուտի ուժեղացումը նպատակ էր հետապնդում նաև ուժեղացնել զինվորականության ազդեցության լծակները, քանի որ, նախ՝ 1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո բոլոր նախագահները, որպես կանոն, բարձրաստիճան զինվորականներն էին ընտրվում, և երկրորդ, որն առավել կարևոր է, նոր սահմանադրությամբ երկրի հաջորդ յոթ տարիներին նախագահ էր դառնում ԱԱԽ նախագահ Քենան Էվրենը:

Նոր սահմանադրությամբ զգալիորեն ընդլայնվեցին բանակի ազդեցության ոլորտները երկրի քաղաքական կյանքում[336]: Մաս-

333 T. C. Anayasa, 1982, s. 63-68.
334 Նույն տեղում:
335 McFadden J. M., նշվ. հոդ., էջ 69-85.
336 Bayramoğlu A., Asker ve Siyaset. - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu, İstanbul, 2004, s. 82-88.

նավորապես՝ 1961 թ. սահմանադրության համեմատ մեծապես ուժեղացվեց Ազգային անվտանգության խորհրդի (Milli Güvenlik Kurulu) դերը: Ըստ նոր սահմանադրության, նորաստեղծ ԱԱԽ կազմի մեջ ընդգրկվում էին նախագահը, որը միաժամանակ նախագահում էր նաև ԱԱԽ նիստերում, վարչապետը, ԳՇ պետը, ազգային պաշտպանության, ներքին գործերի, արտաքին գործերի նախարարները, ցամաքային զորքերի հրամանատարը, ռազմաօդային, ռազմածովային զորքերի և ժանդարմերիայի հրամանատարները: ԱԱԽ օրակարգը սահմանում էր նախագահը՝ ԳՇ պետի և վարչապետի հետ խորհրդակցություններից հետո: ԱԱԽ որոշումները՝ կապված երկրի պաշտպանության, անկախության, ամբողջականության պահպանման, հասարակական անվտանգության հետ, գործադիր իշխանության համար առաջնային նշանակություն ունեին[337]:

1982 թ. սահմանադրությունն ընդգրկում էր 16 ժամանակավոր հոդված, որոնք հիմնականում նպատակ ունեին ամրապնդել ռազմական հեղաշրջման հեղինակների կարևոր դերը երկրի քաղաքական կյանքում՝ իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելուց հետո: Համաձայն սահմանադրության ժամանակավոր 1-ին հոդվածի՝ սահմանադրության ընդունումից հետո ԱԱԽ նախագահը յոթ տարի ժամկետով հանրապետության նախագահ էր դառնում: Միայն դրանից հետո պիտի անցկացվեին նոր նախագահական ընտրություններ[338]:

Սահմանադրության ժամանակավոր 2-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱԽ-ն և Խորհրդատվական մեջլիսը շարունակում էին իրենց գործունեությունն մինչև նոր խորհրդարանի ձևավորումը: ԹԱՄԺ կազմավորումից հետո ԽՄ-ն լուծարվում էր, իսկ ԱԱԽ-ն

337 T. C. Anayasa, 1982, s. 75.
338 Նույն տեղում, էջ 118:

վերափոխվում էր Նախագահական խորհրդի: Դա խորհրդատվական մարմին էր, որը քննելու էր ԹԱՄԺ-ի կողմից նախագահի հաստատմանը ներկայացված այն օրենքները, որոնք կապված էին սահմանադրությամբ նախատեսվող հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների, աշխարհիկության սկզբունքի, Աթաթյուրքի հեղափոխության պաշտպանության, ազգային անվտանգության և հասարակական կարգի ու այլ կարևորագույն խնդիրների հետ: Խորհուրդն օժտված էր լիազորությամբ՝ կարծիք հայտնել երկրի նախագահի ներկայացրած հարցերի վերաբերյալ: Նախագահական խորհրդի անդամները, այսինքն՝ ռազմական հեղաշրջման հեղինակները, օգտվում էին անձեռնմխելիության իրավունքից: Հստակեցվում էին նաև խորհրդի գործելու ժամկետները՝ 6 տարի, որից հետո այն լուծարվելու էր[339]:

Սահմանադրության ժամանակավոր 4-րդ հոդվածով արգելվեց նախքան սեպտեմբերի 12-ը գործող քաղաքական կուսակցությունների գործունեությունը, ինչպես նաև նրանց ծրագրերի, խորհրդանիշների կամ անվան օգտագործումը քաղաքական այլ կուսակցությունների կողմից[340]: Այդ հոդվածի համաձայն՝ նախքան 1980 թ. ռազմական հեղաշրջումը գործող երկրի հիմնական քաղաքական կուսակցությունների ղեկավարներին նաև արգելվում էր 10 տարի ժամկետով զբաղվել քաղաքականությամբ, իսկ այդ կուսակցությունների պատգամավորներին և սենատորներին՝ 5 տարի ժամկետով[341]:

Ամփոփելով կարելի է նշել, որ զինվորական իշխանությունների անմիջական վերահսկողությամբ ընդունված սահմանադրությունը հետապնդում էր երկու հիմնական նպատակ՝

339 Նույն տեղում, էջ 118-119:
340 Նույն տեղում:
341 Նույն տեղում, էջ 119:

ա. Բացառել այն լարված իրավիճակի ստեղծումը, որն առաջացել էր նախքան ռազմական հեղաշրջումը: Զինվորականները դա փորձեցին իրականացնել ժողովրդավարական իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ:

բ. Սահմանադրական հնարավորություններ ստեղծել բանակի դերը երկրի քաղաքական համակարգում ուժեղացնելու նպատակով, ինչը հնարավորություն էր ստեղծում զինվորական հրամանատարությանը՝ իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելուց հետո երկար տարիներ քաղաքական դաշտի վրա ազդելու վերահսկողական լծակներն իր ձեռքում պահելու համար:

Մնցում քաղաքացիական կառավարման

1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը, ինչպես արդեն նշել ենք, կարելի է բնութագրել որպես «խնամակալ ռազմական հեղաշրջում», այսինքն՝ զինվորականների իշխանությունը ժամանակավոր բնույթ էր կրում, նրանք հեղաշրջման պատճառները վերացնելուց հետո իշխանությունը կրկին վերադարձնելու էին քաղաքական կուսակցություններին: Հեղաշրջումից անմիջապես հետո նրա ղեկավարներն իրենց առաջին իսկ հայտարարություններում ընդգծեցին հեղաշրջման պատճառները վերացնելուն պես իշխանությունը կրկին քաղաքական կուսակցություններին վերադարձնելու անհրաժեշտությունը[342]: Պարզ էր նաև, որ արևմտյան երկրները, որոնցից զինվորականությունը բավական մեծածավալ վարկեր էր ակնկալում, չէին հանդուրժի երկարաժամկետ ռազմական դիկտատուրան: Սակայն անորոշ էին մնում այն հարցերը, թե ինչպիսին է լինելու

342 Kenan Evren'in Söylev ve Demeçleri, s. 15-18.

նախքան հեղաշրջումը գործող քաղաքական կուսակցությունների ճակատագիրը, երբ և ինչ պայմաններում են զինվորականներն իշխանությունը փոխանցելու քաղաքացիական ուժերին:

Ինչպես վկայում են տարբեր աղբյուրներ՝ նախքան ռազմական հեղաշրջումը բարձրաստիճան զինվորականները կուսակցությունների հետագա կարգավիճակի վերաբերյալ հստակ միասնական դիրքորոշում չունեին[343]: Այդ հարցը մի քանի անգամ քննարկվել է հեղաշրջման նախապատրաստական փուլում, սակայն զինվորականներն այդպես էլ ի զորու չեն եղել գալ ընդհանուր հայտարարի: Այդ էր պատճառը, որ հեղաշրջումից անմիջապես հետո զինվորականները հայտարարեցին միայն, որ ժամանակավոր դադարեցնում են քաղաքական կուսակցությունների գործունեությունը՝ այդ խնդրին հետագայում անդրադառնալու ակնկալիքով: Զինվորականների այդ մոտեցումն արտահայտվեց Ազգային անվտանգության խորհրդի՝ հեղաշրջման օրը տարածած հայտարարության մեջ[344]:

Ռազմական հեղաշրջումից հետո սկզբնական շրջանում, թեև քաղաքական կուսակցությունները չլուծարվեցին, սակայն, ըստ էության, նրանց հրապարակային գործունեությունն ամբողջովին արգելված էր[345]: Բարձրաստիճան զինվորականները բազմիցս նշում էին, որ քաղաքական կուսակցությունները չեն լուծարվել, այլ ընդամենը ժամանակավոր դադարեցվել է նրանց գործունեությունը՝ միաժամանակ չբացառելով նաև երկրի հիմնական կուսակցությունների՝ ՀԺԿ և ԱԿ վերադարձը քաղաքական թատերաբեմ[346]: Այդուհանդերձ, արդեն 1981 թ. հոկտեմբերի 16-ին ԱԱԽ որոշմամբ լուծարվեցին և արգելվեցին երկրի բոլոր

343 Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, s. 249-250.
344 Milli Güvenlik Konseyi'nin 7 Numaralı bildirisi, Resmi Gazete, 12, 09, 1980
345 Hale W., Turkish Politics and the Military, London, 1994, p. 247.
346 Newsweek, 06, 04, 1981.

քաղաքական կուսակցությունները[347]: ԱԱԽ նախագահ Քենան Էվրենը զինվորականների այդ քայլը բացատրում էր այն հանգամանքով, որ քաղաքական կուսակցությունների ղեկավարները, շրջանցելով զինվորականների արգելքները, փորձում էին ազդեցություն ունենալ երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացների վրա, ինչպես նաև մամուլում տպագրվող հոդվածների միջոցով ճնշումներ գործադրել զինվորական իշխանությունների նկատմամբ, և «նույնիսկ սկսել էին իրար մեջ պայքարել իշխանությունը բաժանելու համար»[348]:

Այսպիսով, վերջին 120 տարիների ընթացքում առաջին անգամ Թուրքիայում արգելվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները: Այդ քայլը հիմնականում ուղղված էր նախքան հեղաշրջումը գործող քաղաքական կուսակցությունների և դրանց ղեկավարների դեմ՝ նրանց զրկելով երկրում ծավալվելիք քաղաքական գործընթացներին մասնակցելու հնարավորությունից: Զինվորականները նպատակ ունեին իրենց հսկողությամբ ձևավորել երկրի նոր քաղաքական համակարգը: Այդ գործընթացի համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի մշակումն իրականացնում էր Խորհրդատվական մեջլիսը՝ ԱԱԽ անմիջական վերահսկողությամբ: Քաղաքական համակարգի վերաբերյալ զինվորականների մոտեցումներն արտահայտվեցին նոր սահմանադրության այն հոդվածներում, որոնք վերաբերում էին քաղաքական կուսակցություններին, ինչպես նաև Քաղաքական կուսակցությունների (22 ապրիլի 1983 թ.)[349] և Խորհրդարանի պատգամավորի ընտրության մասին օրենքներում (10 հունիսի 1983 թ.)[350]: Սահմանադրությունը և վերը նշված օրենքները կա-

347 Kanun No. 2533, Siyasi Partilerin Fahsine Dair Kanun. - Kenan Evren, Kenan Evren'in Anıları, Cilt-2, 1991, s. 418.
348 Middle East Contemporary Survey, Vol. 6, New York, 1984, p. 884.
349 Siyasi Partiler Kanunu, İstanbul, 1983.
350 Milletvekili Seçimi Kanunu, İstanbul, 1983.

ռելի է համալիր դիտարկել, քանի որ դրանք ներկայացնում են այն օրենսդրական դաշտը, որտեղ խտացված կերպով արտահայտված է բարձրագույն զինվորականության դիրքորոշումը երկրի քաղաքական կյանքը վերակազմելու ուղղությամբ:

Դեռևս 1970-ական թթ. բարձրաստիճան զինվորականության շրջանակներին մտահոգում էր հասարակության քաղաքականացվածության չափազանց բարձր մակարդակը, ինչը հանգեցնում էր հասարակության բևեռացմանը: Այդ իրավիճակը տարածվում էր նույնիսկ բանակի վրա, որտեղ սկսել էին ակտիվանալ տարբեր քաղաքական հոսանքներ: Նոր սահմանադրության ընդունման նախաշեմին, արձագանքելով այդ մտահոգություններին, Քենան Էվրենը 1982 թ. հայտարարեց, որ «այլևս չեն լինելու կուսակցություններ արհմիությունների տեսքով, և չեն լինելու արհմիություններ կուսակցությունների տեսքով. քաղաքականությամբ զբաղվելը քաղաքական կուսակցությունների գործն է»[351]: Հասարակության ապաքաղաքականացմանն էին ուղղված այդ օրենքների հետևյալ դրույթները. այլևս արգելվում էր կուսակցությունների կազմում ունենալ երիտասարդական, կանանց և նմանատիպ այլ կազմակերպություններ, արգելվում էր նաև քաղաքական կուսակցությունների համագործակցությունը հասարակական միությունների հետ, այդ կազմակերպություններն իրենց հերթին չէին կարող քաղաքական նպատակներ ունենալ կամ աջակցել քաղաքական կուսակցություններին: Երիտասարդության ապաքաղաքականացմանն էր ուղղված կուսակցությանն անդամագրվելու համար բավական բարձր տարիքային ցենզի սահմանումը՝ 21 տարեկան: Սահմանափակվում էր կուսակցությունների գրասենյակների գործունեությունը գյուղական համայնքներում:

Հաջորդ միտումը, որ նկատվում է քաղաքական համակար-

351 Milliyet, 28, 10, 1982.

գում արվող նոր օրենսդրական փոփոխություններում, այն է, որ նվազեցվում էր քիչ անդամներ ունեցող և դաշտում թույլ ներկայացված կուսակցությունների դերը երկրի քաղաքական կյանքում: Այդ քայլով զինվորական իշխանությունները փորձում էին կանխել 1970-ական թթ. երկրի քաղաքական դաշտում տիրող այն իրավիճակը, երբ փոքր կուսակցությունները, երբեմն ներկայացված լինելով խորհրդարանում ընդամենը մի քանի պատգամավորով, կարողանում էին ներազդել երկրում ընթացող քաղաքական գործընթացների վրա: Այդ կապակցությամբ Քենան Էվրենը Խորհրդատվական մեջլիսի բացման ժամանակ իր ճառում նշեց. «Դուք բոլորդ տեսաք, թե կոալիցիայի ժամանակաշրջանում ինչպիսի բարդություններ էին ստեղծում փոքր կուսակցությունները, ինչպիսի զիջումներ էին կատարվում նրանց, որպեսզի հիմնական կուսակցությունները պահեն իրենց իշխանությունը»[352]: Էվրենն ավելացրեց, որ մեջլիսն այնպիսի օրենք պիտի պատրաստի, որպեսզի հետագայում նվազի փոքր կուսակցությունների դերը քաղաքական համակարգում[353]:

Համաձայն խորհրդարանական ընտրությունների մասին օրենքի՝ խորհրդարանական ընտրաշեմը բարձրացվեց և սահմանվեց 10%: Այն նպատակ էր հետապնդում նվազեցնել կամ բացառել փոքր կուսակցությունների մուտքը խորհրդարան: Խորհրդարանական խմբակցություն ստեղծելու համար այլևս անհրաժեշտ էր նվազագույնը 20 պատգամավոր: Այս կապակցությամբ թուրք հայտնի քաղաքագետ և պատմաբան Էրգուն Օզբուդունը նշում է, որ այդպիսի ընտրական համակարգով Թուրքիայի խորհրդարանում դժվար թե երբևէ երեք կուսակցություններից ավելի ներկայացված լինեն[354]:

---

352 12 Eylül Öncesi ve Sonrası, MGK Genel Sekreterliği, Ankara, 1981, s. 326.
353 Նույն տեղում:
354 Özbudun E., Türk Anayasa Hukuku, Ankara, 2005, s. 230.

Զինվորական իշխանություններն օրենսդրական վերափոխումների միջոցով փորձեցին բազմաթիվ խոչընդոտներ ստեղծել ծայրահեղական շարժումների (կրոնական, ազգայնամոլական և կոմունիստական) մուտքը քաղաքական թատերաբեմ կանխելու նպատակով: Կուսակցությունների մասին օրենքում ընդգծվում էր, որ կուսակցության գործունեությունը պիտի անպայմանորեն համապատասխանի Աթաթյուրքի սկզբունքներին: Արգելվում էր կուսակցությունների կողմից կրոնի օգտագործումը քաղաքական նկրտումներով[355]:

Նախքան հեղաշրջումը գործող քաղաքական կուսակցություններին և դրանց ղեկավարներին քաղաքականությամբ զբաղվելու սահմանափակումները, որոնք ընդգրկված էին 1982 թ. սահմանադրության մեջ, ամրագրվեցին նաև նոր օրենքներում: Այսպես, օրինակ՝ Կուսակցությունների մասին օրենքի 1-ին ժամանակավոր հոդվածի համաձայն՝ սահմանադրության ընդունման պահից (7 նոյեմբերի 1982 թ.) 10 տարի ժամկետով արգելվում էր նախքան հեղաշրջումը գործող հիմնական քաղաքական կուսակցությունների (Հանրապետական-ժողովրդական կուսակցություն, Արդարություն կուսակցություն, Ազգային փրկություն կուսակցություն և Ազգայնական շարժում կուսակցություն) ղեկավարների քաղաքական գործունեությունը: Այդ կուսակցություններից պատգամավորներին և սենատորներին 10 տարի ժամկետով արգելվում էր քաղաքական կուսակցություններ ստեղծել և 5 տարի ժամկետով՝ կուսակցություններում ղեկավար պաշտոններ զբաղեցնել[356]: Ընդհանուր առմամբ, 10-ամյա արգելքները տարածվեցին չորս հիմնական կուսակցությունների 116 քաղաքական գործիչների, իսկ 5-ամյա ժամկետը՝ 478 նախկին պատգամավորների և սենատորների վրա[357]:

---

355 Siyasi Partiler Kanunu, İstanbul, 1983, s. 3-5.

356 T. C. Anayasa, İstanbul, 1982, s. 119.

357 Емельянов В., К изменению законодательных основ многопартийной системы Турции после военного переворота 1980 г.; Турция – история и современность, Москва, 1988, стр. 119.

Խորհրդարանի պատգամավորի ընտրության մասին օրենքի ժամանակավոր հոդվածներից մեկի համաձայն՝ նրա ընդունման պահից սկսած մինչև ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումը ԱԱԽ-ին իրավունք էր վերապահվում ուղղակիորեն վերահսկել նոր կուսակցությունների ստեղծման գործընթացը: ԱԱԽ-ն քննելու էր կուսակցությունների հիմնադիրների ցուցակները (կուսակցությունները պետք է ներկայացնեին կուսակցության նվազագույնը 40 հիմնադիրների անվանացանկ) և անհրաժեշտության դեպքում կարող էր մերժել նրանցից յուրաքանչյուրին: Այդ դեպքում կուսակցություններն ԱԱԽ համաձայնությամբ երկու օրվա ընթացքում կարող էին նոր թեկնածուներ առաջարկել: ԱԱԽ-ն իրավունք ուներ արգելել կուսակցությունների գործունեությունը. այդ դեպքում տվյալ կուսակցության ղեկավարներին արգելվում էր նաև այլ կուսակցություն ղեկավարել: ԱԱԽ-ն անհրաժեշտության դեպքում կարող էր նույնիսկ չեղյալ հայտարարել խորհրդարանական ընտրությունների արդյունքները[358]:

Այսպիսով, կարելի է նշել, որ զինվորականների իրականացրած օրենսդրական փոփոխությունները նպատակաուղղված էին ձևավորվող քաղաքական կուսակցությունների գործունեությունը վերահսկելի և կանխատեսելի դարձնելուն: Այդ փոփոխություններն իրականացնելուց հետո զինվորականները ձեռնամուխ եղան իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելուն: Համաձայն ընտրությունների մասին օրենքի անցումային դրույթներից մեկի՝ խորհրդարանական ընտրությունները նշանակվեցին 1983 թ. նոյեմբերի 6-ին:

1983 թ. ապրիլի 24-ին ԱԱԽ-ն վերացրեց քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը, և Թուրքիայում երեք տարի ընդմիջումից հետո վերսկսվեց քաղաքական կյանքը: Այսպիսով,

358 Milletvekili Seçimi Kanunu, İstanbul, 1983, s. 4-7.

նոր քաղաքական համակարգի շրջանակներում սկիզբ դրվեց կուսակցությունների ձևավորման գործընթացին: Սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո առաջին գրանցված (1983 թ. մայիսի 16-ին) կուսակցությունը դարձավ Ազգայնական ժողովրդավարություն կուսակցությունը (Milliyetçi Demokrasi Partisi, ԱԺԿ), որի հիմնադիրն էր զորացրված գեներալ Թուրգութ Սունալփը[359]: Կուսակցության ձևավորմանը մասնակցելու նպատակով Բ. Ուլուսուի կառավարությունից հրաժարական տվեց նախարար Ալի Բոզերը և միացավ ԱԺԿ-ին: Այդ կուսակցությունը ստեղծվել էր զինվորական վերնախավի նախաձեռնությամբ, որը ցանկանում էր նրա միջոցով պահպանել իր լծակները նոր ձևավորվող քաղաքական համակարգի վրա:

Մայիսի 20-ին զորացրված գեներալ Ալի Ֆեթհի Էսենների գլխավորությամբ ստեղծվեց Մեծ Թուրքիայի կուսակցությունը (Büyük Türkiye Partisi, ՄԹԿ): Ալի Ֆեթհի Էսենները 1977 թ. ցամաքային զորքերի հրամանատարի պաշտոնում այն ժամանակվա վարչապետ Սուլեյման Դեմիրելի նախընտրած թեկնածուն էր: Այս հանգամանքն անհանգստացնում էր զինվորական վերնախավին, քանի որ նրանք մտավախություն ունեին, որ ՄԹԿ-ն իրականում ղեկավարվում էր Ս. Դեմիրելի կողմից[360]: Դա էր պատճառը, որ արդեն հուլիսին ԱԱԽ-ն հատուկ որոշմամբ արգելեց ՄԹԿ գործունեությունը: Հետագայում Դեմիրելի ղեկավարած նախկին Արդարություն կուսակցության կողմնակիցներն ստեղծեցին Ճշմարիտ ուղի կուսակցությունը (Doğru Yol Partisi)՝ Ահմեթ Նուսրեթ Թունայի ղեկավարությամբ:

---

359 Թուրգութ Սունալփը զինվորական համակարգում զբաղեցրել է բարձր պաշտոններ՝ ՆԱՏՕ-ում Թուրքիայի ներկայացուցիչ, Գլխավոր շտաբի 2-րդ պետ, Էգեյան բանակի հրամանատար: 1976 թ. զորացրվել է և նշանակվել Կանադայում Թուրքիայի արտակարգ և լիազոր դեսպան:

360 Birand M. A., Bilâ H., Akar R., 12 Eylül: Türkiye'nin Miladı, s. 256-263.

1983 թ. մայիսի 20-ին ստեղծվեց Մայր հայրենիք կուսակցությունը (Anavatan Partisi, ՄՀԿ)՝ Թուրգութ Օզալի գլխավորությամբ: Թ. Օզալը, որը հեղաշրջումից հետո ձևավորված կառավարությունում զբաղեցնում էր էկոնոմիկայի նախարարի պաշտոնը, դեռ 1982 թ. հուլիսին հրաժարական էր տվել և զբաղվում էր կուսակցություն հիմնելու աշխատանքներով: Օզալի նորաստեղծ կուսակցությունը կարճ ժամանակահատվածում ձեռք բերեց մեծ թվով համախոհներ: Կուսակցության հիմնադրումից շատ չանցած ՄՀԿ-ին անդամակցեց նախկին Արդարություն կուսակցության մոտ 140 անդամ, այդ թվում նաև այնպիսի հեղինակավոր քաղաքական գործիչ, ինչպիսին էր Իսհան Չաղլայանգիլը[361]: Այդ հանգամանքը մեծապես նպաստեց ՄՀԿ հետագա հաջողությանն ընտրությունների ժամանակ, քանի որ նախկին ԱԿ ընտրազանգվածի հիմնական մասն աջակցեց հենց նրան: Պանթյուրքիստական Ազգայնական շարժում կուսակցության կողմնակիցները համախմբվեցին Պահպանողական կուսակցության (Muhafazakar Parti, ՊԿ) շուրջ: Կուսակցության նախագահն էր Մեհմեթ Փամաքը[362]: Իսլամամետ Ազգային փրկություն կուսակցության համակիրները կենտրոնացան Բարօրություն կուսակցության (Refah Partisi, ԲԿ) շուրջ, որը ղեկավարում էր Ալի Թյուրքմենը[363]: Նշված բոլոր կուսակցություններն ունեին աջ ուղղվածություն:

Քաղաքական ներկապնակի ձախ կողմը ներկայացնում էին 1983 թ. մայիսի 25-ին հիմնադրված Ժողովրդական կուսակցությունը (Halkçı Parti, ԺԿ)՝ Նեջդեթ Ջալփի[364] գլխավորությամբ և 1983

361 Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Москва, 1991, стр. 108.

362 Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Сафрастян Р., Возвращение "серых волков": Консервативная партия в политической жизни Турции (1983-1985 гг.); Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, Երևան, 2004, էջ 254-276:

363 Birand M. A., Bilâ H., Akar R., նշվ. աշխ., էջ 260-262.

364 Նեջդեթ Ջալփն Ուլուսուի կառավարությունում զբաղեցնում էր փոխվարչապետի պաշտոնը:

թ. հունիսին ստեղծված Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (Sosyal Demokrasi Partisi, SODEP)՝ Էրդալ Ինյոնյուի նախագահությամբ: Վերջինս Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինյոնյուի որդին էր: Այս երկու կուսակցություններն էլ հավակնում էին ստանալ ՀԺԿ նախկին համախոհների ձայները[365]:

Կուսակցությունների գործունեության վերսկսումից մինչև խորհրդարանական ընտրություններն ընկած ժամանակահատվածում Թուրքիայում ընդհանուր առմամբ գրանցվեց 15 քաղաքական կուսակցություն, որոնցից երկուսն արգելվեց իշխանությունների կողմից, երկուսն էլ ինքնալուծարվեց:

Կուսակցությունների հիմնադրումից հետո սկսվեց հաջորդ փուլը, երբ ԱԱԽ-ն անցավ կուսակցությունների հիմնադիրների ցուցակների քննմանը, ինչի հետևանքով բազմաթիվ արգելքներ դրեց կուսակցությունների ներկայացրած թեկնածուների վրա: Այսպես, օրինակ՝ միայն Սոցիալ-դեմոկրատական կուսակցության 21 հիմնադրի զինվորականներն արգելեցին անդամակցել կուսակցությանը: Նրանց թվում էր նաև կուսակցության նախագահ Էրդալ Ինյոնյուն[366]: Սակայն զինվորական իշխանությունները չբավարարվեցին միայն կուսակցությունների՝ իրենց համար անցանկալի անդամների մուտքը քաղաքականություն արգելելով: Նրանք նոր խոչընդոտներ ստեղծեցին «կասկածելի» քաղաքական կուսակցությունների մասնակցությունը գալիք խորհրդարանական ընտրություններին բացառելու նպատակով: ԱԱԽ-ն նոր օրենք ընդունեց, համաձայն որի՝ կուսակցությունները պետք է մինչև օգոստոսի 24-ը ներկայացնեին ԱԱԽ-ի կողմից արդեն հաստատված հիմնադիրների նվազագույնը 30 անու-

365 McFadden J. M., Civil-Military Relations in the Third Turkish Republic, The Middle East Journal, Vol. 39, No. 1, Winter 1985, p. 74.
366 Նույն տեղում, էջ 76:

նից բաղկացած անվանացանկը: Նրանց առջև պարտավորություն էր դրվում ստեղծել կուսակցության գրասենյակներ երկրի առնվազն 34 նահանգում: Միայն այդ պատնեշը հաղթահարելու դեպքում կուսակցությունները կարող էին մասնակցություն ունենալ նոյեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրություններին[367]: Արդյունքում՝ ընդամենը երեք կուսակցություն կարողացավ հաղթահարել բոլոր այդ արգելքները՝ ԱԺԿ-ն, ՄՀԿ-ն և ԺԿ-ն, որոնք էլ օգոստոսի 24-ին ԱԱԽ որոշմամբ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու հնարավորություն ստացան: Այդ երեք կուսակցություններն էլ հիմնականում ընդունելի էին զինվորական վերնախավի կողմից: Ինչպես արդեն նշեցինք, ԱԺԿ-ն զինվորականների նախագիծն էր և վայելում էր վերջիններիս հովանավորությունը: ԺԿ նշանակությունը զինվորականության համար այն էր, որ նա պիտի կատարեր ընդդիմության դերը՝ որպես ղեկավար ունենալով զինվորականության համար լիովին ընդունելի գործչի: Ինչ վերաբերում է Թուրգութ Օզալի կուսակցությանը, ապա նշենք, որ զինվորականների սկզբնական ծրագրերում այն չկար: Սակայն ի պաշտպանություն ՄՀԿ-ի հանդես եկան երկրի խոշոր կապիտալը և միջազգային ֆինանսական կազմակերպությունները, որոնք ցանկանում էին շարունակել «հունվարի 24-ի» բարեփոխումների ծրագիրը[368]: Նրանց կարծիքը զինվորականները չէին կարող հաշվի չառնել:

Խորհրդարանական ընտրությունները տեղի ունեցան 1983 թ. նոյեմբերի 6-ին: Ընտրությունների արդյունքում ձայների հարաբերակցությունը բաշխվեց հետևյալ կերպ՝ ՄՀԿ-ն ստացավ ձայների 45,15%-ը (212 պատգամավորական մանդատ), ԺԿ-ն՝ 30,45%-ը (117 պատգամավորական մանդատ) և ԱԺԿ-ն՝ 23,27%-ը

367 Сафрастян Р., նշվ. հոդ., էջ 260:
368 Данилов В., նշվ. աշխ., էջ 110.

(71 պատգամավորական մանդատ)[369]: ՄՀԿ-ի նման հաջողությունը պայմանավորված էր նրանով, որ այն ստացավ ԱԿ և մյուս արգելված աջակողմյան կուսակցությունների ընտրազանգվածի հիմնական մասի ձայները: ԺԿ-ն էլ իր հերթին կարողացավ ստանալ նախկին ՀԺԿ ընտրազանգվածի ձայների հիմնական մասը: Այսպիսով, այն կուսակցությունը, որին զինվորականները նպատակադրված էին փոխանցել իշխանությունը, զբաղեցրեց ընդամենը երրորդ տեղը, ինչն անակնկալ էր զինվորական վերնախավի համար և որոշակի դժգոհություն առաջացրեց նրանց շրջանում: Ստեղծվեց մի իրավիճակ, երբ բոլորը սպասում էին բանակի արձագանքին: Սակայն բարձրաստիճան զինվորականները, տեղի տալով երկրի խոշոր կապիտալի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների ճնշումներին, ընդունեցին ընտրությունների արդյունքները, և նախագահ Քենան Էվրենը Օզալին հանձնարարեց կազմել կառավարություն[370]:

Դեկտեմբերի 6-ին ձևավորվեց ԹԱՄԺ նախագահությունը, ինչը, համաձայն սահմանադրության ժամանակավոր 2-րդ հոդվածի՝ նշանակում էր, որ երեք տարի երկրի բարձրագույն իշխանությունը հանդիսացող ԱԱԽ-ն դադարեցնում է իր գործունեությունը[371]: Դեկտեմբերի 13-ին նախագահ Քենան Էվրենը հաստատեց Թուրգութ Օզալի ներկայացրած կառավարության կազմը, որը ԹԱՄԺ-ում ստացավ վստահության քվե[372]: Այսպիսով, ավելի քան երեք տարի տևած զինվորական կառավարումից հետո երկիրը կրկին անցում կատարեց քաղաքացիական կառավարման: Սակայն դա ամենևին չէր նշանակում, որ իշխանությունը փոխանցելով կուսակցություններին՝ զինվորական-

369 McFadden J. M., նշվ. աշխ., էջ 81-82.
370 Այս մասին առավել մանրամասն տե՛ս Kenan Evren, Kenan Evren'in Anıları, Cilt-4, İstanbul, 1991, s. 405-455:
371 Конституция Турецкой республики, приложения, Турецкая Республика, справочник, Москва, 1990, с. 363.
372 Данилов В., նշվ. աշխ., էջ 112.

ները կորցնում էին իրենց ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում:

1983 թ. զինվորական վերնախավի շրջանակներում էլ տեղի ունեցան որոշակի փոփոխություններ: 1983 թ. Քենան Էվրենը դադարեց պաշտոնավարել որպես ԳՇ պետ, և նրան փոխարինեց ցամաքային զորքերի հրամանատար Նուրեթթին Էրսինը: Նույն թվականի դեկտեմբերի 6-ին նա հրաժարական տվեց, և նոր ԳՇ պետ նշանակվեց Նեջեթ Ուրուղը: Վերջինս «սեպտեմբերի 12-ի» հեղաշրջման ժամանակ առաջին բանակի հրամանատարն էր և ակտիվ մասնակցել էր հեղաշրջման նախապատրաստմանը: Ցամաքային զորքերի հրամանատար դարձավ Հայդար Սալթըքը, որը ռազմական հեղաշրջման հիմնական նախաձեռնողներից էր: Այսպիսով, հեղաշրջման հեղինակները նաև բանակի վերնախավում շարունակեցին պահպանել իրենց դիրքերը: ԱԱԽ մյուս անդամները՝ ռազմաօդային զորքերի հրամանատար Թահսին Շահինքայան, ռազմածովային զորքերի հրամանատար Նեժաթ Թյումերը, ժանդարմերիայի հրամանատար Սեդաթ Ջելասուն, ծառայության ժամկետը լրանալուց հետո զորացրվեցին:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թեև զինվորականներն իշխանությունը փոխանցեցին կուսակցություններին, այնուամենայնիվ, նրանք օրենսդրական վերափոխումների միջոցով իրենց համար ստեղծել էին բազմաթիվ լծակներ քաղաքական անցուդարձի վրա ազդելու համար, ինչը հնարավորություն էր տալիս դեռ երկար տարիներ որոշիչ ազդեցություն ունենալ երկրի քաղաքական համակարգում: Սակայն, ըստ էության, քաղաքական կյանքի վրա ազդելու բանակի գլխավոր լծակը շարունակելու է մնալ ռազմական հեղաշրջում անելու հնարավորությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառները, ընթացքը և հետևանքները՝ կարելի է եզրակացնել.

1960-70-ական թթ. Թուրքիայում գործում էր բանակ-հասարակություն փոխհարաբերությունների ներթափանցող մոդելը, այսինքն՝ բանակը քաղաքականացված էր և հանդես էր գալիս երկրի պաշտոնական գաղափարախոսության՝ քեմալիզմի պաշտպանի դիրքերից:

1980 թ. ռազմական հեղաշրջումը, ի տարբերություն հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում երբևէ տեղի ունեցած այլ հեղաշրջումների, ուղղված չէր հիմնականում մեկ կուսակցության կամ երևույթի դեմ և ուներ տարաբնույթ պատճառներ՝ քաղաքական համակարգի ճգնաժամ, իսլամական շարժումների զարգացում, գործադուլային ալիքի ահագնացում, ահաբեկչության աննախադեպ աճ և այլն:

1980 թ. ռազմական հեղաշրջումը կարելի է բնութագրել որպես խնամակալ հեղաշրջում, ինչը նշանակում է, որ զինվորականների իշխանությունը ժամանակավոր բնույթ էր կրում, և հեղաշրջման պատճառները վերացնելուն պես նրանք իշխանությունը կրկին վերադարձնելու էին քաղաքացիական ուժերին:

Ռազմական հեղաշրջումից հետո զինվորական իշխանություններն անցումային շրջանը (1980-1983 թթ.) որպես «հարմար առիթ» օգտագործելով՝ ուժեղ հարված հասցրին իրենց համար անցանկալի ուժերին, որոնք տեղ չունեին հեղաշրջման հեղինակների նախանշած քեմալական Թուրքիայում:

Նախքան իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելը, բարձրաստիճան զինվորականները նոր սահմանադրության ընդունման և օրենսդրական փոփոխությունների միջոցով ավելի վերահսկելի դարձրին քաղաքական դաշտը

և ուժեղացրին բանակի ազդեցության լծակները երկրի քաղաքական կյանքում, ինչը հնարավորություն տվեց իշխանությունը կուսակցություններին փոխանցելուց հետո դեռ երկար տարիներ որոշիչ դեր խաղալ երկրի քաղաքական թատերաբեմում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Թուրքերեն

1. 12 Eylül Öncesi ve Sonrası, MGK Genel Sekreterliği, Ankara, TTK Basımevi, 1981.
2. 1961 Anayasası, Osmanlı ve Türk Anayasaları, İstanbul, 1980.
3. 20. Yüzyıl Ansiklopedisi, Cilt-4, İstanbul, Tercüman Yayınları, 1990.
4. Adalet Partisi: Program ve Tüzük, Ankara, 1969.
5. Anavatan Partisi Programı, Ankara, 1983.
6. Anayasa Mahkemesi, [siyasi parti-kapatma] «E.S.: 1971/3; K.S.: 1971/3; K.G.: 20.07.1971,» Resmi Gazete, 14064 (6 Ocak 1972).
7. Anayasa Mahkemesi, [siyasi parti-kapatma] «E.S.: 1971/1; K.S.: 1971/1; K.G.: 20.05.1971,» Resmi Gazete, 14072 (14 Ocak 1972).
8. Cumhuriyet Halk Partisi Programı, Ankara, 1976.
9. DİSK – 6. Genel Kurulu Çalışma Raporu, İstanbul, 1977.
10. DİSK – 7. Genel Kurulu Çalışma Raporu, İstanbul, 1980.
11. DİSK Kuruluş Bildirisi, Ana Tüzüğü, İstanbul, DİSK Yayınları, 1968.
12. Kanun No. 2533, Siyasi Partilerin Fahsine Dair Kanun. - Kenan Evren, Kenan Evren'in Anıları-2, İstanbul, Milliyet Yayınları, 1991.
13. Milli Güvenlik Konseyi'nin 1 Numaralı bildirisi, Resmi Gazete, 12 Eylül 1980.
14. Milli Güvenlik Konseyi'nin 4 Numaralı bildirisi, http://www.belgenet.com/12eylul/12091980_04.html
15. Milli Güvenlik Konseyi'nin 7 Numaralı bildirisi, Resmi Gazete, 12 Eylül 1980.

16. Milli Güvenlik Konseyince Kabul Edilen Kanunlar, Yayımlanan Bildiri ve Kararlar ile Önemli Mevzuat, Cilt-1, Ankara, 1981.
17. Milletvekili Seçimi Kanunu, İstanbul, 1983.
18. Siyasi Partiler Kanunu, İstanbul, 1983.
19. T. C. Anayasa, İstanbul, 1982.
20. Türk Silahlı Kuvvetleri'nin Görüşü – 27 Aralık 1979 (Uyarı Mektubu) - Ertuğrul Alatlı, Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, İstanbul, Alfa Yayınları, 2004, s. 456-457.
21. Türkiye İstatistik Yıllığı-1973, Ankara, 1973.
22. Türkiye İstatistik Yıllığı-1981, Ankara, 1981

Անգլերեն

23. Middle East Contemporary Survey, Vol. 6, 1981-82, Holmes & Meier Publishers, New Yorke, 1984.

Ռուսերեն

24. Конституция Турецкой республики: приложения, Турецкая Республика, справочник, Москва, Изд. Наука, 1990, стр. 294-368.
25. Программа нового правительства Турции, ТАСС, БПИ № 201, 14,10,1980.
26. Турецкая Республика: справочник, Москва, Изд. Наука, 1975.
27. Турецкая Республика: справочник (для служебного пользования), Баку, Изд. Наука, 1986.
28. Турецкая Республика: справочник, Москва, Изд. Наука, 1990.
29. Турецкая Республика: справочник, Москва, Изд. Наука, 2000.

Թուրքերեն

30. Batur M., Anılar ve Görüşler, İstanbul, Milliyet Yayınları, 1985.
31. Erbakan N., Milli Görüş, İstanbul, Dergah Yayınları, 1975.
32. Esin N., Devrim ve Demokrasi, Bir 27 Mayısçının Anıları, İstanbul, Doğan Kitapçılık, 2005.
33. Evren K., Kenan Evren'in Anıları, Cilt-1, İstanbul, Milliyet Yayınları, 1990.
34. Evren K., Kenan Evren'in Anıları, Cilt-2, İstanbul, Milliyet Yayınları, 1991.
35. Evren K., Kenan Evren'in Anıları, Cilt-3, İstanbul, Milliyet Yayınları, 1991.
36. Evren K., Kenan Evren'in Anıları, Cilt-4, İstanbul, Milliyet Yayınları, 1991.
37. Koçaş S., Atatürk'ten 12 Marta, Anılar, Cilt 1, İstanbul, May Yayınları, 1977.
38. Müftüoğlu R., Copların Askerleri, Ankara, Ocak Yayınları, 2000.
39. Oran B., Kenan Evren'in Yazılmamış Anıları, Ankara, Bilgi Yayınları, 1990.
40. Türkeş A., Temel Görüşler, İstanbul, Dergah Yayınları, 1975.
41. Türkiye Cumhuriyeti Başbakanı Orgeneral Kenan Evren'in Söylev ve Demeçleri (12 Eylül 1980-12 Eylül 1981), Ankara, Başbakanlık Basımevi, 1981.

Ռուսերեն

42. Родионов А., Турция - перекресток судеб: Воспоминания посла, Москва, Междунар. отношения, 2006.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Հայերեն

43. Ավագյան Ա., Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ, թիվ 4 (50), 2006, էջ 67-74:
44. Ավագյան Ա., Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ., Հայկական բանակ, թիվ 3 (49), 2006, էջ 48-56:
45. Բաղդասարյան Ս., Արդիականացման և իսլամի համատեղելիության հարցի շուրջ (Թուրքիայի մոդելը), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» XXIII, Երևան, 2004, էջ 39-50:
46. Բրամ Ս. & Ուլգեր Մ., Գորշ գայլեր. հետազոտություն թուրք ծայրահեղ աջակողմյանների մասին, Երևան, Ջանգակ-97, 2003:
47. Դումանյան Ա., Աջակողմյան ծայրահեղականների ահաբեկչությունը Թուրքիայում 1980 թ. ռազմական հեղաշրջման նախօրեին, Մերձավոր Արևելք, հ. 2., Երևան, 2005, էջ 84-87:
48. Դումանյան Ա., Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ, Մերձավոր Արևելք, հ. 3, Երևան, 2006, էջ 51-55:
49. Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ.., Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, հ. 4, էջ 103-113:
50. Էսպոզիտո Ջ., Իսլամական սպառնալիք. առասպել, թե իրականություն, Երևան, «Նաիրի», 2003:

51. Հովհաննիսյան Ա., ԽՍՀՄ-ի փլուզումը, «թուրք միասնության» գաղափարը և Ղարաբաղյան հարցը (1990-1995-ականների թուրքական հրապարակումների լուսաբանմամբ), Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ XX, Երևան, 2001, էջ 74-81:
52. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր III, Երևան, Զանգակ-97, 2006:
53. Հովհաննիսյան Ն., Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» XVI, Երևան, 1996, էջ 9-19:
54. Մելքոնյան Մ., Ջինվորականության դերը Թուրքիայի քաղաքական կյանքում, Ջինվոր, 1993, էջ 10-20:
55. Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, ՎՄՎ-Պրինտ, 2010:
56. Ռազմական սոցիոլոգիա. ուսումնական նյութերի ժողովածու (գլխ. խմբ. Լ. Հարությունյան), Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2005:
57. Սաֆարյան Ա., Ջիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, ԵՊՀ հրատ., 2012:
58. Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Երևան, Զանգակ-97, 2003:
59. Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, Հայաստան, 1991:
60. Տեր-Մաթևոսյան Վ., Նեջմեթթին Էրբաքանի քաղաքական բեմելը և «Ազգային փրկություն» կուսակցության գործունեությունը Թուրքիայում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXV, Երևան, 2006, էջ 177-191:

61. Аксененко А., Политика Совета нацианальной безопасности по отношению к молодежному движению, Специальный бюллетень № 2 (224), Москва, 1983, стр. 48-63.
62. Аксененко А., Борьба политических партий Турции за влияние на молодежь 1920-1980, Москва, изд. Наука, 1986.
63. Багдасарян С., Роль армии в процессе модернизации Турции в 1960-1990-х годах, Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXI, Երևան, 2002, էջ 28-39.
64. Гасратян М., Курды Турции в новейшее время, Ереван, Айастан, 1990.
65. Гасратян М., Политика военного режима в курдском вопросе, Специальный бюллетень, № 2 (224), Москва, 1983, стр. 64-73.
66. Глазунов О., Государственный переворот: Стратегия и технологии, Москва, ОЛМА-ПРЕСС образование, 2006.
67. Гусейнов А., Профсоюзы в Турции (1960-1970), Москва, Изд. Наука, 1975.
68. Данилов В., Аширмухамедов А., Частичные выборы и особенности политической обстановки в Турции, Восток и Современность, Научно-информационный бюллетень, 7 (11), Москва, 1979, стр. 101-111.
69. Данилов В., Армия и политика в современной Турции, Турция: история, экономика, Москва, Изд. Наука, 1978, стр. 16-25.
70. Данилов В., Государствненно-административная деятельность военного правительства Турции, Специальный бюллетень, № 2 (224), Москва, 1983, стр. 7-26.
71. Данилов В., Основные особенности новой конституции Турецкой Республики (в сравнении с конституцией 1961

г.), Турция – история и современность (сборник статей), Москва, Изд. Наука, 1988, стр. 11-24.

72. Данилов В., Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия), Москва, Изд. Наука, 1985.

73. Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Москва, Наука, 1991.

74. Дрякин А., Забастовочная борьба рабочего класса Турции в 1970-1980 гг., Турция: история, экономика, политика, Москва, Изд. Наука, 1984, стр. 16-34.

75. Емельянов В., К изменению законодательных основ многопартийной системы Турции после военного переворота 1980 г., Турция. история и современность, (сборник статей), Москва, Изд. Наука, 1988, стр. 112-120.

76. Епифанов А., Исламская религия как орудие политической борьбы турецкой буржуазии в республиканский период, Полит. управление КЗакВО, Тбилиси, 1981, июнь, стр. 31.

77. Загорнова Е., Рабочая партия Курдистана в 80-90-х годах XX в., Курдский вопрос на рубеже тысячелетий (круглый стол 19.02.2004 г.), Москва, стр. 99-117.

78. Запорожец В., Колесников А., Турция: Общество и армия, том I, Ленинград, 1983.

79. Зиганшина Г., От радикального исламизма к умеренному: успех Партии справедливости и развития (Турция), Meyeriana (сборник статей), том 2, Москва, Акад. гуманитарных исслед., 2006, стр. 103-128.

80. Иванова И., Исламский фактор в политике турецкого руководства после военного переворота 1980 г., Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, Москва, Изд. Наука, 1987, стр. 127-139.

81. Керим-заде Р., Парламент и парламентаризм в Турции, Турция: история, экономика, Москва, Изд. Наука, 1978, стр. 26-35.
82. Киреев Н., Борьба с террором в Турции, Исламизм и экстремизм на Ближнем Востоке, Москва, 2001, стр. 72-110.
83. Киреев Н., Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XX века, Москва, ИВ РАН, 2001.
84. Киреев Н., Турция между западом и востоком, Ближний Восток и современность, Москва, 1996, стр. 106-169.
85. Кондакчян Р., Турция: Внутренняя политика и ислам, Ереван, изд. АН Арм. ССР, 1983.
86. Корниенко Р., Военный режим и профсоюзное движение в Турции, Специальный бюллетень № 2 (224), Москва, 1983, стр. 37-47.
87. Корниенко Р., Социально-политические предпосылки развития левацких течений: Левый экстремизм в Турции, Специальный бюллетень, Но. 6 (181), АН СССР Ин-т. Востоковедения, Москва, 1976, стр. 58-71.
88. Корхмазян Р., Турецко-германские отношения в годы второй мировой войны, Ереван, Издательство АН Армянской ССР, 1977.
89. Кремнюк В., Борьба Вашингтона против революции в Иране, Москва, Междунар. отношения, 1984.
90. Куртынова Л., Исламские и националистические элементы в идеологии руководства после военного переворота 1980 г., Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, Москва, Изд. Наука, 1986, стр. 115-126.
91. Моисеев П., Турция: Программа экономической стабилизации: 1980 г., Турция – история и современность (сборник статей), Москва, Изд. Наука, 1988, стр. 211-221.

92. Оганесян А., К оценке историографии проблем идеологии турецкого национализма, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXIII, Երևան, 2004, էջ 148-157:
93. Поцхверия Б., Внешняя политика Турции в 60-х – начале 80-х годов XX в., Москва, Изд. Наука, 1986.
94. Поцхверия Б., Турция, США и НАТО в конце 70-х – начале 80-х годов, Турция: история, экономика, политика, Москва, Изд. Наука, 1984, стр. 77-106.
95. Старченков Г., Энергетика Турции в годы экономического кризиса, Турция: история, экономика, политика. Москва, Изд. Наука, 1984, стр. 176-189.
96. Сафрастян Р., Возвращение "серых волков": Консервативная партия в политической жизни Турции (1983-1985 гг.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, Երևան, 2004, էջ 254-276:
97. Шамсутдинов А., Политика и экономика современной Турции, Москва, Изд. Наука, 1977.
98. Шахназаров О., Корниенко Р., Турецкие маоистские группировки после отмены черезвычайного положения (1973-1976 гг.), Специальный бюллетень, Но. 6 (181), АН СССР Ин-т. Востоковедения, Москва, 1976, стр. 123-134.
99. Фадеева И., Ислам в общественно-политической жизни современной Турции, Турция: история, экономика, политика, Москва, 1984, стр. 63-76.
100. Фадеева И., Ислам и культурная политика правящих кругов Турции 60-80-х годов XX в., Ислам и социальные структуры стран Ближнего и Среднего Востока, Москва, Наука, 1990, стр. 192-206.
101. Ягудин Б., Истоки формирования политической системы "Третьей Республики" в Турции (80-90-е гг. XX века),

Турция в XX веке (сборник статей), Москва, Акад. гуманитар. исслед., 2004, стр. 176-185.

102. Ягудин Б., Исламский фактор и его влияние на конституционные процессы в Турции, Turcica et Ottomanica (сб. статей), Москва, Вост. лит., 2006, стр. 388-396.

Անգլերեն

103. Akgun B., Twins our Enemies: Comparing Nationalist and Islamic Tradition in Turkish Politics, Middle East Review of International Affairs Journal (MERIA), Vol. 6, No. 1, Mart 2002, pp. 17-35.

104. Bale J. M., The Ultranationalist Right in Turkey and the Attempted Assassination of Pope John Paul II, The Turkish Studies Association Bulletin (Vol. 15, April 1991), no. 1, Indiana, p. 63.

105. Celik O., Turkey and the Fate of Political Islam, The United States and Turkey: Allies in Need, 1988, p. 65.

106. Demirel T., Lessons of Military Regimes and Democracy: The Turkish case in a Comparative Perspective, Armed Forces & Society, Vol. 31, No. 2, Winter 2005, pp. 245-271.

107. Demirel T., The Turkish Military's Decision to Intervene: 12 September 1980, Armed Forces & Society, Vol. 29, No. 2, 2003, pp. 253-280.

108. Feaver P. D., The Civil-Military Problematique: Huntington, Janowitz, and the Qustion of the Civilian Control, Armed Forces & Society, Vol. 23, No. 2, Winter 1996, pp. 149-178.

109. Gunter M. M., The Kurdish Problem in Turkey, Middle East Journal, Vol. 42, No. 3, Summer 1988, pp. 389-406.

110. Hague R., Martin Harrop & Shaun Breslin, Comparative Government and Politics, An Introduction, London, Macmillan Press LTD, 1998.

111. Hale W., Turkish Politics and the Military, London, Routledge, 1994.
112. Hanter S. T., Malik H., Modernization, Democracy, and Islam, Washington, Center for Strategic and International Studies, 2005.
113. Harris G. S., The Role of the Military in Turkish Politics, The Middle East Journal, Vol. 19, No. 1, Winter 1965, pp. 54-66.
114. Harris G. S., The Causes of the 1960 Revolution in Turkey, The Middle East Journal, Vol. 24, No. 4, Autumn 1970, pp. 438-454.
115. Heper M., Aylin G., The Military and the Consolidation of Democracy: The Recent Turkish Experience, Armed Forces & Society, Vol. 26, No. 4, Summer 2000, pp. 635-657.
116. Heper M., Islam, Polity and Society in Turkey: A Middle Eastern Perspective, The Middle East Journal, 1981, Vol. 35, N. 3, pp. 345-363.
117. Hyland M. P., Crisis at the Polls: Turkey's 1969 Elections, The Middle East Journal, 1970 Vol. 24 No. 1, pp. 1-16.
118. Janowitz M., Political Conflict, Essays in Political Sociology, Chicago, Quadrangle Books, 1970.
119. Janowitz M., The Military in the Political Development of New Nations, Chicago, The University of Chicago, 1965.
120. Karabelias G., The Evolution of Civil-Military Relation of Postwar Turkey, 1980-95, Middle Eastern Studies, Oct. 1999, 35, 4, pp. 130-151.
121. Karafakioğlu Ö. K., 12th September 1980 Military Intervention within Framework of Civilian-Military Relation, İstanbul, 2004.
122. Karmon E., Radical Islamic Political Groups in Turkey, Middle East Review of International Affairs Journal (MERIA), Vol. 1, No. 4, December 1997, pp. 14-33.
123. Karpat K., The Turkish Left, Journal of Contemporary History, Vol. 1, No. 2, 1966, pp. 169-186.

124. Kolars J., The Hydro-Imperative of Turkey's Search for Energy, The Middle East Journal, Vol. 40, No. 1, Winter 1986, pp. 53-67.
125. Landau J. M., The Nationalist Action Party in Turkey, Journal of Contemporary History, Vol. 17, No. 4. (Oct., 1982), pp. 587-606.
126. Mango A., The Turks Today, London, John Murray (Publishers), 2004.
127. McFadden J. M., Civil-Military Relations in the Third Turkish Republic, The Middle East Journal, Vol. 39, No. 1, Winter 1985, pp. 69-85.
128. Nordlinger E., Soldiers in Politics: Military Coups and Governments, New Jersey, Prentice Hall, 1977.
129. Paul J., The Coup, MERIP Reports, No. 93, Turkey: The Generals Take Over, Jan. 1981, pp. 3-4.
130. Poulton H., Top Hat, Grey Wolf and Crescent, Turkish nationalism and the Turkish Republic, New York, New York University Press, 1997.
131. Rivlin P., Two Middle Eastern Inflations: Israel and Turkey 1980-2001, British Journal for Middle Eastern Studies (2003), 30 (2), pp. 211-235.
132. Ter-Matevosyan V., The Kemalist discourse in Turkey between 1960 and 1980: Challenging the Republican ideology?, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, h. 4, էջ 85-102.
133. Toprak B., A Secular Democracy in the Muslim World: The Turkish Model, Modernization, Democracy, Washington, Center for Strategic and International Studies, 2005, pp. 277-292.
134. Toprak B., "Religion as State Ideology in a Secular Setting: The Turkish-Islamic Synthesis" in Malcolm Wagstaff (ed.), Aspects of Religion in Secular Turkey, Durham, University of Durham, Center for Middle Eastern and Islamic Studies, Occasional Paper Series No. 40, 1990, pp. 10-15.

135. Weiker W. F., The Turkish Revolution 1960-1961, Aspects of Military Politics, Washington, The Brookings Institution, 1963.
136. Yavuz H., Political Islam and the Welfare (Refah) Party in Turkey, Comparative Politics, Vol. 30, No. 1., Oct. 1977, pp. 63-82.
137. Yavuz H., Turkey's Fault Lines and the Crisis of Kemalism, Current History, January, 2000, pp. 33-38. ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Թուրքերեն

138. Akça İ., Kolektif Bir Sermayedar Olarak Türk Silahlı Kuvvetleri - Bir Parti. Türkiye'de Ordu, İstanbul, Bilirkim Yayınları, 2004, s. 225-270.
139. Akyaz D., Askeri Müdahalelerin Orduya Etkisi, Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine, İstanbul, İletişim Yayınları, 2002.
140. Alatlı E., Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, İstanbul, Alfa Yayınları, 2004.
141. Altan M., Darbelerin Ekonomisi, İstanbul, Afa Yayınları, 1990.
142. Arcayürek C., Demokrasinin Sonbaharı 1977-1978, Ankara, Bilgi Yayınları, 1985.
143. Arcayürek C., Bir İktidar Bir İhtilal 1955-1960, Açıklıyor-3, Ankara, Bilgi Yayınları, 1984.
144. Aydemir Ş., İkinci Adam, Cilt-3, İstanbul, Remzi Kitabevi, 1975.
145. Bayramoğlu A., Asker ve Siyaset - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu, İstanbul, Bilirkim Yayınları, 2004, s. 59-118.
146. Birand M. A., Bilă H., Akar R., 12 Eylül: Türkiye'nin Miladı, İstanbul, Doğan Kitapçılık, 1999.
147. Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, İstanbul, Karacan Yayınları, 1984.

148. Birand M. A., Emret Komutanım, İstanbul, Milliyet Yayınları, 1986.
149. Bora T., Ordu ve Milliyetçilik, Bir Zümre - Bir Parti. Türkiye'de Ordu, İstanbul, Bilirkim Yayınları, 2004, s. 163-178.
150. Cem İ., Siyaset Yazıları, 1975-80 Türkiyesi, İstanbul, Cem Yayınları, 1980.
151. Cem İ., Türkiye'de Geri Kalmışlığın Tarihi, İstanbul, Cem Yayınları, 1971.
152. Cemal H., Tank Sesiyle Uyanmak, 12 Eylül Günlüğü, İstanbul, Bilgi Yayınları; 1986.
153. Cemal H., Kimse Kızmasın Kendimi Yazdım, İstanbul, Doğan Kitapçılık, 2001.
154. Cemal H., Kürtler, İstanbul, Doğan Kitapçılık, 2003.
155. Çölaşan E., 24 Ocak Bir Dömenin Perde Arkası, İstanbul, Milliyet Yayınları, 1983.
156. Demirel T., Türk Silahlı Kuvvetleri'nin Toplumsal Meşruiyeti Üzerine - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu, İstanbul, Bilirkim Yayınları, 2004, ss. 345-381.
157. Emre Can Dağlıoğlu: "12 Eylül'le birlikte "Ermeni soykırımı bir güvenlik meselesi'ne dönüştü", (Emre Can Dağlıoğlu'yla söyleyiş), Agos, 14, 10, 2016.
158. Habora B., 12 Eylül Lideri Kenan Evren Ne Dedi, Ne Oldu, İstanbul, 1989.
159. İpekçi A., Çoşar Ö. S., İhtilalın İçyüzü, İstanbul, Milliyet Yayınları, 1965.
160. İslamoğlu M., Erbakan Ecevit'e Karşı, Tüba Yayınları, 1974.
161. İknur M., Bir Askeri Darbe'nin 20. Yılı, İstanbul, Günaydın Yayınları, 1991.
162. Kepenek Y., Türkiye Ekonomisi, Ankara, Verso Yayınları, 1990.
163. Mavioğlu E., Asılmayıp Beslenenler – Bir 12 Eylül Hesaplaşması, İstanbul, Babil Yayınları, 2004.

164. Nadi N., 27 Mayıs'tan 12 Mart'a, İstanbul, Sinan Yayınları, 1972.
165. Özbudun E., Türk Anayasa Hukuku, Ankara, Yetkin Yayınları, 2005.
166. Özdemir H., Siyasal Tarihi (1960-1980), Türkiye Tarihi, Cilt 4, Çağdaş Türkiye 1908-1980, İstanbul, Cem Yayınları, 2005.
167. Öztuna Y., Gökdemir A., Türkiye'de Askeri Müdahaleler, İstanbul, 1987.
168. Parla T., Türkiyede Merkantilist Militarizm 1960-1998, Bir Parti. Türkiye'de Ordu. İstanbul, Bilirkim Yayınları, 2004, ss. 201-224
169. Selçuk İ., 12 Marttan Sonra, Ankara, Devrim Dergisi, № 3, 1971, s. 287.
170. Seyhan D., Gölgedeki Adam, İstanbul, Nurettin Uycan Matbaacı, 1966.
171. Sömnez M., Türkiye Ekonomisinde Bunalım. 24 Ocak Kararları ve Sonrası, İstanbul, Belge Yayınları, 1985.
172. Şimşek E., Türkiye'de İstihbaratçılık ve MİT, İstanbul, Kum Saati Yayınları, 2004.
173. Tanlak Ö., İtiraf. Eski Ülkücü MHP'yi Anlatıyor, İstanbul, Kaynak Yayınları, 1997.
174. Uzgel İ., Ordu Dış Politikanın Neresinde? - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu. İstanbul, Bilirkim Yayınları, 2004, ss. 311-334.
175. Tuşalp E., Eylül İmparatorluğu: Doğuşu ve Yükselişi, İstanbul, Bilgi Yayınları, 1988.
176. Yalçın S. & Yurdakul D., Bay-Pipo, İstanbul, Doğan Kitapçılık, 2000.
177. Yalçın S. & Yurdakul D., REİS, Gladio'nun Türk Tetikcisi, Ankara, Öteki Yayınları, 1998.
178. Yalçın S., Hangi Erbakan, Ankara, Öteki Yayınevi, 1995.

ԱՐԹՈՒՐ ԴՈՒՄԱՆՅԱՆ
1980 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԸՆԹԱՑՔԸ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հրատարակչության տնօրեն՝
ՎԱՀՐԱՄ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Սրբագրիչ՝
ԽՈՆԱՐԻԿ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ

Ձևավորումը՝
ԴԻԱՆԱ ԱՎԱԳՅԱՆԻ

Չափսը՝ 60x84, 1/16: Ծավալը՝ 9,75 տպ. մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 200:

Տպագրվել է «ՎԱՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ. 28 54 28
E-mail: vmv_print@yahoo. com
www. vmv-print. am

[1500 դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0440430

A 102256

ISBN 978-9939-60-335-3